Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՐԱԴԱՐԱՆԻ „ԱՐՈՐԻ“

ԵՐԿՈՒ ԱՂԲԵՐԱՑԵՂ

ԶՐՈՅՑ

ՊԱՄԱԼԵԱՆՑ.

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

291.99.
Ռ-17

ԳՈՎԱՌ
տպարան „Արօր“.
1903

13 APR 2011

Հրատարակութիւն „Արօր“-ի

891.99
Ֆ-17
ազգ.
1001
4536

ԵՐԿՈՒ ԱՂԲԵՐԱՑԵՂ

ԶՐՈՅՑ

ՓԱՄԱԼԵԱՆՑ Ս.

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Հանրային գրադարան
Публичная Библиотека
7/XI 1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“
1903

28.08.2012
29.08.2013
60310

Дозволено цензурою. Тифлисъ, 10-го Мая 1903 г.

Բաղուի Հայոց Հոգևորական Դպրոց
Եկեղ.-Վիճակ. (Օրինաբանց)

Ա.

Կար մի թագաւոր, անունը Պայ-պայ. շատ հարուստ, շատ ունեոր, ու եօթը աղջկերանց գլխին՝ աչքի սև ու սիպտակ մի տղայ ունէր։ Այն գլխից տղայ զաւակ շատ էր եղել, ոչ մինը հասուէհաս չէր դառել. մինը բկացաւով էր մեռել, մէկէլը ծակոցով, երրորդը մի անմեղ բանով, չորրորդն ու հինգերորդն էլ ով գիտէ, ինչ կորած, մոլորած ցաւերով։ Այս տղէն էլ որ կենդան էր մնացել՝ պատճառն այն էր, որ Պայ-պայ թագաւորը եօթը խաչէ գլուխ կոտրելով, մատաղներ մորթելով, խեղճի ու չունեորի ողորմութիւն տալով՝ երկնքի ու գետնքի սիրտը գութ էր գցել ու բերել քսան տարուն հասցրել։

Մի անգամ երբ թագաւորն ու թագուհին պարտիզումն էին՝ մի սիրուն ծիտ թռթռալէ նստեց դիմացի ճղանն ու հարցրեց.

— Ա՜յ փարթամ հողեղէններ, ձեր ինչն է պակաս, որ ծաված կոներով արտասուք էք չափում. լուսինն մէջ անուտիլ, անխմիլ հեծում էք։

— Ա՜յ ծլվլան ծիտ, ինչներիս է պէտք փարթամ ապրուստը, որ մի ցաւի ձեռից հովութիւն ու ճար չունինք։

— Ինչ է ձեր ցաւը, ձեր խնդրուածքը, որ ճար չէք գտնում։

— Մենք մի փափագ ունինք, մի փափագ, Աստուծոյ կամարին մատաղ, այսչափ գանձն ու հարստութիւնը ցեց ու կարիճ են դառել ու մեր ջանին թափուած ուտում։

— Ձեր փափագը ինչ է որ.....

— Մի տղայ զաւակ, մի տղայ զաւակ, միաբերան ձայն տուին երկուսն էլ։

Ծիտիկը քիչ լուռ մնալուց ետը ծլվլալով ասեց.

— Ձեր փափագը կը կատարուի, ձեր ցանկացած տղին կունենաք, բայց նա ձեզ շատ ցաւ ու վիշտ կը պատճառի, գլուխը շատ փորձանքների կը տայ։

Այսպէս ծլվլաց ծիտը ու թռչելով թռաւ։

— Նրա պատճառով ամեն ցաւ ու վիշտ տանել յօժար ենք, միայն թէ լինի, ծիտիկ

հրեշտակ, լիասիրտ ասին թագաւորն ու թագուհին։

Տարուայ գլխին թագուհին տղայ ունեցաւ։ Աշխարհի բոլոր ծայրերից եկան շնորհաւորելու. «աչքդ լոյս, թագաւոր, խնդրուածքդ առ Աստուած հասաւ, փափագիդ հասար»։

— Աչքի լուսի կենաք, պատասխանում էր թագաւորը ու ամենին պարգևատրում։ Երբ մկրտելու օրը հասաւ, տէրտէրը մանուկին կընքելիս հարցրեց.

— Անունն ինչ դնենք։—Մինն ասեց. Խաչատուր դնենք, մէկէլը թէ՝ Աստուածատուր. երրորդն ու չորրորդը տեսակ-տեսակ անուններ։ Բայց ինչ թագաւորն էր՝ խնդրեց—Տէր հայր, որդուս անունը Փափագ դիր. Հա այսպէսով տղի անունը կդաւ Փափագ։ Խեղճ հօր սիրտն այսպէս աղկաղկում էր որդու վրայ, որ չէր իմանում, թէ անչափ սիրելուց վարդի մէջ պահի, թէ մանուշակի։ Ամիսներով չէր թողնում մնչակ դուրս գայ, չլինի թէ արև տեսնի, կամ անձրևի ցաշտուն դիպչի։ Տղէն մեծացաւ բեղատեղը frելեց միրուքն էլ կամաց-կամաց ծլում էր, իւր ժամանակի բոլոր ուսումը գիտունների միջոցով հասկացել էր, բայց չգիտեր թէ աշխարհն ինչ տեսակ բան է։

Մի օր ոնց եղաւ, Փարագը մենակ ծա-

ծուկ պարտէզն էր իջել։ Կարծես Աստրծուց մի օր գողացած՝ վանդակից փախած թռչնի պէս, դուրս թռաւ մի կերպ, որ ազատօրէն ման ու ման անի արօտներում ու հովիտներում։ Եվ ապրիւր, առու, ճեռ ու քարափ չմոռեց, բոլորը աչք ածեց ու մինաժոռին տուն էր դառնում։ Այն ինչ ծառաներն ու պալատականները նրա հետից ամբողջ օրը ման գալուց յօգնած թագաւորի մօտ էին դարձել, որ գլխին բամբաշեղով իւր սև օրը լալիս էր։ Թագուհին հօ ձեռից գնացել էր. ջրատար մայրը մղկիտից անշունչ ընկած նըւում էր։

Բ.

Երբ յանկարծ Փափագը դուռն ի վեր կացաւ՝ թագուհին ուրախագին դէմն ելաւ, հայրն էլ արտասուքը ծածուկ սրբեց, մօտեցաւ որդուն, գրկախառնեց. իսկ Փափագը տխուր ոչ ջունից նաը մի կողմ նստեց ու հօրը հարցրեց ծանր ու բարակ։

— Թագաւորն ապրած, ոմ պտի քեզ յաջորդել։

— Ի՞նչ ասել կուզի, որ դու, իմ սիրելի որդի։

— Զարմանալի բան ես ասում, հայր, ես ինչպէս կարող եմ կառավարել ընդարձակ երկիրդ իւր ժողովրդով, երբ ես իմ գլուխը կառավարելու սովոր չեմ, երբ ինձ ընքոյչ մանուշակի պէս շուաքից չես հանել։ Քու ձեռի տակ սնուել եմ ինչպէս կակուղ մոմ, ինչպէս անփորձ տեղոյս պտեմ կռուիլ անթիւ փորձանքների դէմ ժողովրդին անվտանգ պահելու համար։

Հայրը գուշակելով թէ որդին որ լարին է խփում, և երկիւղ կրելով բորբոքելուց, նեղսրտութիւն պատճառելուց՝ մեղմով պատասխանեց.

— Իրաւ է ասածդ, որդիս, մեղն իմս է, բայց ճարս ինչ էր, որ այդպէս չանէի։ Աշխարհում հաղար ցաւ ու կրակներ կան. սատանէն հակառակ է, վախենում էի մի բան պատահի։

— Ոչ, հայր իմ, լաւ չես արել։ Մինչև օրս ինչու չգիտեմ, որ է իմ աշխարհը, որոնք են հպատակներս, ինչ ցաւեր ունին նրանք։ Բաւական չէ, որքան կալանաւորի պէս փակուած մնացի։ Վճռել եմ ման գալ մեր աշխարհի ամեն կողմերը, մտնել ամենավերջին

չինականի խրճիթը ու նրա գրութիւնը տեսնել։ Ուստի խնդրում եմ տաս ինձ քո ձիերից ամենալաւը, քո թրերից ամենակտրուկը։

Հայրը վեր կալաւ թէ՝

— Ա՜յ որդի, տեսնում ես, որ ծերացել եմ, ոտիս եղած թելն էլ մի կտրիլ, ճամբորդելը քեզ պէտք չի։ Մօրդ մտադրութիւնը աւելի լաւ է, պսակուիր ու գլուխդ հանգիստ նստիր, ոչ դէս գնա, ոչ դէն։

Տղէն հակառակի ձիուն նստել էր ու ասում՝

— Չէ որ չէ, պէտք է իմ խօսքը լինի։ Դեռ պսակուելուս ժամանակ չի, պտեմ փորձուիլ, պտեմ աշխարհ տեսնիլ։

Հայրն էլ տեսաւ անկոտրում է, չի լինում ճարահատեալ ասեց.

— Այ որդի, դէ որ բոլորը քու ասածն ես ուզում՝ թող մինն էլ իմ ասածը լինի։

— Հրամայի, հայրիկ։

— Աշխարհիս որ կողմն ուզում ես՝ գնա, բայց աղաչում եմ Մեծ Սրուի այն կողմ մի անցնիլ։ Գը՜մբ-գը՜մբ քարափներ կան այնտեղ. ասում են, գնացողներին դէպ իրանց են քաշում։ Պա՛յ-պա՛յ-պա՛յ, ես վախենում եմ. այնտեղ հասնող երիտասարդը կամ մնում է, կամ եթէ վերադառնում է՝ ոտի վրայ բարակ է մանում ու մահիճ ընկնում։

— Հայր իմ, եթէ գը՜մբ-գը՜մբ քարափները մեր աշխարհից դուրս են, չեմ գնալ մինչև դրդող պատճառ չլինի։ Իսկ եթէ եղաւ, հազար թոկով կապես՝ պտեմ գնալ։ Շատ քոյչ ու վախկոտ մնալն էլ մի բանի նման չի, հարկաւոր է մի քիչ էլ տղամարդ լինել։

Պա՛յ-պայ թագաւորը տեսաւ որ թթուելով խախալի գլուխը բան չի գցում, որդին էլ զուր տեղը նեղսրտում է՝ բերել տուեց ամենալաւ ձին ու ամենակտրուկ թուրը. ուղեկիցներ որոշեց, նաղիրին էլ առաջնորդ նշանակեց, որ իրրև փորձառու անձ տանի իւր տէրութեան երեսի քաղաքները, տեղերը ման ածի ու ողջ ետ բերի։

Նաղիրի սրտի ուզելիքն էլ հէնց այդ էր, որ կարողանայ օր օրի վրայ իւր նպատակին մօտենալ, Փափագին իրան փեսայ չինել։

Գ.

Ուղի ելան. նաղիրը բան գցեց իւր աղուէսի լեզուն ու սկսեց գովել Փափագի աչքաբացութիւնը. «բա՛, տղէն այդպէս պտի լինիլ, որ ժամանակ ժամանակ ցոյց տայ, թէ իրա

նում էլ տղամարդի նշան կայ, ճանաչի իւր երկիրը, իւր աշխարհը, ժողովուրդն էլ նրան սիրի ու հարկաւոր ժամանակ նրա մի խօսքով ոտի կանգնի։ Մինչև օրս շատ անգամ եմ թագաւորին ասել. թէ թագաւորաղը մեղք է, նրան հարկաւոր է աշխարհի հետ ծանօթանալ, թող մի քիչ դուրս գայ, անձրև-արև տեսնի.—թագաւորը միշտ վշտացել է այդպէս առաջարկ լսելիս։ Ո՞վ գիտէ մրքան փակ կեանքում պահէր, եթէ դու չկարէիր քու ոտները կապկպող թելը։ Լաւ արիր, արիասիրտ Փափագ, ամենքին էլ դուրալի է քու արածը։ Բայց եթէ իրաւունք կտաս, ես մի օգտակար խորհուրդ կասեմ։

— Ի՞նչ ես ուզում, ասա լսեմ, խօսեց Փափագը միամտաբար։

— Բաւական ժամանակ է մենք ճանապարհորդում ենք, ասեց նազիրը. մի բան ինձ դուր չի գալիս, որ դու քեզ շատ ցածր ես պահում. դա թագաւորաղին վայել դիրք չէ։ Ուր չէն ես տեսնում՝ առանց զզուելու գետնափոր խոնաւ տներից՝ մտնում ես այս պուճախը, այն օջախը, որ ինչ է՝ տեսնես, թէ անգէտ մարդիկ ինչպէս են ապրում։ Երկար ժամանակ հետները նստում գլխացաւանրութիւն ես անում, որ հասկացնես նրանց պակասութիւնները։ Աշխարհ ականջ դառած նրանք քեզ լսում են, բայց չես իմանում, որ աւանակները քու քամակից կարող են ծիծաղել։ Իմ գլուխն էլ չի վերցնում, դրուստն ասեմ, որ քու տեղն այդքան թեթեւացնում ես։ Պտես իմանալ քու հաւասարի հետ նստել, քու հաւասարի հետ խօսել։ Ուզիզ է, ուսում շատ ես առել, բայց ներիր որ աշխարհի հանգերը չես իմանում։

Այսպէս խրատներ անդադար ասում էր նազիրը գլուխը տամբացնելով, բայց չէր իմանում, որ արդէն զզուեցրել և կշտացրել էր իւր տափակ խրատներով Փափագին, որն այս անգամ առանց բարկութեան նշան երևացնելու ասեց.

— Ծերունի նազիր, շատ շնորհակալ եմ մինչև օրս տուած խորհրդներից համար։ Այժմ հարկաւոր է որ ես իմ սեպհական խելքով գործեմ ու շարժուեմ, եթէ կարելի է՝ մի առ ժամանակ ազատ թող ինձ։ Ուզում ես իւրաքանչիւր քայլիս հետեւիր, բայց իմ արած կարգադրութեանց մէջ մի խառնուիլ, մինչև հօրս մօտ հասնելը։

Նազիրը ակամայ ընդունեց այս անսպասելի առաջարկը, բայց էլի չհամբերեց որ ծածուկ տնազի առարկայ չլինի Փափագի արածները։ Նազիրի այս բոլոր արարմունքները Փա-

փաղի ականջն էր հարում ուղեկիցներից մի կարուկ երիտասարդ, որը թագաւորաղնի համար ճամբում զրոյցընկերի դեր էր կատարում։

Երբ բաւական գնալուց ետը աչքներով մի քաղաք ընկաւ՝ Փափաղը հարցրեց.

— Այս ու այն տեղ անհամ, անհետաքրքիր պատմութիւններ լսելուց գլուխս ցաւեց, մեթէ մեր աշխարհի հասարակ դասակարգի մէջ մինը մի համով բան չի արել, որ ասես լսեմ։

— Ինչու չեն արել. թագաւորաղ տէր, պատասխանեց ուղեկիցը, բայց ով է եղել մինչև օրս հասարակ դասակարգի տէրը, որ նա մարդատեղ գնուի, նրա ցաւը աշկարայ լինի։

Փափաղը աչքերը հիացմամբ չռելով խոսակցի վրայ ասեց։

— Եթէ կայ՝ անվախ ասա, պատմիր. այդպիսիների տէրը ես եմ լինելու։

Ուղեկիցը սիրտ առնելով խոսեց.

— Ատուած բարի տայ քեզ, թագաւորաղ տէր, մեզ պէս աղքատները քու արիը շատ կ՚օրհնեն։

— Լաւ, ասեց Փափաղը ձիու ասպանդակը հրելով. այնպէս ոչինչ չկայ այս քաղաքում. բան չես լսել որ և է քաջի մասին. պատմիր տեսնեմ։

— Ո՞նց չէ. թագաւորաղ տէր. ես չեմ

տեսել, բայց լսել եմ մի քաջի մասին, որ հէնց այս քաղաքումն է։ Նա առակ է դարձած իւր ուժով և իւր խելքով. հայր ու մայր չունի. արհեստաւոր է։ Հայրը խարաղ է եղած, դրա համար ընկերները նրան կոչում են Խարազի տղայ։ Եէնք ու շնորհը բերան բերելու բան չի։ Դրա գովը քաղցրութեան, քաջութեան կողմից տարածուելով հասել է մինչև իշխանի մի հատիկ աղջկայ ականջը, որն իւր սրտում Խարազի տղին իրան փեսայ է ընտրել։ Երբ քաղաքի իշխանի մօտ շատ փեսացուներ են գալիս ու ոչ մինին աղջիկը ձեռ չի տալիս՝ հօրից անչափ նախատւում, յանդիմանւում է։ Ստիպում են դրա պատճառն ասել՝ աղջիկը մօր միջոցով իւր սրտի տէրը յայտնում է։ Հայրը կատաղում է, փրփրում, ու ամենքին չի ուզում իւր գտեր ընտրած փեսայի մասին լսել. ինչու. որովհետև նա աղքատ է և հասարակ խարազի տղայ։

— Հատիկ աղջիկս պատկեմ, ասում է զայրացած իշխանը. այն էլ խարազի տղի տամ։ Չէ, կտոր կտոր կանեմ, չեմ թողի այդ բանը գլուխս գայ։

Խարազի տղէն միամիտ, իւր գործին էր. իշխանը կանչել է տալիս իր մօտ։

— Դու անպիտան, ասում է, մնց ես հա-

մարձակուել անմեղ աղջկանս խելքից հանել և քեզ վրայ տաքացրել։

Խարազի տղէն որ մինչև այդ օրը իշխանի աղջկայ երեսը չէր տեսել՝ պատասխանում է։

— Ողորմած իշխան, իմ վիճակս քու վիճակից այնքան հեռու է, որքան երկինքը երկրից. ես ապրատ տեղովս ինչպէս կարող եմ քու աղջկան գլխից հանել։ Դա թշնամու խօսք կլինի, տէր իմ, որ ուզում է ինձ մնասել։ Կանչիր քու դատերը, յոյս ունիմ որ այդ կասկածը նա փարատէ։ Եթէ կհաստատուի, որ ես որև է կերպ աշխատել եմ այդպէս համարձակ բան անել՝ ապա յօժար կլինիմ քաշելու ինչ պատիժ ուզենաս։

Կանչում են աղջկանը, որ Խարազի տղին տեսնելուն պէս՝ մինչև ականջակոթերը կարմրում է։ Իշխանը խստութեամբ դառնում է աղջկանը։

— Արդեօք այս լիրբը չէ՞, որ քեզ ճամբից հանել է։ Սա ճշմարիտը։

Խարազի տղէն այս խօսքի վրայ յուզուած մէկ ուզում է վեր կենալ իշխանին, զորս դու պատուիրեցեր՝ տեսնել, մէկ էլ սրտատրոփ սպասում է աղջկայ պատասխանին։

Աղջիկը առաջ հօր անողոք նզովքէմդ է նայում, ետոյ խարազի աչքերին ու հոգի առնելով դառնում հօրն ասում։

— Զուր ես այս մարդուն մեղադրում, հայր ինչ, արել եմ, ես եմ արել։ Առանց ծածկելու խոստովանում եմ, որ այս խարազի տղին սիրում եմ։ Ով ուզում է ինձ մեղադրի։ Հաւանել եմ դրա ունեցած արժանաւորութիւններին, առանց աչքի առաջ ունենալու դրա ապրատ վիճակը։ Ինչ էլ իմ որոշման դէմ ասես ես ընդունողը չեմ։ Վճիռս անդարձ է։ Իսկ եթէ դա ձեռ կրաշի ինձնից—այդ էլ ինքը լինի, իրան Աստուածը։

Այս ասմունքի վրայ իշխանը կատաղած գոռգոռում է։

— Ա՜խ դու անզգամ և լիրբ զաւակ, ինչ՝ պէս թէ համարձակուես ինձ հակառակ գնալ. թողես իշխանազուն պատուական տղէքը, խեղճ ամնաղ լինես մի խարազի տղի վրայ։ Սպասիր, քեզ ցոյց կտամ ընդդիմութիւնը։ Այնքան բանտարկած պահեմ, դու ինքդ իմանաս քո անզգամութիւնը։

Խարազի տղէն որ առիւծից ուժեղ էր՝ թոյլ է տալիս-աղջկայ սիրու, որ իրան էլ բանդարկեն։ Կարծում էր, որ վաղ թէ ուշ՝ իշխանի սիրտը գութ կընկնի։

Խարազի տղի սիրտը մեղմերեց տալով

սկսել էր թէժ կրակի նման այրուել աղջկայ սիրու։ Նա ամենեին չէր զգում իշխանի մարդկանց տուած անարգանքները։ Բանտարկութիւնը շարունակւում էր, և իշխանը խարազի տղին հաւասար շարչարում էր և իւր աղջկանը, որովհետև ոչ մինը չէր ուզում իւր խօսքից ետ կանգնել։ Երկար չքաշեց, աղջիկը հիւանդացաւ մաշող մտածմունքների ձեռից ու մոռացաւոր մեռաւ։ Իշխանուհին սգաց իւր միանուագար դստեր մահը, իսկ իշխանն աւելի կատաղելով երդուեց խարազի տղին մութ բանդում այնքան պահել, որ ոսկորները փտելուց քըքքըրուեն։ Իւր սիրուհու մահից ահա քանի տարի է անցել, դեռ Խարազի տղէն տեղեկութիւն չունի։ Ջրատարը նշանածի յուսով է ապրում։ Ասում են, նրա նման ընկերասէր, անձնուէր ողջ քաղաքում չկար։ Գովում են նրա տեսքը, բայց ինչ ասել կուզի, որ հիմի կոտրուած կլինի։

Փափագը գոհութեան ժպիտն երեսին դարձաւ ուղեկցին։

— Ապրես, շատ ապրես, եթէ ասածդ իրաւ լինի՝ ես քեզ ընտիր ընծայ կտամ։

— Մաղաչափ սուտ չկայ ասածիս մէջ, տէր իմ, խօսեց ուղեկիցը, քաղաքն առաջներիս է, կգնանք, կտուգենք տեղն ու տեղը։

— Հէնց հիմա գնանք, շտապով վրայ բերեց Փափագն ու ձիու ընթացքը արագացնելով ուղեկցի հետ առաջ ընկաւ։

Նպիրը բաւական ետ էր։ Թագաւորազը մի քանի րոպէից ետը քաղաքի բանտի բակում կանգնած էր։

— Խարազի տղի կապանքները արձակած բերէք դուրս, հրամայեց պահապաններին։

Մի առ ժամանակ բանտի պահապանները շուարած մնալով՝ տեսան որ հրամայողը ուրիշ հանգի է, իսկոյն կատարեցին հրամանը։ Փափագի առաջ տնկուեց մի ջլոտ, ածուի տղամարդ. երեսհարքը այնքան դժնեայ չէր ինչքան ահարկու։

Դու ես Խարազի տղէն, հարցրեց Թագաւորազը կարեկցութեամբ։

— Այո՛ ես եմ ողորմած պարոն, պատասխանեց Խարազի տղէն, զարմացած աչքերով նայելով Փափագի մատղաշ հասակի վրայ։ Արդեօք դու չես վախենում իշխանից, որ նրա կալանաւորը արձակում ես։ Ես մի անբազդ մարդ եմ, ինչո՞ւ իմ պատճառով դու փորձանքի մէջ ես ընկնում։

Տեսնելով որ կալանաւորը դողը իշխանի անունը լսելիս դադարը չի զգում՝ խարազի

22
Ա. ԱՐԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

տղէն կարծում է թէ սա հրեշտակ է մարդու կերպարանքով եկած, որ լռիկ մնջիկ շարունակ իրան է նայում։

Լուրը շուտափոյթ հասաւ քաղաքի իշխանին, թէ մի յանդուգն երիտասարդ եկել խարազի տղին բանդից հանել է առանց իրան մարդատեղ գնելու։ Ագին կտրուած օձի պէս իշխանը վրայ հասաւ, հէնց ուզում էր Փափագին ձիու վրայ կոր կոր անի, նազիրը փողոցի ծայրում ուղեկիցներով երևաց։ Իշխանի թուրը մնաց կպած։ Ծեր նազիրի կերպարանքը նրան լաւ ծանօթ էր։ Ժողովուրդը հետզհետէ խմբւում էր. հրապարակում էլ ասեղ գցելու տեղ չկար։ Իշխանը բարկութիւնը զսպելու համար պուռները կծոտում էր և շուտ շուտ նազիրին նայում, իսկ սա անտեղեակ պատահարից՝ առաջ եկաւ և խոր յարգանքով գլուխ տուեց Փափագին։

— Թագաւորազ տէր, ասեց նազիրը, քաղաք մտնելուդ պէս պտէիր իջնիլ իշխանի տանը, հանդստանալ, ճամբի փոշուց մաքրուիլ, ապա ժողովրդին երևալ։ Մինթէ յոգնած չես, տէր իմ, գնանք հանդստանալու իշխանական պալատում։

— Եթէ կարիք ես զգում հանդստութեան՝ կարող ես, ես էլ շուտ կգամ. բայց իշ-

խանն արժանի չէ այն շնորհին, որ նրա մօտ իջևանենք։

Խարազի տղէն ուրախութեամբ իմացաւ որ իւր ազատիչը թագաւորի որդին է. իսկ իշխանը խելքը թռցրածի պէս չէր իմանում՝ ինչ հանդով շահի թագաւորազի սիրտը։ Գոլ —սիրտը գոլ։ Իշխանը տեսաւ, որ իւր արարմունքը դատեր առթով թագաւորազին հասկացնող է եղել՝ ճարը կտրուած ընկաւ Խարազի տղի ոտները.

— Ես արի, դու մի անիլ. մեղը արի ծերութեանս վնասն ինձ է դիպել, ազջիկն իմն է կորել իմ բռնութեան պատճառով։ Գլուխս շատ ծեծեցի, եղնից չհասայ. այժմ էլ եթէ քարափից ընկնեմ, ձեռդ ինչ կընկնի։ Արի խնայիր ալիքներիս, միջնորդիր թագաւորազին ինձ ների, ինձ պատուից չընկցի։

Սրա նման շատ աղաչանքներ արեց իշխանը Խարազի տղին, բայց նա մնացել էր լուռ.

— Ես չէի հաւատում, որ դուստրս կարող էր մի ապրատ երիտասարդի համար վշտամեռ լինել։ Իմ գլուխը չէր վերցնում որա պէսին վեսայ ճանաչել, կարծում էի, թէ կարող եմ աղջկանս համոզել սրանից ձեռը վերցնելու։ Ես շարաչար սխալուեցի և իմ ձեռով իմ տունը

քանդեցի։ Երբէք չզուշակեցի որ կարող է սրա մէջ Աստծու մատը խառը լինել. աղջիկս շունչը փչեց սրա անունը յիշելով, իսկ սա մինչ օրս հաւատացած է, թէ նա կենդան է։

Խարազի տղէն տխրեց այս միջոցին և քթածակերից ծուխն ու մուխը գցեց։

— Քաջ կաց, Խարազի տղայ. քեզ հասցրած վշտի փոխարէն իշխանը իրանը կստանայ, խօսեց Փափագը իշխանի վրայ թթուելով, իսկ Խարազի տղէն դարձաւ թախանձագին խօսեց։

— Թագաւորազ տէր, մի բան եմ ազաչում։ Ինչպէս երևում է Աստծու հրեշտակի միջոցով ամէն բան իմ մասին իմացել ես։ Աւելորդ է կրկնելը, միայն չէի հաւատում թէ իմ խաղաղ սիրտս տակն ու վրայ անողը կարող է այդպէս շուտ թառամել։ Եղածը եղած է, այլ ես նա ողջանալու չի, ուստի թող տուր իշխանին, իմ պատճառով մագաչափ էլ թող մնաս չընհանի. նրան դիպած վիշտն էլ բաւական է։

Այս խօսքերից ետ թագաւորազը աւելի քաղցր նայեց Խարազի տղի վրայ, իսկ իշխանը մօտենալով Փափագի առջև չորեց.

— Թէպէտ հասակով դու ինձնից փոքր ես, ասեց. բայց թոյլ տուր ծունկ չորած մի

ողորմութիւն խնդրեմ։ Տեսնում ես որ ես մի վշտակոծ հայր եմ առանց մի միխիթարութեան։ Ո՞ւր էր թէ խարազի տղէն ինձ իր ձեռով սպանէր, ինչպէս ես սպանեցի իմ աղջկան— նրա սրտի կիսին։ Ահա աշխարհը տեսաւ, որ այսօր անհուն բարեսրտութեամբ իմ կեանքը ինձ է բաշխում և դրանով այնպիսի խանդագին դաս տալիս ինձ՝ որ մինչև օրս ոչ մէկից ոչ լսել եմ, ոչ տեսել։ Զուր չէր դուստրս դրան հաւանել ու սիրել։ Կոյր աչքերս այժմ բացուեցին, ես էլ սիրեցի Խարազի տղին և կուզեմ որ դա ինձ մի շնորհ անի։ Դա ազքատ է և անծնող, իսկ ես հարուստ և անզաւակ։ Թող դա ինձ որդի լինի, ես դրան սիրող հայր։ Այսպէսով կարող կլինինք միխիթարուել մեր վշտերից։

Նազիրը որ լուռ լսում էր՝ մէջ եկաւ և ասեց.

— Շատ հիանալի միտք է և հնչտ իրագործելի, ապրի Խարազի տղէն, թող դայ իշխանի ձեռը համբուրի։

— Ես էլ հաւան եմ այդ մտքին, ասեց Փափագը. իշխան վեր կաց և առաջ դու համբուրիր այդ արժանաւոր երիտասարդի ճակատը։

Իշխանն ու Խարազի տղէն համբուրուեցին, խռնուած հասարակութիւնը ցնծալից ա-

զաղակներով շնորհաւորեց նրանց բարեկամութիւնը և օրհնեց թագաւորազի արևը։

— Ա՜յ, ինչ կասեմ, հիմա ժամանակն է հանգստանալու, մեծապատիւ նազիր գնանք, ուր ուզում ես, առաջարկեց Փափազը։

Դիմեցին ուղղակի իշխանի պալատը, ուր պատրաստուած էր ճոխ սեղանը։ Սգաւոր իշխանուհին լսած լինելով իրողութեանց մասին, սրտատրոփ սպասում էր հիւրերին։ Խարազի տղին իւր մօտ կանչելով քաղցր զգուանքով հանդերձի փեշը նրա գլխովը փռեց ու սկսեց կարօտ սրտով համբուրել ճակատէն, գլխէն, երեսէն։

Ողջ քաղաքի հասարակ դասակարգը խընդումի մէջ էր։ Սեղանին սպասաւորում էր Խարազի տղէն, որին այդ օրը ամեն կողմից իշխանորդի էին կանչում։

Առաջին կենացը նրա համար խմեցին.

— Խարազի բարի տղայ, բարով տեսնենք քո պսակը, գոչեցին ամեն ծայրերից։

— Ամէն, ամէն, լիաբերան վրայ բերեց իշխանը։ Դեռ ճաշի վրայ շատերը իրանց մէջ խօսում, որոշում էին, թէ իշխանը ում աղջիկը կուզի իւր հոգէորդուն։

Դ.

Ճաշը վերջացրել, քնել, կազդուրուել էր Փափազը, պատրաստւում էր ճամբայ ընկնելու. «Գնանք, նազիր, ճամբաներս երկար է, եթէ ամեն տեղ այսչափ ուշանանք՝ ժամանակին չենք կարող թագաւորի մօտ հասնել. և նա կասկածի կգայ, որ մեզ փորձանք է պատահել։

Նազիրի բէփովը չէր այդ օր ճամբա ընկնելը, ուզում էր իշխանի հետ կերուխումը շարունակել, բայց Փափազը վճռակի ասեց, որ գնալու են։ Նազիրը չուզեց հակառակուել թագաւորազին. նա աւելի ուրախանում էր որ իւր փեսէն այդպէս կտրուկ է։ Շտապեց հեծաւ ձին և ուղեկիցների գլուխն անցաւ, իսկ Փափազը ձեռը դրած խարազի տղի ուսի վրայ ընկերաբար քաջալերում էր և առաջարկում շուտով կարդուել ուրիշ աղջկայ վրայ և վիշտը մոռանալ։

— Թագաւորազ տէր, վճռական չեմ կարող խօսք տալ ամուսնանալու համար։ Եթէ լինի էլ՝ իշխանի ստիպմամբ պտի լինիլ, բայց իմ կողմից խոստովանում եմ, որ ես մխիթարուած ու սփոփուած եմ քու վարմունքով, քու ողորմածութեամբ։ Ես այնքան ամուսնանալու վրայ չեմ մտածում, որքան քու արած լաւութիւնը փոխարինելու վրայ։ Աստուած չանէ,

որ դու իմ օգնութեան երբ և իցէ կարիք ունենաս։ Բայց հողուս պարտքը լինի ձեռ մեկնել ամեն կարօտեալի, ամեն անճարի քու անունով։ Դրանից էլ քաղցը բան չի լինիլ ինձ համար։

Փափագը մնաս բարև ասեց ու Խարազի տղի ձեռը թօթուելով առաջ անցաւ դէպի քաղաքի փողոցները. ժողովուրդը ցնծալից աղաղակներով նրան ճանապարհ գցեց։

Բաւական տարածութիւն կտրել էին, նազիրը մօտեցաւ Փափագին.

— Տէր իմ, այսօր հրաշալի գործ կատարեցիր և ամբողջ քաղաքը մխիթարեցիր, բայց մոռանում ես որ ծնողդ էլ նոյն կերպ սպասում են, թէ մեր Փափագը երբ պտի ամուսնանալու ցանկութիւն յայտնի։ Հայրդ քանի անգամ խնդրել է, որ իմանամ թէ ում վրայ է քու սիրտը։ Հրաւէրքների ժամանակ հօրդ պալատը անթիւ աղջիկներ են գալիս, նրանցից մինն ու մինը ընտրած կլինես։ Դու պտես ինձ ասել քու միտքը, որ ես էլ յայտնեմ հօրդ։ Աշխարհի կարգն այդպէս է։

Փափագը երկար լսում էր վերջը պատասխանեց։

— Դեռ դրա ժամանակը չէ, նազիր, դեռ առաջ գնանք, տեսնենք ինչ կայ մեր

հում, ինչ չկայ։ Ասից ու ուղեկցի հետ զրոյց տալով ձին թռցրեց։ Նազիրը չհամբերեց, եղնից ձայն տուեց.

— Տէր իմ, դա շատ ուրախալի է որ ձին այնպէս ես բանեցնում, կարծես վրէն բուած, բայց գլխաւորը մոռանում ես, որ այդ ուղղութեամբ գնալով մեր աշխարհի սահմանից չեկուում ես, ու ընկնում Մեծ Սլոռի փէշերը, որի ձորերն ու ծործորները գնացողը՝ շահ չի բերում։

— Ո՞նց թէ շահ չի բերում, հետաքրքրուեց Փափագը, այնտեղ հարամի խօ չկայ. միթէ իմ թուրս ու ձիս ինձ չեն օգնիլ այդ հարամու դէմ։

— Ո՛չ, տէր իմ, վախվախելով սկսեց նազիրը, հարամի չկայ, բայց թէ ասուած խօսք է, ես էլ լսում եմ, ասում եմ, որ լաւ չի այդ կողմ գնալը։

— Ախր ինչու լաւ չի, պնդեց Փափագը, ինչու ես իմացածդ ծածկում։ Չէ՞ որ հայրս քեզ նրա համար է հետս դրել, որ հետաքրքիր տեղերի, առարկաների, մասին քո ունեցած տեղեկութիւնները չխնայես։

— Հաւատացիր, տէր իմ, որ այդ կողմի մասին աւելի բան չգիտեմ. ինքս չեմ գնացել, լսել եմ որ վտանգաւոր է։ Բայց թէ

վտանգն ինչից է գալիս ինքս չգիտեմ։

Փափագը, որ այն գլխից նազիրի վրայ լաւ աչք չունէր, կարծելով որ շատ բան գիտէ ու չի ասում վճռեց հակառակուել նազիրին ու գնայ դէպի Մեծ-Սըռը, որի միայն անունն էր լսել։ Ինչքան էլ նազիրը սատեց թագաւորի անունով Փափագը բանի տեղ չդրեց, ուղեկցին հրամայեց իրան հետևել։

Քամու պէս թև առած թռչում էին ձիաները. բանի գնում տեսարաններն այնքան հրապուրիչ էին դառնում։ Նազիրը շատ յետ էր մնացել Փափագի քէֆը գալիս էր երբ իր ձին հովի պէս թռչում էր ու չէր դադրում։ Սիրտն ուզեց որ մէկ էլ դէպի դէմուդէմի անտառը քշէ. և քշեց, բայց ձիու վրընջոցի ու սմբակների դրրմբոցի վրայ ինչ տեսաւ իր առջև վազելիս։ Մի սիրուն չալիկ մալիկ կլտաար։ Հովի պէս սլանում էր, ուսովը երբեմնապէս ետ եշում. էլի գնում, էլի ետ եշում։ Փափագի սիրտը քիչ մնաց հալուի, չէր դիմանում ուսից նետ ու աղեղ հանել։ Հանէր էլ, ձեռքը մնց կգօրէր խփելու։ Կլտաարը անտառի խորքը մտնելուն պէս անհետացաւ։ Երբ Փափագը սրտատրոփ դէս ու դէն ականում էր կլտաարին՝ յանկարծ մի կինարմատի շողը ընկաւ նրա աչքով ծառերի արանքում։ Այնքան հրապուրիչ

և սրտագրաւ էր նրա տեսքը, որ կլտաարը մոռացած ուզում էր ձիու գլուխը կինարմատի երևցած կողմը դարձնել, մէկ էլ յանկարծ կլտաարը լոյս ընկաւ ու բոլորովին մօտից անցնելով թռաւ ձորի վերև, որտեղից մի վճիտ առու էր քշշում։

Փափագը ճարահատած ձին կլտաարի ետնից քշեց, բիչ էր մնում հասնի, մէկ էլ աչքը բաց արեց, տեսաւ կլտաար չկայ, այլ ապրիւրի գլխավերև թփերի կողքին մի անմահ, լուսաթաթախ աղջիկ, կասես ամպերից կաթած, այնքան մաքուր ու սպիտակ էր շորը։ Սրիտաջան ձին այստեղ էլ ճիգ թափելով ուզեց ակընթարթում հասնել ապրիւրի մօտ և տիրոջ սիրտը շահել, բայց նորից կընդարշտուրիկ կլտաարը ապրիւրի միւս կողմից դուրս պրծաւ ու — աչքդ բարին տեսնի — վազեց դէպի Մեծ-Սըռը։

Փափագը նոր գլուխ ընկաւ, որ հրաշագեղ աղջիկը փոխարկւում դառնում է կլտաար։ Էլ ձիու մէջ այժ չէր մնացել. խեղճ անասունը հեռուն ընկած դողում էր, սմբակներից ետ սև քրտնքում մտել էր։ Բայց Փափագի սիրտը քիչ էր մնում կարուել, թէ ինչու ձեռից այնպիսի սրսը գցեց։ Ինքն իրան մոռացած՝ լծուեց ձիու սանձը, ոտով կամեցաւ բարձրանալ. դեռ

տասը քայլ շարած՝ շնչասպառ վէր ընկաւ խէջի ու դէջի վրայ, որոնցով ծածկուած էր Մեծ-Սրբի կատարը գնացող կածանը։

Անցել էր ժամանակ։ Ձիու հետի վրայ եկաւ Փափագին գտաւ իւր հաւատարիմ ուղեկիցը. խոտելով դրեց թամբի մէջ ու հասցրեց անտառի ծայրը, ուր սպասում էր նաղիրը միւս ուղեկիցների հետ։ Թաղաւորաղը թմրած, ուշը կորցրածի նման ճամբայ ընկաւ անձայն, անմռունչ։ Տուն հասաւ թէ չէ՝ մահիճ մտաւ։

Աշխարհը Պայ-պայ թաղաւորի գլխին սեւացաւ, երբ տեսաւ տղի լեղուն կապուած։ Գանձարանը բաց արեց բժիշկներ հրաւիրեց աշխարհի ամեն ծայրերից։ Դեղ ու դեղապետ չթողեց. մեծ ու փոքրի հարց ու փորձ արեց, հնար չեղաւ, չիմացուեց թէ նրա ցաւը ինչից է։ Մինը պնդում էր, թէ մրսել է, մէկէլը թէ վախեցել է։ Փափագը ոչ ուտում էր, ոչ խմում. ամեն բանից սրտմա եղած, երեսը քարձի մէջ թաղած լալիս էր ու օր օրի վրայ հալ ու մաշ լինում։ Մօրից աւել սրմին չէր մօտ թողում. ջրատար մայրն էլ տեսնելով որ որդին ձեռից գնում է՝ մտածեց տատմօրն իմաց անել։ Տատմէրը մի գիտական կնիկ էր,

քաղցր լեզուով օձը բնից հանող լեռ քարին խօսեցնող։ Պալատը հասնելուն պէս շտեց թագուհու առջև.

— Իմ երեսը քու տի տակը. ինչու համար ես կանչել։ Շնորհ անա, թէ մինուճար Փափագիդ արևը կըսիրես։ Հարցայոյս [1]) ես կանչել, թէ հարցափորձ [2])։

— Հարցայոյս, մէրա ջան, հարցափորձի ինչ սիրտ ունիմ։ Փափագս այն հալի է, որ աշխարհը գլխիս մթնել է։ Յոյսս քեզ եմ քցել, պտես մի ճար անիլ, որա հիւանդանալը գուռն երեսներիս յետ է արել, մեղ ողջ-ողջ կոտորում։

Ե.

Փափագը դուռն թեթև ճռռալուց հոը ստնաձայն լսեց։ Կարծում էր թէ մայրն է, բայց երբ տեսաւ Զառի բիբը գլխավերև կանգնած՝ սրտումը մի բան տպաց. «աշխարհիս անմեղ, անփորձ արարածները սրան են իրանց զաղանիքը հաւատում. ինչ կը լինի, ես էլ իմ սրտինս ասեմ. եթէ հնար չլինի՝

[1]) Հարցնել լիայոյս լինելով մէկի շնորհքի վրայ.

[2]) Հարցնել միայն փորձելու, խելքը չափելու վրայ։

սիրտս գոնէ կը թեթևանայ»։ Ուղղակի տատմօր աչքերին նայեց ու թառամած շրթունքներով մի սալարած ժպիտ արեց. Զառի բիբը տղի երեսն ի վեր ցնծալով խօսեց.

— Իմ սիրեկան թագաւոր որդի, բիբը շարդ տանի, դլխովդ ման տայ, քու անսիրտ մայրը քեզ այս ինչ օրն է գցել։

Այս խօսքերի վրայ փափագի սիրտը հովացաւ։

—Զառի բիբի, արի նստիր կողքիս։ Մինչև օրս շատն է ստիպել, աղաչել, որ սրտիս ցաւն ասեմ՝ սչովի խնդիր չեմ լսեմ։ Բայց երևի աստծու մտքումը ինձ ճար անելը կայ, որ քեզ ուղարկել է ինձ տես։

Վրայ եկաւ, անկողնում նստեց Փափագը և ծանր ու բարակ պատմեց անտառի անցքը։ «Խելքս միտքս այն կլստար աղջկայ եղնից է։ Մէնակ լինի, թէ ընկերով պտեմ գնալ գլուխս քարէքար տալ, նրան ձեռք բերիլ։ Թէ ծնողքս կյօժարուին ինձ օգնելու՝ կառողջանամ, եթէ չէ, թող գնան գլխները լաց լինին. ես մեռնելու եմ։

Զառի բիբը Փափագի յուզուելը նկատելով պարկեցրեց խոտոր գցեց և ճակատից համբուրելով ասեց.

— Հանգիստ պահիր սիրտդ, թագաւոր

չուարիդ մեռնիմ. խնդրի կատարելը իմ աչքի վրայ, միայն քոնն այն լինի, ուրախ կենաս, հետդհետէ ուշի գաս։

Զառի բիբը ուրախերես դուրս եկաւ. թագուհին նրա առաջը կտրեց. «շուտ, ասա, տա՛տի։ սիրտս մորթած հաւի պէս թրպրտում է, ինչ հնար արիր, յոյս կա՞յ թէ չէ։

Տատմէրը երկու խօսք թագուհու ականջում փսփսաց, նրա սիրտը մի թիզ եղակալացրեց.

— Այժմ որդուդ կեանքը կախուած է քեզանից, նա մի մղմեցած պատրոյդ է, քու մի խօսքը կարող է նրան վառած պահել կամ հանգցնել։

Պառաւին առատօրէն վարձատրելուց ետը թագուհին մտաւ թագաւորի մօտ.

— Բա՛ չես ասիլ, մեր ձեռով մեր տունը քանդել ենք։

— Ի՞նչպէս, հարցրեց թագաւորը։

— Թէ բա՛ այսպէս այսպէ՛ս։ Մենք մեր մտքումը նազիրի աղջկան ենք հարսնացու ընտրել, տղիդ ուշքը ուրիշն է խլել կիստարի կերպարանքով ու թռել Մեծ-Սլռի դլուխը։ Էլ զուր ժամանակ կորցնել հարկաւոր չի. ինչ անելու ես, արա՛, թէ չէ սուս մնալով մեր տունը բրիշակ է լինում։

Պայ-պայ թագաւորը վարձանրից շատ պատիրաստ մարդ էր. այդ լուրի վրայ տխրեց. ճակատը կնճռեց, ունքերը կիտեց ու մոահոգ դէմքով խօսեց.

— Եթէ մեր որդին միայն աղջկայ համար է հիւանդացել՝ շատ լաւ է, ամօթ նրան։ Թէ խելօք տղայ է, թող համաձայնի նազիրի աղջիկն ուզենք. թէ չէ լսողն ինչ կըմտքի, որ հարսնացուն դաւանը թողած՝ սար ու ձոր ընկնենք։ Մեր աշխարհի ամեն մի հովտում մի իշխան է նստում ու ամենն էլ գովական աղջկերք ունին։ Մեր արարմունքը խակի դրանց դուր կգայ, կամ իմ մահից ետը Փափագին ինչ աչքով մտիկ կտան։

Թագուհին թէ՝ տղէն նա է, նազիրի աղջիկ չի ուզում, խօ ուժով գլուխը չես կապելու. նազիրի ու վէզիրի պատճառով խօ որդուդ լաճ չես անելու։ Ո՞վ կգովի քեզ, որ անկոտրում լինելովդ հատիկ զաւակիցդ էլ գրկուես։

— Այ սիրելի, մեղմաձայն խօսեց թագաւորը. ասենք դու ասում ես ծմակասարը բանդեմ. եթէ գլխիցս առաւել քեզ սիրելիս լինիմ, խելքդ ինչ է կտրում, կարող եմ քանդել։ Քու տղի ուզածը այն աղջիկն է, որ անթիւ թագաւորներ, հազար դեր իրար գլխով է տուել, նրանց կռուի խնձորը դարձել։ Եօթ թագաւոր

խօսք մին արած շատ տանջուեցին, չկարացին ձեռ գցել։ Այնտեղ գնացողը մի կամ երկու հոգի պէտք է լինի, և՛ քաջ և՝ իմաստուն, որ կարենայ նրանց հազար մի առաջարկները կատարի։ Ինչքան լսել եմ՝ այնտեղ գնացող ոչ մի տղայ ետ չի եկել։ Ես որ խնդրում էի որդուդ, թէ Մեծ-Սրբի վրայ չգնաս՝ սրա համար էի ասում։ Յամառի պէս ինձ չլսեց, գնաց ու պատուհաս բերեց գլխներիս։ Հիմա ես մնց անեմ, ինչ սրտով աչքիս սև ու սիպտակ մի որդուն հարամու բերան գցեմ, քեզ եմ հարցնում։

Թագուհին խռովայոյզ սրտով եղունգները կրծոտելուց ետը լռութիւնն ընդհատեց.

— Որդուս ցանկութիւնը պտի անպատճառ կատարուի։ Աչքիս տակն եմ կալել՝ դանձ, հարստութիւն, ամեն ինչ գոհել, դէն ածել՝ Փափագիս խնդրուածը կատարել։ Մարդիկ ուղարկիր, թող աշխարհի ծայրերից քաջասիրտ իշխանազներ ժողովուեն։ Միթէ նրանց մէջ գոնէ մի շնորհալին չի՞ լինիլ, որ իւր քաջ ոսկի ստանայ և Գը՛մբ-գը՛մբ ձորը գնայ Կիստար աղջկանը բերելու։

Թագաւորն առ ժամանակ չէր վստահանում իւր համաձայնութիւնը տալու, բայց ետոյ

մտածելով որ իշխանաղներից ոչով չի յանդգնել մենակ գնալ Գը՛մբ-գը՛մբ ձորը, կամ իւր որդուն ընկերանալ, առանց ուղեկցի էլ Փավաղը ոտ ոտի առաջ չէր դնիլ, ուստի իշխանաղներին հրաւէրներ ուղարկեց, յայտնելով թէ ինչի համար է նրանց կանչում։ Նաղիրին էլ կանխապէս պատուիրեց, որ եկող երիտասարդների միտքը թաքուն թէ յայտնի պղտորի, ահ տայ, որ ոչով չյօժարուի այդ վտանգաւոր ուղևորութեանը մասնակցելու։

2.

Խարազի տղէն իւր վեր ու ննոտով, իւր խօսք ու զրուցով իշխանի և իշխանուհու արմանքը բերել էր։ Ցաւում էին իրանց արած սխալի վրայ, էլ ետնից չէին հասնում։ Կենում էին կենում մուրազաչոր գոտին ողորմի տալիս, խմաստուն ընարութեան վրայ գլուխներն օրօրում ու ասում. «ախր ինչու մեր անողորմ վճռով յուսահատեցրինք խեղճին, վաղաժամ գերեզման գրինք»։ Այդ տխուր մտքերից ազատուելու համար ամեն օր խնդրում, աղաչում էին Խարազի տղին, մատը մի աղջկայ վրայ

դնի, պսակուի։ Զբաւոր ընտանիքից լինի, աւելի լաւ։ Իրանց միակ ուղելիքն այն է, որ սղաւոր օրերից ետը խնդութիւն տեսնեն իրանց օջախում, աշխարհից համ առնեն հարս ու թոռան միջոցով, միւս կեանքն էլ մի մխիթարութիւն տանեն։

Երկար տատանուելուց ետը Խարազի տղէն կամք տուաւ։

— Դէ որ այդպէս է, ասեց, թողէք գնամ, որոնեմ ձեր և իմ ուզած աղջիկը ուրիշ աշխարհներում. քաղաքի աղջիկները իմ քոյրերն են այն օրից, երբ սղացին սիրուհուս վշտալի կորուստը. վայել չեմ համարում նրանցից ինձ հարսնացու ընտրել։

— Խելօք խօսք է, հաւանութիւն տուին իշխանն ու իշխանուհին գանձարանը բաց է, որքան կամենաս վերցրու, քանի ձիաւորով ուզում ես շրջիր։ Օրէցդէնը խօսքը քոնն է, մենք լոդ-կատարող ենք, քաղցր հոգէորդի։

— Ոչ ձի է պէտք, ոչ ուղեկից, ասեց Խարազի տղէն։ Մի քանի քսակ ոսկի վերցրեց ու ճամբու ընկաւ։ Նրա անունը, համբաւը վաղուց տարածուել էր հեռու քաղաքներում, աշխարհներում։ Ծպտուած էր շրջում շատ տեղ, որ թողնեն ճամբէն հանգիստ շարունակի, թէ չէ օրերով պահում էին պատում, միւս խելքը,

երրորդ տեղ սրտի անհուն ողորմը։ Շարունակ շրջելով Խարազի տղէն, շատ բան տեսնելով ու փորձելով՝ վերջապէս մի օր նստել էր մի ադրիւրի կողքի, նախաճաշ էր անում։ Մի սիրուն ծիտ կանգնեց դէմի ծառի ճղանը, կլափը բացը բաց արեց։

— Խարազի բարեսիրտ տղայ, քեզ մի ուրախ լուր եմ բերել, ականջդ ինձ արա, լսիր։ Թագաւորի տղին մի անցք է պատահել, ցաւալի անցք։ Նրան օգնելու համար կանչուած են աշխարհիս բոլոր իշխանաղները, նրանցից ոչ ով արիութիւն չի ունենալու առաջարկը կատարի։ Ամենքը փախչելու են. թագաւորազը հաւատարիմ ընկեր գտնելու համար մնալու է շուարած։ Հասիր այնտեղ շուտով, որ հետը ողջամախտէր դառնաս ու պահապան հրեշտակ լինես։ Դու պտես հասարակ տոհմովդ շատերին նախանձելի դառնալ։ Ինչպէս մինչև այժմ ոյժերդ դէպի բարին ես գործադրել, նոյն կերպով էլ շարունակիր։ Բոլոր տարերքները, զօրութիւնները քեզ հետ միանալու և օգնելու են, երբ հարկաւոր լինի։ Ճամբէդ Ծմակասարոմն է ընկել, դեռ շատ բաներ կըտեսնես։ Քաջ կաց, ես խորհուրդներս քեզնից պակասցնելու չեմ։

Մինչև Խարազի տղէն բերանը բաց ա-

բաւ որ շնորհակալութիւն անի՝ ծիտը դէպի տղէն կուլ-կուլ եղաւ, դէպի վերև ծուլ-ծուլ եղաւ ու թռաւ։

Խարազի տղին այնպէս թուաց, թէ երազ է, որովհետև երազումը դրա նման երևոյթներ շատ էին պատահել։ Վերկացաւ ու գնաց։ Գնալիս յանկարծ մի ճղճղոց ընկաւ նրա ականջը. «այս ինչ պտի լինի։ ընդհատեց մտքերը և քայլերն ուղղեց դէպի դրբրուոց ճղճղոցը, որ հետզհետէ սաստկանում էր։ Մօտեցաւ, տեսաւ մի հորի միջից է գալիս այդ ապմուկը։ Կռացաւ բերանի ահագին խուփը գէն գցեց։ Իրար հանից սասումի պէս դուրս թափուեցին բաջերը և շրջապատեցին Խարազի տղին։

— Բարի և հուժկու հողածին, քեզ ենք պարտական մեր կեանքը և ուրախութիւնը։ Դու մեզ ազատեցիր այս հորից, ուր հարիւրաւոր տարիք փակուած ճչում, պաղատում էինք, ոչ մի շնչաւոր այնքամ արիութիւն չունէր որ մեզ մօտենայ, և ոչ այնքան ոյժ, որ մեր փականքը վերցնի։ Սրանից դէնը քո ծառաներն ենք, ինչպէս ուզում ես աշխատեցրու։ Ահա իրրև նշան, վերցրու այս երկու մազը, ասեց քաջքերի ծերագոյնը, դժուար տեղն ընկած ժամանակ իրար քսիր, մօտդ պատրաստ ենք։ Իսկ այժմ մենք գնում ենք կերակուր ճարելու։

Խարազի տղէն լռիկ շնորհակալ եղաւ, մազերը գլխի ծալը գնելով նրանց թողեց։ Շատն ու քիչը Աստուած գիտէ, տեսաւ մի դոշ, թոկով կապած, առջեր հատած միս դրած, իսկ խոտի կապուկը հեռու մղած։ Մեղքն եկաւ անասունի վրայ, որ սովածութիւնից վիզը թուլացրել, գլուխը կախել էր։ Միսը ոտով դէն գցեց, խոտը առաջ քաշեց, այնքան տպաւեց, որ դոշը կշտացաւ ու լեղու եղաւ խօսեց։

— Այ տղայ, այս լաւութիւնը ոչ մի հոգածին չի արել. դրա փոխարէն քեզ մի վէգ կտամ. կարիք ժամանակ գցիր, մօտդ պատրաստ եմ։

Խարազի տղէն գրպանը դրեց վէգը և առաջ գնաց։ Տեսաւ ճամբի վրայ մի պախրայ ծարաւաչոր եղած։ Մօտը մի լիճ կայ, վիզը մեկնում է ջուր խմելու, առաջեի թումբը արգելում է։ Խարազի տղէն անասունին խղճալով թևերը քաշեց և մատներով առաջին թումբը պոկեց, հարթեց։ Պախրէն ջրից կշտացաւ ու օրհնեց.

— Այ տղայ, դու որ հօթը տարուայ ծարաւ պախրին ջուր տալու համար այդքան նեղութիւն քաշեցիր, միթէ ես քեզ պարտական պտեմ մնալ։ Ա՛ռ պոզերիցս մի ճիւղ, ես քեզ մի օր պէտք կըգամ։

Խարազի տղէն ծոի տասած նշանները յիշելով՝ պախրի պոզն էլ ծոցը դրեց, գնաց։

Առաջն եկաւ մի անտառ. առուն բռնած ագրիւրին մօտեցաւ ջուր խմելու. տեսաւ մի աղաւնի՝ թէկի մինը կախ, ագրիւրի կողքին վէր ընկած, տանջւում է ու չի կարում թռչել։ Խարազի տղէն բռնեց, լմելը խնամքով փաթաթեց։ Աղաւնին թռաւ, նստեց ծառի ճղանն ու ասեց.

— Ի՞նչքան բարեսիրտ ես, այ տղայ. բոլոր հոգեղէնները ձգտում են ճանկ ընկած անճարին սպանեն, իրանց զուարճութեանը ծառայեցնեն։ Ինձնից էլ անճար ու լաւ խորհրդ։ Բայց դու գութ ունեցար, փոխանակ ինձ ոչընչացնելու, կեանքս խնայեցիր։ Քու լաւութեան փոխարէն առ այս փետուրը մօտդ ունեցիր, մի օր քեզ պէտք կըգամ։

Խարազի տղէն ջուր խմեց, ճամբէն շատ շարունակեց թէ քիչ՝ յայտնի չէ. միայն երբ անտառից դուրս էր եկել՝ նկատեց որ մրջիմներն իր առջև լիր ճամբի տակ ղժղժում են ու գլուխ։ Մեղքն եկաւ կոխ տալով անցկենայ, իսկական ճամբէն թողեց, գնաց սարերի լանջերով, դժուարակոխ տեղերով անցաւ, մի հատ մրջիմ չկոխեց Մրջիմների թագաւորը եկաւ Խարազի տղի առաջը։

— Այ տղայ, դու որ մեզ խղճալով, քեզ նեղութիւն տուիր, ճամբէդ սարովդ գցեցիր,

մենք էլ հաց ուտող ենք, բու արած յաւուրթիւնը հասկանում ենք։ Ա՛ռ մեզանից այս երկու թիը, նեղ ընկած միջոցին փոքր մրջիմներիս միտ բեր. ծառայելու պատրաստ ենք։

Խարազի տղէն այս թիերն էլ դտակի ծալը դնելով առաջ գնաց։ Մշուշապատ լեռների ստորոտում երևին էր տալիս մեծ բնակութիւն. «Երանի թագաւորդի քաղաքն այս լինի, ասեց Խարազի տղէն ու քայլերն ուղղեց դէպ այն կողմը։

Խարազի տղին թողնենք այդտեղ, մենք գնանք Փափագի հօր քաղաքը։

Է։

Թագաւորական հրաւէրը ամեն տեղ յայտնի էր անթիւ երիտասարդներ ոտով թէ ձիով տէրութեան ամեն կողմերից շտապել էին դէպի քաղաք։ Ամեն մինը մտադրուել էր իւր կարշութիւնը ցոյց տայ, Փափագին ընկերանայ, բայց պալատի դուռ հասնողը այն անարկու և զարհուրելի բաներն էր լսում նազիրից ու նրա մարդկանցից, որ սարսուռը ջանն առած եւ էր փախչում փութով իւր աշխարհը։

Կամ եթէ քաղաքում մնում էր, սարսափում էր երկրորդ անգամ պալատի կողքով անցնի։

Այն, նազիրը իւր հնարովի ահարկու պատմութիւններով համարեա թէ բոլոր եկողների սիրտը կոտրեց, եկած ճամբէն փոշմանացրեց։ Վերջն էլ շատերին գրաւեց հետեւեալ խորամանկ. «մնացէք, մի դառնաք խոկոյն ձեր աշխարհը. ձեզ համար թագաւորը փառաւոր ճաշ է պատրաստել, որ վայելէք ձեր կրած նեղութեանց փոխարէն։ Եթէ ես ձեզ համար ձեռընտու չեմ համարում Զը՛մբ-զը՛մբ գեղերի աշխարհը գնալը՝ ինչ ասել կուզի, որ թագաւորն խակի կամք չի տալ իւր միանաւճար որդուն գնալու. բայց որովհետև իւր որդին սատանի ձին նստել, ուզում է գնալ, առանց կշռելու գլխին գալիք փորձանքները՝ դրա համար մի հաւատարիմ առաջնորդ ընկեր է հարկաւոր նրան։ Նրա ուզած ընկերը դժուար է գտնել հիմիկուայ հոլածիններին մէջ։ Այնտեղ գնացողը գլխից ձեռ վերցրած պիտի լինի։ Շատ էլ թագաւորը իւր գանձարանի կէսը խոստանում է տալ ձեզնից մէկն ու մէկին, երբ որ Գը՛մբ-գը՛մբ ձորից ողջ-կենդան եւ չէք գալու, չէք վայելելու, ինչ օգուտ կամ ինչ մխիթարութիւն այդ գանձը։ Ինքներդ լաւ էք տեսնում, որ ձեր բարիքն եմ ուզում։ Ձեր բաջութիւնն

այն կրլինի, որ ճաշի միջոցին ձեղնից ուրին Փափագը մտնեցայ, թէ ինձ ընկերացիր, ախ-պերացեր դու, իրաքանչիւրդ մի պատճառ բերէք։ Նա ջահել անփորձ տղայ է, կը տեսնի որ իրանից բաջասիրտները այն տղալի ձորը գնալու սիրտ չեն անում՝ ինքն էլ կհանդարտուի և գլխից կը հանի վտանգաւոր ուղեորութիւնը։ Բայց այն որ թագաւորը ձեզ բոլորիդ առատօրէն կպարգևատրի, ես էլ լիառատ կերուխումով ձեզ կրատուեմ։

Ամենն էլ խոստացան խորագէտ նաղիրի առաջարկի համեմատ շարժուել և անհամբեր սպասում էին արքայական սեղանին։ Փափագն այդ բաներին անտեղեակ լիայոյս էր, որ իշխանազներից շատերը ցանկութիւն կյայտնեն իրան ընկերանալ։

— Ինձ մի ընկեր է հարկաւոր, չգիտեմ ուրին թողեմ, և ուրին տանեմ. ցաւում եմ որ շատերի սիրտը այդպէսով պտեմ կոտրել։ Բայց գոնէ այդ ապացոյց կլինի նախ որ իմ աշխարհում քաջ, անձնուէր հոգիք շատ կան, երկրորդն էլ որ իրանց թագաւորի որդուն շափագանց սիրելուց կեանքերը մահու են տալիս։

Այս էր մտածում Փափագը իր սենեակում, որ մայրը եկաւ, յայտնեց թէ հիւրերը եկած են, սեղանը պատրաստ է։

— Մայր իմ, խօսեց Փափագը դողդոջուն ձայնով, սուրբ բերնովդ բարեմաղթիր գործս յաջողուի։

— Ուրախ դնա, որդի, դեռ յոյս ունիմ, որ այնքան լայնաճակատ, պարթևահասակ երիտասարդների մէջ մի անվախը կլինի և քեզ ձեռ կմեկնի. իսկ եթէ հօրդ կառավարութեան միջոցին ժողովուրդը փափուկ ապրելովը և երկար տարիներ պատերազմ չտեսնելովը բթացած կլինի, այնքան ողորմելի դարձած, որ իւր միջից քեզ մի ընկեր չի տալ... այն ժամանակ, մինուճար Փափագ ջան (մայրն աչքերը լցրեց և ձուը որդու ուսին դնելով շարունակեց) մենակ չես մնալ, մայրդ արիդ մեռնի։ Ինչպէս քեզ խտոխս մեծացնելով բերել այս հասակն հասցրել, յոյս ունիմ քեզ ինձ բաշխող Աստծուց, որ ինձ ոյժ տայ? ինձ թէ տայ քեզ շալակելու, բեղ Գը՞մբ-գը՞մբ ձորը հասցնելու։

Փափագն այս խօսքերից սիրտ առած գնաց ճաշարան։ Երիտասարդները ոտի կանգնեցին. նաղիրը մէկ-մէկ ներկայացրեց թագաւորազին. բոլորն էլ խոր գլուխ տալով իրանց տեղերը դարձան։ Քիչ միջոցից եաը Պա՛յ պա՛յ թագաւորն եկաւ, բաղդրատեամբ հրաւիրեց նստելու։ Ինչ ասել կուզի որ սեղանը ճոխ էր։ Կերան, խմեցին, զուարթացան. միայն նաղիրը

չէր ուտում, նա ոտի վրայ ծառայում, դուրս ու ներս էր անում։ Քաղաքավարութեան համար թագաւորը հրաւիրեց իւր մօտ նստելու, խորամանկ նազիրը պատասխանեց.

— Ուրախութիւնը շատ ժամանակ հացի բռնում է. այսօր ամենասիրելի թագաւորազը իւր բախտաւորութեան հասնելու համար սեղանակիցներից ընկեր է ընտրելու։ Ուրիշների հետ իմ սիրան էլ տրոփում է, թէ արդեօք սրանցից որին պտի մեկնիլ աջը և ով է լինելու այն բազդաւորը, որ այդ ահաւոր խորհուրդը իրագործի։ Առաջինը ես պտեմ այն կտրուկ երիտասարդի ճակատը համբուրել։ Այդ պատճառով, տէր թագաւոր, խոստովանում եմ, որ առանց ճաշելու կուշտ եմ, ինձ նման ծերուկին մեծ պատիւ է քու հզօր ամբութեան քաջ իշխանաղներին ծառայելը։

Այս ասելով նազիրը պտտեց սեղանի գլխով, պատուէրներ առաց ծառաներին տանելիք ամանների և բերելիք կերակրեղէնների համար։ Երբեմն աչքով կամ ունքի նշանով այս ու այն իշխանազի հետ խօսում էր, որին սատելով, որին հաւանութիւն տալով։ Վերջապէս եկաւ այն բոպէն, որ Գը՜մբ-գը՜մբ ձորը գնացողների կենացը պտեն խմել։ Թագաւորը

նշան արաւ որդուն Փափագը ոտի կանգնեց բաժակը ձեռին։

— Քաջ իշխանաղներ, խօսեց թագաւորը, ձեզ լաւ յայտնի է ինչ նպատակի համար որ ժողովուել էք այստեղ։ Այժմ ամենիս ցանկութիւնն է որ տեսնենք, թէ ձեզանից ով է ընկերանում Փափագիս։

Ամենն էլ գլուխները կախեցին ձայն հանող չեղաւ։

— Հայր իմ, լսութիւնն ընդհատեց Փափագը, ես կարծում եմ ամենքն էլ հաւասար վճռած կլինին ինձ ուղեկցել, բայց եթէ ոչ որ մատ չի բարձրացնում, դրա պատճառը համեստութիւնն է։ Թող նստողներից մէկին ես ընտրեմ, նրա կենացը իմի հետ վայելել։

— Շատ բարի ես հրամայում, որդի, պատասխանեց թագաւորը և վախտուկի պէս նայեց նազիրի վրայ։ Նազիրը գլխի շարժումով փարատեց թագաւորի երկիւղը։ Իսկ իշխանաղները խռովածի պէս իրանց առջևն էին նայում մտահոգ դէմքով։ Փափագը մօտեցաւ սրտոտ երևոց մէկին և ձեռը դրեց ուսին.

— Իմ հաւատը բոլորից շատ քեզ վրայ է, արժի քեզպէս ռաշիդին ընկեր ունենալ։

Դեռ խօսքը չէր աւարտել Փափագը, նրա

հաւանած երիտասարդը վերկացաւ ու օրօրուելով խօսեց։

— Թագաւորն ապրած կենայ, ես բախտաւոր կհամարէի ինձ Փափագին ընկերանալով, բայց հայրս տկար է, և ընտանեկան գործերը մնացել են իմ վզին. ցաւում եմ, որ անկարող եմ երկար ժամանակով տնից հեռանալ։

Փափագը մնաց ապուշ կտրուած, ու չխօսուած։

— Փոյթ չի, որդի, ինչու ես տխրում, ուրիշին ընտրիր, քաջերի թիւը խօ մէկով չվերջացաւ։

Փափագը սրտակոտոր մօտեցաւ երկրորդին.

— Դու կարելի է յօժարուես ընկերանալ։

Սա էլ թէ՝

— Ծնողներս համ զառամած են համ հիւանդ. նրանց միակ յոյսը ես եմ, եթէ ոչ՝ ուրախութեամբ կընկերանայի քեզ թէկուզ մինչև Աստծու պատի տակը։

— Ո՞չինչ, խօսեց թագաւորը, երկրորդին, չորրորդին հինգերորդին։ Ամենքն էլ մի մի հնարովի պատճառ բերին։ Ոչ մինը անկեղծ չխոստովանեց, թէ անշնորհք եմ, վախկոտ եմ, չեմ կարող քեզ ընկերանալ։ Փափագը մնաց շուարած, բաժակը ձեռին։ Թագաւորը լուռ էր, իսկ նազիրը սրտում ուրախացած՝

ծառաներին պատուէրներ տալու համար գէս ու գէն էր ընկնում։ Երբ փափագը չդիտէր ինչ անի ամօթահար եղած՝ թագաւորն այս ասեց.

Սիրելի որդի, ահա այս էլ մեր աշխարհի իշխանազները, որոնց քո սիրու համար ժողովեցի այստեղ։ Ինքս էլ տխուր եմ, որ չյաջողուեց քեզ ընկեր գտնես սրանց միջից. բայց երևի Աստծու մատը խառն է, որ այդպէս է լինում։ Մինչ այս վարկեան քո խնդրածները ես կատարել եմ, այժմ մի բան ես եմ խնդրում իրրև ծնող։ Հեռու աշխարհ գնալը ինչպէս երևում է այլ ես գլուխ չի գալ մենակութեանդ պատճառով։ Բայց փոյթ չէ, հարսնացու ճարելը հեշտ է մեր քաղաքում. այս պատուական իշխանազներն էլ կլինին քո թանգագին մակառները։ Մեր աչքի առջև պսակենք, անցնի գնայ։ Ի՞նչ կասէք սրան, ծերունի նազիր, այ խելօք երիտասարդներ։

— Այդպէս լաւ է, հիանալի է, հաւանութիւն տուին ամեն կողմից։

Փափագը ոչ ձայն հանեց ոչ որ և է նշանով հօրը պատասխանեց՝ անխօս դուրս եկաւ բազմականների միջից, սրտի յուզմունքը ծածկելու համար պարտէզն իջաւ։ Դեռ նոր էր նստել այլայլուած դէմքով մի ծառի տակ՝ ահա ականջով մի ձայնից ընկած.

— Փափագ, քաջ կաց, մի վհատիլ։ Թող դու մտածմունքներդ, վեր կաց, զուարթ դիմաւորիր Խարազի տղին—ահա գալիս է։

Փափագը ուրախ վեր թռաւ, որ աւետաբեր ծտին տեսնի և իւր անհուն ուրախութիւնը յայտնի, մի քանի բայլ չփոխած՝ թուչունի տեղ մօրը հանդիպեց, որ կարմրած աչքերով թվերի քամակից դուրս եկաւ ու որդու վզով փարուեց։

— Իմ քաղցր մինուճար ջան. անշնորհք իշխանազների վարմունքը սիրտս շատ խոր խոցեց. պարտէզ շտապեցի որ արտասունքներս ոչով չտեսնի։ Զօրեղ երեոյ երիտասարդների թուլութիւնը տեսնելով՝ այժմ ես վճռում էի կամ թոյլ տեղուս քեզ ընկերանալ կամ գալ ոտներդ, որ ինձ խղճաս, հեռու աշխարհ գնալու մտքից ետ կենաս։ Բայց պարզ տեսնում եմ որ քո ցանկացած գործի մէջ Աստծու կարող մատը խառն է, իւր հրեշտակին ծտի կերպարանքով ուղարկեց քեզ մխիթարելու։ Էլ ոտքէ մի կորցնիլ։ Գնա և այդ ընտրեալ մարդուն պալատ հրաւիրիր։

Գնաց Փափագը Խարազի տղին դիմաւորելու. իսկ թագուհին երբ պալատ մտաւ՝ թագաւորը տխուր դէմքով ասեց։

— Թագուհի, թէպէտ շատ անհաճոյ թուաց թէ ինձ և թէ մեր պատուական նազիրին, որ Փափագի ուղևորութիւնը չյաջողուեց, ընկեր չի գտնում բայց դու աւելի ուրախ պատս լինիլ, որ պատրաստում ենք որդուդ մեր քաղաքում պսակել իշխանազների ներկայութեամբ։

— Եթէ որդիս ուզենար պսակուել մեր քաղաքում, դժուար չէր հարմնացու ու արժանաւոր մակառներ ճարելը. բայց Փափագը չի յօժարւում այժմէն պսակուել, որովհետև մտադրուած ճամբէն պտի գնալ անխափան։

— Անխափան ինչպէս պտի գնալ, քանի որ երիտասարդներից ոչով չհամաձայնեց նրան ընկերանալ բարկացած հարցրեց թագաւորը, իսկ ես չեմ թողնիլ քաղաքից դուրս գայ մենակ։

— Իմ որդին այլ ես կարիք չունի այդպիսի պճնասէր իշխանազների, որոնց կերած հացն էլ ափսոս է, եթէ առանց երես պահելու խօսենք. Փափագը կըգնայ անշուշտ, արդէն ընկեր ունի և այն էլ ընտրեալ ընկեր։

— Ինչպէս թէ ընտրեալ ընկեր, զարմանքով հարցրեց թագաւորը աչքը նազիրին գցելով։

— Սուտ բան է, տէր թագաւոր, վրայ բերից նազիրը։

— Սուտ ոչինչ չկայ, աշխարհիս սոսկարը դու ես, գոչեց Փափագը, երեսով դեան չէմբում, կուռը մի կտրիչ երիտասարդի վզովը գցած։ Հէնց որ իշխանազները նկատեցին՝ «Խարազի տղէն է. անիրաւը որտեղից բռաւ, կարծես ականջն ի վեր կանչաց լինին», փսփսացին իրար մէջ և ահ ու դողով մէկ նաղիրին նայեցին, մէկ թագաւորին։ Դեռ ամենն էլ անակնկալ դէպքի վրայ ապշած, լռուած էին, Փափագը ցնծագին խօսից.

— Թագաւորն ապրած կենայ, մինչև հիմայ պատճառ էիր բերում, թէ ընկեր չունիմ, չեմ կարող Գը՛մբ-Գը՛մբ ձորը գնալ, այժմ ինչ արդեօք կայ, ինչ պտես ասիլ։

Հայրը մնացել էր պապանձուած, կարծես սրտում կռիւ մղելիս մի ինչ որ զգացմունքի հետ։

— Հայր իմ, այդքան լռելուց ետը անշուշտ մի հանգամանք ես առաջ բերելու որ խափանես. բայց լաւ իմանաս, որ հաստատ վճռել եմ ամեն փառքից ձեռ քաշել, ամեն պատուից զրկուել ու գնալ։ Կամ կմեռնեմ, կամ ողջ ետ կդառնամ։ Եւ հէնց այսօր պտեմ պատրաստուիլ ճամբայ ընկնելու։

— Շատ էլ լաւ կանես, որդի, խօսքին ոյժ տուեց թագուհին, այսքան ձայն ի վեր չպտէր լինիլ քո գնալը, բայց երբ ամեն տեղ

հաշակուեց, հարիւր կապ ու կշկուռի դէմ ընկաւ՝ նրանցից ետ թողելը ամօթ է։ Թէպէտ ծանր է մի մօր համար իւր միանգամից զբրկուելը, բայց առաջինը ես եմ ասում, որ թեզ պէտքն ամօթ է արդեքներից վհատուիլ, ընկճուիլը։ Առաջ արի իմ որդու ազատէն, քու անունն ու հանրաւը շատին զարհուրեցրել, շատին արմացրել են. իսկ ինձ պտի ուրախացնիլ։ Իմ որդուն քեզ եմ պահ տալիս, քեզ էլ Աստծուն։ Արի, Փափագ, ողջում ախպէրուլեան նշանը վեր դրէք։

Երկուսն էլ աջ թերթերունքից մի մազ պոկեցին տուին թագուհուն։ Թագուհին էլ իւր ծամից մի մազ պոկեց. երեքը միասին կոլսեց ու տուց։

— Այսօրուանից ես մէկի տեղ երկու որդի ունիմ, որոնք մէկ մէկու պտեն սիրիլ, ոնց որ իրանց անձը։ Այս մազերը իմ ձեռով թաղում եմ հողի տակ. երկուսիդ որը դաւաճանի այս սուրբ ուխտին ու բարեկամուլեանը խէթ նայի՝ ոչ արժանի լինի հող մտնելու, մազերից երկուսը տէր դառնան սրտումը ցցուին, իսկ միւսը պատան դառնայ և խեղդամահ անի ուխտապրուժին։ Քեզ, որդի, Փափագ անուանեցինք, որովհետև մեր փափագածը աշխարհիս վրայ մի տղայ զաւակ էր, այժմ չդիմա

նալով քու բուռն ցանկութեան՝ թողում եմ քեզ հեռանալ մայրական գրկից գուցէ անդարձ կերպով։ Բայց տեսնելով որ քու ուղղորդութեան մէջ խաւն է Աստծու ամենակարող մատը, որ նա է ուղարկել այս անձնուէր երիտասարդին հասարակ ժողովրդի միջից՝ ուստի անուանում եմ սրան Սպաւէն. միայն սրա անձնուիրութեանն ու խմաստութեանն եմ ապաւինում, որ քեզ հարազատ եղբայր դառնալով, ողջ կանի և ողջ կաշխատի վերադարձնել։ Հաւատացած եմ, որ Սպաւէնը ոչ մի ջանք չի խնայելու իւր անունն ու հռչակը պայծառ և անարատ պահելու, դու էլ աշխատիր վեհանձն լինել բոլոր գործառնութեանցդ մէջ և պարզ պահել ծնողիդ երեսը, որը քեզ աչքի լուսի պէս սիրելով, հարկաւոր տեղը չի խնայել իւր կծու խրատները։

— Խօսք եմ տալիս, մայր անպաւաճան ընկեր լինեմ, անպայման հնազանդեմ Սպաւէնի ամէն մի խորհրդին, ամէն մի պատուէրին, հատատա պիտենալով որ նա երբէք իմ վատը չի կամենալ։ Իրրև զրաւական ահա համբուրում եմ և ողջումպրէրութեան որբաղան ուխտը կնքում։

Մինչ սրանք գրկախառնուած համբուրում էին մէկ մէկու՝ թաղուհին էլ մօտեցաւ, ոկսեց

մայրական գորովով նայել մէկ սրան՝ մէկ նրան և առանց ձայն հանելու համբուրել երկուսի ճակատիցն էլ։ Ուզենար էլ, չէր կարող մի խօսք հանել բերանից. մինչև կոկորդը գրբնած էր։

Խարազի տղէն, որին սրանից զէնը Սպաւէն պտենք կանչել, կարծես երկինք էր վերացել ուրախութիւնից. իւր սրտում անասելի ուրախանում էր, որ իւր ընկերութիւնը այսքան թանգ է գնահատւում։

Սպաւէնի լոյս ընկնելով նազիրի սրտին մահացու նետ դիպաւ։ Արդէն նա իւր մէջ Փափագին փնտայ էր որոշել պրծել։ Այդ յուսով էլ աղջիկը պահում էր։ Տեսնելով իւր մտրի հիմնովին խորտակուիլը, Սպաւէնի վրայ այնպէս թթուած, կրգնուած էր երեսում, որ կաս-սես մաղձն ունքերից կաթում էր։ Միայն ինչ կանես, որ խորամանկ նազիրը դեռ յոյս ունէր, թէ ինքը անպատճառ կյաղթի, Սպաւէնի միտքն էլ կպտորի։ Ծեր ապուէան իւր հաշուում սխալուեց։ Սպաւէնը վաղուց նազիրի ճակատի վրայ կարդացել էր նրա սրտի միջինը, կերպիցն էլ հասկացել էր, թէ ինչ օձն է, աշխատում էր նրա թոռը չընկնել։

Թագաւորը մի անգամ էլ փարձ փորձեց խափանելու Գր՜մբ-Գր՜մբ ձորը գնալը, բայց

տեսնելով որ աղէն հակառակի ձին նստել է, վէր չի գալիս, թագուհին էլ միւս կողմից է բարբաջում և իւր խորհրդին ընդդէմ գնում ակամայ յօժարուեց։

— Թող գնայ։ Իւր աչքը դուրս կլայ, տրիշին վնաս չի լինիլ։

Ձամբի պաշարը արդէն կապած էր։ Թագաւորն ու թագուհին լալ աչքով ճամբու դրին Փափագին Սպաւէնի հետ։ Ժողովուրդը խռնուած հրապարակի ծայրում կանչեց։

— Բարով գնաք, բարով գաք, ամեն կողմից զտակները թափահարում էին օդում մինչև ոչխարմաղէրները աչքից ծածկուեցին։

Նպիրը կամենում էր ուղեկցել մինչև Մեծ-Սրբի տակ այն նպատակով, որ կարողանայ գլխից հանել, ճամբակիսից ետ բերել թագը, բայց Սպաւէնը պարտի դուռը մերժեց առերով.

— Աստծու վրայ յոյս դնողները կոմնակի մարդկանց օգնութեան կարօտ չեն։ Քու գալը դուր է։

Ժողովրդի մէջ շատ ցաւոտներ եղան, որ իրանց բարեսիրտ թագաւորացը անդարձ կորաւ, թագաւորական գահը թափուր է մնալու ծերունի թագաւորի մահից ետը։ Բայց թագուհին միանգամայն լիայոյս էր, որ որդին

վաղ թէ ուշ դառնալու է։ Այդ յուսով մխիթարում և մխիթարում էր մերձաւոր բարեկամներին։

Ը.

Երկու ոչխարմաղէրները բռնեցին այն ճամբէն, որ տանում էր Զրմ-զրմ գեղի աշխարհը։ Կանաչ տափաստաններին, սառն աղբիւրների, անտակ ձորերի վրայից անցնելով գէմ առան մի սրբի, ոչ ոսն էր բռնում, ոչ եղունգ, լռուած էր ինչպէս սատանի երես։ Մատնահան ու ձեռնահան լինելով Մեծ-Սրբը բարձրացան, որի ետևը գեղերի աշխարհն էր։ Առանց ժամակորոյս լինելու Սպաւէնը գագաթին մարդաշաւ հոր կտրեց և ասեց.

— Անգին Փափագ, հարկաւոր է նախ գնալ այս նոր աշխարհի տեղագրութեան ու բնակիչներին ծանօթանալ, վտանգները կշռել, ապա գործ սկսել։ Այսպէս մարդակեր գազաններ շատ կլինին. ապահով մնալու համար պտեռ մանիլ այս հորը և ոսպսիլ մինչև իմ գալը։

Փափագը յօժարուեց։ Ապաւէնը հորի բերանը տափակ քերծով ծածկեց, փոքր տեղ թողեց օդ մտնելու համար։

— Հը՛ ինձանից բեզ խրատ. բան է եղել տափը ժաժ գայ, չլինիմ, չիմանամ՝ որ վախենաս։

Այս ասելով հեռացաւ Ապաւէնը ու իջնելով սրանից՝ մտաւ հաստաբուն ծառերի ծմակը։ Կածանը երկու բաժանուեց չէր իմանում սկզբից որով գնայ։ Աջ կողմից ականջով զգաց, խօսխօսոց ընկաւ, այդ կածանը բռնեց, գնաց։ Առաջը բացուեց մի կալաչափ տեղ չորս բոլորը նստած էին եօթն կոշտ կռոճ մարդիկ իրենց կերպարանքով մամռակալած կաղնիներից չէին զանազանուում։ Ուղէր, չուզէր Ապաւէնը պտէր մօտենալ, աչքներովն էր ընկել։ Սրանց փորձելու համար՝ գնաց առաջները մնկուեց։ Քերծաչափ շնչաւորները սրան անհրեոյթ հոգի կարծելով երկիւղի մէջ պաշարուեցին։ Ինչ մտքերով կանցկացնէին որ մի ադամորդի երեսում այնքան վուշ ունենայ, որ սիրտ անի Զը՛մբ-զը՛մբ դեռերին երեայ ու տեղն ու տեղը չհալուի։ Դեռերի ծերը հէնց ուզեց տեղից շարժուել.

— Չշինիմ, չտեսնիմ մինը վերկենայ, ծղբրտաց Ապաւէնը ու ծղրտոցով բոլորի լերդ

ու թոքը ջուր կտրացրեց։ Ո՞վքեր էք, ինչ սրտի տէր էք, որ անտառը խարտյկ չինել կրակում էք։ Ո՞վ է ձեզ իրաւունք տուել։

— Մենք Գը՛մբ-զը՛մբ ձորի տէրերն ենք, պատասխանեց կաղ դեռը։ Իսկ դու գլխապատառ ադամորդի, ով ես, որ մեզնից իրաւունք ես հարցնում։

— Ե՞ս, ես, չես տեսնում, բարձրաձայնեց Ապաւէնն ու դմբուզը օդում թափ տուեց.

— Ես տեսնում եմ որ դու գլխապատառի մինն ես ու եկել ես կամ ծեծուելու կամ գլուխդ այս ծառերի տակ թողելու պատասխանեց Շիլ դեռը։

— Ինչ ինչ, դեռ համարձակում էլ ես, վրայ պրծաւ Ապաւէնը կաղ ու շիլ դեռերին մի մի դմբուզ հասցնելով, իրար վզով գցեց։ Ձեռը արճքճի պէս ծանր էր, պողատի պէս ամուր.

— Հաստագլուխ կաղնիք, հէնց իմանանք ձեր աշխարհումն եմ, մինիմ հիւրին այսպէս կընդունեն, այսպէս կըպատուեն, խրոխտաց Ապաւէնը։ Կրակի վրայ եօթն ունկնանի պղինձը դրած լցրում էր, անչափ չփոթուելուց դեռերը մոռացել էին կերակրի եփը.

— Դուք որ այդքան մեծարերան էք. անուններդ էլ դե էք դրել, ապա կրակի վրայից

մի ձեռով վերցրէք այդ պղինձը ու եւոյ հարցրէք իմ ով լինելը։

— Դրան դիմ պղինձ կասեն, ա՛յ մեծախօս ադամորդի, մնց կլինի մէնակ վեր բաշել, այն էլ կրակի վրայից. չէ՞ որ մէջը յիսուն կիստար կայ. ձեր աշխարհի պղնձները չիմանաս որ մի հաւով լցուում է։— Բայց էլի փորձեցէք վերցնելու, սրա լեզուի տակ չմնանք խարհարդ տուեց մեծ դեղը միւսներին։

Հերթով տեղներից վեր կացան, փորձեցին մէկով, փորձեցին երկրով, չեկաւ։

— Մնց տեսնում եմ, ասնագով խօսեց Ադաւէնը, վերջը եօթ հոգով պտէք վերցնիլ, որովհետև եօթն ունկն ունի։— Ա՜հ ձեր կապմուածքին ու ձեր կերպին ինչ ասեմ. այս խօսքում վրայ վազեց դեռերին հեռացրեց, ձեռը մեկնեց, խոխոր կալաւ պղինձը. որ գրըմփալէ վեր չգրեց, տափը հետը հետին ժամ եկաւ։ Դեռերը մնացին արմացած, ծիրանները կտրած. էլ միմնները կերել էին, որ առաջին ծպտանն ու ո՞վ լինելը հարցնեն։ Սկսան հա-հա քաշուել, ու ակնածութեամբ վրէն նայել։

— Ա՜խ, ինչ բազդաւոր կլինէինք, որ սա մեր փեսէն լիներ, ասում էին մարդերում։

— Ես ուզում էի Զը՜մբ-զը՜մբ դեռերին

տեսնել. նրանց կացարանը որ կողմն է, հարցրեց Ադաւէնը վոտահութեամբ։

— Մենք ենք քու ասած դեռերը, վախով ու ամօթով պատասխանեցին նրան։

— Դուք էք, հիասթափուած հարցրեց Ադաւէնը, մթթէ։

— Այո՛, մենք ենք, նուաստացած առաջ եկաւ ուրիշ դեռ, ինչ կլինէր քու ծառաների մօտ չնորհ բերես։

— Ի՞նչ կայ որ, ձեզ տեսնելուն տեսայ։

— Բարեհաճեա հիւր դալ մեր կացարանը, մեր ապարանը։

— Եւոյ՝ ձեր կոմ եկածներին, ասում են, կենդան չէք թողում։

— Քեզպէսների համար չի ասուած։ Մենք աւանդական սովորութիւն ունինք քաջերին պատուել ինչ ընկած տեղը խնայել. խակ եթէ քաջութեան հետ չնորհը, խելացիութիւն էլ ունենայ՝ նա կլինի մեր սրտնածը, որին կըյանձնենք Զը՜մբ-զը՜մբ ձորի մէջ ամենամեծարգին ընծան։

— Ի՞նչ է այդ ընծան, միամտաբար հարցրեց Ադաւէնը։

— Այդ ընծան, շարունակեց աւագ դեռը, այն էակներից մինն է, որ երբեմն հազուագիւտ մարդարիտ՝ աշխարհների կռուածագիին է, որի

պատճառով շատ թագեր ու գահեր են կործանուել։ Շատ ուժեղներ եկել են այդ մարգարիտը, որ մեր քոյրն է, տանելու, բայց պայմանները կատարելու մէջ անկարող լինելով, որոնք կոտորուել են, որոնք կապկապուել։

— Ի՞նչ են ձեր պայմանները։

— Այդ կիմացուի միայն իւր կատարման տեղը։ Քու բաղդից օրերումս մի երիտասարդ է գալու, որին երազում մեր քոյրը տեսել է, կարող ես նրա հետ մասնակցել մրցահանդէսին։

— Ուրեմն ես շուտ եմ եկել, կդնամ ու դարձեալ հետ կգամ այն երիտասարդի հետ։

— Մեր գլխի վրայ տեղ ունիս, հրամայեցէք երբ կամենաս։

Դեւերի ուղածն էր որ շուտ ազատուեն այդ սոսկալի մարդու ներկայութիւնից, շուտ իրանց բնակարանը հասնեն ու քրոջը մանրամաս հարցնեն, թէ իւր տեսած երիտասարդը ինչ հանգի, ինչ կերպի որմին էր։

Ապաւէնը դեւերին թողելուց հետը շտապեց ծմակն ի վեր, նապաստակի նման արագ հասաւ ողջումաղրօրը, փակը դէն շպրտելով հարցրեց։

— Արա Փաֆագ, մնց ես, դուրս արի տեսնեմ։

— Լաւ եմ, Ապաւէն ջան, թէպէտ շատ սպասել տուիր, բայց դու այն ասա, տղայ ես, թէ աղջիկ։

— Ես տղայ եմ, այն էլ տղամարդ տղայ, բայց դու էլ ասա, ինչու է քիթդ արիւնլուիկ։

Փափագը մատներով քիթը շփելով պատասխանեց.

— Ոչինչ, երեսի փուչ չանգռած կլինի։

Բայց ճիշտն այս էր, որ Ապաւէնի գնալուց հետը փափագը մտածմունքի անձնատուր լինելով նստել, քնել էր։ Երբ Ապաւէնը պղինձը վեր դրեց, չէ որ տափը ժաժ եկաւ, Փափագն էլ այդ միջոցին սաստիկ ցնցուեց, քիթը հորի պատին դիպաւ։

Ապաւէնը գիտէր այս, ուստի ժպտալով ասաց.

— Գնանք, մատաղ, գնանք, նեղ տեղը սրանից հետո է։ Գը՞մբ-գը՞մբ ձորը մեղմէս շատերն են եկել, բայց գլխակեր դեւերի ճանկից ոչով իւր տուն շահ չի տարել։ Յոյսդ դիր Աստծու հետ ընկերիդ վրայ և դու ուղածիդ կհասնես, մի վախիլ։

Համբուրեցին իրար ու իջան դէպի ձորը։ Ամեն մի սա փոխելիս տափը գըմբգըմբում էր և հեռու, շատ հեռու տարածւում ստնաձայն, ամենահասարակ շրբիկոց կամ հաղոց այնպիսի

ազմուկի էր փոխուում, որ ձորը դղրդմդրդում էր, գրգռմրգռմրում էր ու անտառի անկեղ բնակիչներին ոտի հանում; խրտնացնում, սարսափահար անում։ Ապաւէնը ուրախ էր, խօսում էր շարունակ. իսկ Փափագը լուռ, մտածոց հետեւում էր։

Ձամբին ինչ զարհուրելի տեսարաններ ասես որ չկային, ով ասես որ չէր եկել այդ արիւնկեր ձորը։ Անթիւ գանգեր ցցուած էին բերդերի բանջերին, երեւի նշանաւոր քաջերի էին պատկանում, ինչպէս մօտը թողած նշաններից երեւում էր։ Ինչքան զարհուրելի էր արիւնոտով այդ. ձորը, նոյնքան հրաշալի էր բուսականութեամբ ու գեղեցիկ վայրերով։ Սարալանջերն ու բլուրները՝ անցնողի երեսին ցնծին էին տալիս ու դրախտային բաղցրութիւնով նրա սրտի թախիծը փարատում։ Ծմակները խօ երանց խորութիւնով, վեհութիւնով և ամպամթամթաց կատարներով մարդու վրայ համ հիացք, համ ահ, համ բերկրանք էին ազդում։

Ողջումապրէրները հառան գեերի բնակարանին, որ բաղկացած էր շատ շէնքերից նրանց հարստութիւնը ամբարուած էր անմատչելի պնդոցների մէջ, որ կողքէ կողք փորուած էին բերդի լանջերում։ Գեերը աւանդական հիւրա-

սիրութիւնով քաղցր ընդունեցին եկուորներին և հետեւեալ օրը նրանց կիմացին այսպէս.

— Անշուշտ յայտնի նպատակի համար եկել էք ձեր բաղդը փորձելու։ Հերթով են կատարուելու պայմանները, արդեօք ձեզանից ո՞ն առաջ կուզի փորձել իւր բաղդը։ Եթէ բանը մեզ մնար՝ առանց դէս ու դէնի մեր քոյրը ձեզնից մէկին կտայինք, որովհետեւ անհամար երիտասարդների արիւն թափելուց յոգնել ենք։ Բայց նախնեաց պայմանները քանդել չենք կարող։

Նոյն բանը աւագ գեի հետ կրկնեցին Ճղռոտ, Քաջքոտ, Մայձոտ, Արնոտ գեերը, որոնց խօսելու ժամանակ կացարանը զըմբզըմբում էր։ Դրա պատճառով ուրիշ աշխարհներում այս գեերին ասում էին Զը՞մբ-զը՞մբ գեեր։

Փափագը պատկերով ընքոյշ էր, տարիքով մատաղ, սրա վրայ գեերի ատամը մազ էր մանում, բայց ապաւէնի երեսի փուշը, աչքերի հուրը տեսնելիս, մանաւանդ որ ձեռի ուժը փորձել էին, ահ քաշելով իրանց քաղցրութիւնը դրին ու այս առաջարկն արին.

— Եկէք մեզ լսէք, հրապարակ մի՛ք մտնիլ, մեղք էք, պայմանները դժուար բաներ են. թէպէտ մեր ձորը եկողը կենդան չի վերադար-

ձել, բայց ձեզ կենայենք ու ընծաներով ճամբու կդնենք, գնացէք ձեր աշխարհը։

Այս ասմունքի վրայ Ապաւէնը վիրաւորուած խօսեց.

— Ի՞նչ են ձեր պայմանները, առաջարկէք տեսնենք. ուժի բան է, թէ խելքի։

— Ե՛ւ այն և՛ այն, ասին գիւերը։

— Նրանից էլ կայ, նրանից էլ, պատասխանեց Ապաւէնը զուր մեղք մի՛ գալ, ասէք. երկսով կկատարենք ձեր պայմանները եթէ անկարող կլինենք, թող երկոսիս մահը միատեղ լինի այսպէս է մեր ուխտը։ Համաձայն էք։

— Համաձայն ենք, երկսով կատարեցէք։ Եթէ անշնորհը դուրս կգայ՝ մեր կամքից կախուած կլինի, որիդ կուզենք կոպանենք։

— Մենք էլ եթէ բոլոր պայմանները լրիւ կկատարենք, որը կուզենք՝ ձեր քրոջը կվերցնենք, զուր իրաւունք չունիք խառնուելու, պատասխանեց Ապաւէնը։

— Լաւ, դրան էլ համաձայն ենք, ասեց Աւագ գիւն ու դէպ քերծը կանչեց.

— Հատրատ։

Այս խօսքի վրայ մի խոյ դուրս պրծաւ, կեռ ու ոլոր պոզերով, բաջբատ աչքերով։

— Եթէ մի խոյ կբերէր, որ սրան յաղթի՝ մեր քոյրը ձերն է։

— Շատ բարի, պատասխանեց Ապաւէնը. Փափագի ականջում փսփսաց ու հեռացաւ թաքուն տեղ։ Իւր մօտ գտնուած խոյի վէգը բերանը դցեց ու կեռ ու մեռ պոզերով, շէջ-շէջ անելով Փափագի կողքին լոյս ընկաւ. վազեց Հատրատի ճակատի մէջտեղին խփեց պարան զցեց ու անյայտացաւ։

Հետևեալ օրը հարցրեց գիւերին էլ ինչ պայման ունիք, ասէք։

Ապաւէնը շատ լաւ գիտէր, որ Հատրատ խոյը կաղ գիւն էր կերպը փոխած, նրանից ետ մնացածները պտեն իրանց հնարները գործ դնել։

— Եթէ այնպէս եղջերու կբերէք, որ մեր եղջերուին յաղթի՝ ձեր տարածն է։

— Այդ էլ լաւ, ասեց Ապաւէնը։ Փափագ, սարերը եղջերուներով լիքն են, սպասիր դնամ մէկը գրկեմ, կբռնացրու։

Այս ասելով պախրի նշանը թաքուն բերանը դցեց ու պոզերը ոտի պէս կանգնացրած վազեց Փափագի մօտ։ Գիւերի եղջերուն սրան տեսնելուն պէս դողաց վախից պոչ արաւ։ Այն ինչ Փափագինն էր, ուրախ վշտալի տուեց հանդը և կերպը փոխեց։

Ապաւէնը գիտէր որ գիւերի քոյրը երեսով շէնքերից մէկում պտէր լինել միայն հատրատ

չէր իմանում որի մէջ։ Գդակի ծայից հանեց աղունակի թեը. լուսին նշանց տալու պէս ինքը դարձաւ աղունակ, թռթռալէ չէնքերը այս կողմ ականեց, այն կողմը նայեց, չկար ու չկար։ Վերջը նկատեց տեսաւ մի բարձրաբերձ չէնք տնկուած սարի քամակին, թռաւ որ այնտեղ հանգստանայ մինչև լոյս բացուելը։ Հանդէպի լուսամուտի վրայ թառ եկաւ և զարմանքն իրան կալաւ։ Երկու սպասուհիք դռների մղակում քնոտած, ներսը սեղանի վրայ աշխարհիս ամեն տեսակ կերակուրներ շարուած, գաների քոյրն էլ մի շաղթաթախ, լուսաթաթախ աղջիկ հանգիստ, խաղաղ բուն մտած։ Երկու վառ աշտանակներ, մինը գլխավերև, միւսը ոտի տակին։ Մաւ թէ չէ՝ թեը բերանից հանեց, իւր կերպն առաւ. բայց մի թոյլ արարածի մօտ քաջ և սրտոտ տեղովը մնաց կարկամած։ Դեռ հասաստ չէր իմանում, սա գաների քոյրն է, թէ ուրիշ աղջիկ է։ Անհոգի գաներից ու ամենի դաղանոներից իւր կեանքում այնքան չէր քաշուել, որքան այժմ, ցուրտ ջրի մէջ ընկած մարդու պէս ղընդը՛ռ-ղընդը՛ռ էր անում։ Չէ, տեսաւ որ սոված փորով շատ ոտի դողդոջալ՝ մօտեցաւ կերակուրները մին մին ճաշակեց։ Լուսադէմին աղջկանը անթարթ աչքով երկար նայելուց ետը, մօտեցաւ աշտանակները փո-

խոտեց ու ալոնակ դառնալով թռաւ։ Այն ժամանակ հասաւ որ Փափագին գցել են բրդով լիքն մի շտեմարան. պտի մի գիշերում բոլոր բուրդը գզել, մանել, կարպետ ու գորգեր գործել։ Թէ կատարեց, լաւ, թէ անկարող եղաւ, պտեն շլինքը տայ։ Փափագը կծիկը կորցրած պառաւի պէս մնայել էր մտքամոլոր կանգնած։ Ապաւէնն ուրախ ողջունեց ու շտեմարանի մի անկիւնը քաշուեց։ Փափագը մին էլ այն տեսաւ՝ թմփթմփալ, չալտրպուրիկ ոտքիններ ներս թափուեցին, շարուեցին երկար ու մէկ. բուրդը վեր ածեցին։ Որը գզեց, որը մանեց, որը թել դերկեց, որը գործեց։ Որձակը մէկ բերան չկտնչած, աւարտեցին գործածքը, դարսեցին ու անհետացան։

Առաւօտը կաղլիկ պիը եկաւ տեսնելու, թէ տղէն ինչ տեղն է շարչարում, բայց աչքի տեսածը երազ կարծելով մնաց պեղացած։ Փափագն ու Ապաւէնը գդակները գլխատակերը դրած քնել էին։ Կաղլիկը զարմանքից ծնկներին խուփելով եղբայրների մօտ հասաւ։

—Օրհնուին այն հոգն ու ջուրը, որ այսպէս քաջ ու հնարքալի ծնունդներ ունին։ Բա չէք տեսել, ամեն բան վերջացրել են անուշ քուն մտել։

Ամենքը զարմացան։

—Արժան է մեր քոյրը այդ տղերանց եթէ միւս պայմաններն էլ կատարեն։

Ապաւէնն ասեց, խնդրում եմ մնացող պայմանն էլ ասէք եթէ կայ։

Կայ, ի հարկէ, կայ, պատասխանեցին դևերը, և ուրիշ ահագին շտեմարան ցոյց տուին կորեկով ու աւազով լիքը։ Մի գիշերուայ մէջ պտէին իրարից ջոկել, տոպրակներ ածել և ջոկ-ջոկ դարսել Փափագը յուսահատելու վրայ էր Ապաւէնը քաջալերեց։

—Մի նեղանալ, գնա, նստիր շտեմարանում ես ամեն ինչ կկարգադրեմ։ Բան կայ, սատանի ձեռով պտի շինել, բան կայ՝ Աստծու։

Փափագը միամտուեց ու քնեց։ Ապաւէնը թև թևի քսելուն պէս մրջիմները սասսմի նման ներս թափուեցին, կորեկն աւազից ջոկելով, առանձին տոպրակներում տեղաւորեցին ու դեռ որձակը երկու բերան չկանչած աւարտեցին ու քիչ քիչ եղան։

Առաւօտեան ճաղատ դևը ներս մտաւ ու մնաց բերանը բաց։ Առանց նրանց զարմեցնելու ինքն իրան խօսեց։

—Ադամորդուց այսրան զարմանք լսուած չի, հալալ լինի սրանց իմ քոյրը իրանց մօր կաթի պէս։

Գնաց, տեսածը պատմեց դևերը կանչեցին ու ասին։

—Այ տղէրք, աստղերդ քաղցր է. պայմաններից մէկն է մնացել թէ այն էլ կատարէք, մեր քոյրն ձերն ու ձերը։ Մի օրուայ մէջ պտէք այս աշտարակից մինչև մեր քրոջ կացարանը այնպէս ուղիղ ճամբա շինել, որ ձուն այս ծայրում դնենք, այն ծայրից երևայ։

Այս վերջին առաջարկը ոչ թէ Փափագին այլ և Ապաւէնին դժուար ու անկարելի թուաց, որովհետև մէջտեղը մի ահագին ապառաժոտ լեռ կար։ Երկուսի վրայ էլ վհատութիւնը իւր թևերը փռել էր։ Փափագը սրտում լալիս էր, իսկ Ապաւէնը ափսոսում էր քաշաց նեղութիւնները. եթէ վերջին պայմանը չկատարէր՝ կամ դարդակ ետ պտէր դառնալ կամ յօժարակամ մահ ընդունել։ Խարազի տպի համար ամօթ էր այդքան նուաստանալ։ Վճռեց իւր ուժին ապաւինել, կալ-սկսել և դևերին կոտորել։ Դեռ այդ մտադրութիւնը Փափագին չասած՝ ուզեց վերջին անգամ դևերի քրոջ մօտ գնալ Ապաւէնի ազատակ դառնալու գաղտնիքին ոչ ով տեղակ չէր. միայն տղջիկը կարծիքի էր եկել, որ իւր բնակարանը մտնող կայ, կերակուրներն ուտում է, աշտանակները փոխելով գնում։ Աղջիկը զարմուն մնաց, որ եկողին անշուշտ

բունի։ Սուտ իրան քունն էր դրել, գիշերուայ ժամին նկատեց, որ լուսամուտով մի ալուճակ մտաւ, փոխուեց, դարձաւ երիտասարդ, նստեց կերակուրներից կերաւ, իւր կենացն էլ խմեց, աշտանակները փոխուեց, մօտեցաւ որ իրան համբուրի ու հեռանայ, աղջիկն անկոս վրայ թռաւ, երիտասարդին բռնեց ասեց։

— Օձն իւր պորտով, ծիտն իւր թեռով չեն կարողանում այստեղ կոխել, դու ինչ սրտի տէր ես, որ բարձրանում ես շարունակ ու այդ համարձակ բանն անում։

Ապաւէնը կանգնեց ու սրտակոտոր իւր դալու շարժառիթն ասեց։ Աղջիկը մնաց մտածման մէջ։ Նա լսել էր որ երկու հոգի իւր պատճառով գիերի ձեռին շարշարւում են։ և ամեն պայմանները կատարում են։ Սրտով ուզում էր դրանց միանգամ աչքով տեսնի, եղբայրներից ահ էր բաշում։ Այժմ չկիտէր ոնց շնորհակալ լինի դէպքից, որ բաղձանքն ինքն իրան կատարւում է։

— Ուրեմն դու ես այն երիտասարդը, որի բաջութեան, իմաստութեան վրայ աշխարհը զարմացած է։ Երեի տարերքները քեզ հետ բարեկամ են, որ այսքան ժամանակ կենդան ես մնացել Զր՝մը դր՝մը գիերի ձեռին։ Եթէ

սրտիդ մէջ վիշտ ունիս, ասա համարձակ, բան մի ծածկիր։

Ապաւէնը սիրտ առած խօսեց.

— Ո՞վ աշխարհների կառուցողիկ, որտեղից է երևում իմ քաջութիւնը. այսքան շարշարելուց հետ եղբայրներդ այնպէս պայման են առաջարկել, որ ստիպուած պտեմ լինել դատարկձեռով գնալ կամ ողջումաղբօրս հետ միասին կառնեն եղբայրներիդ դէմ ու անհաւասար կուռում մեռնել։ Արդէն վճռել եմ, բայց ողջումաղբօրս խնայում եմ. բացի այն որ թագաւորաղ է ու ծաղիկ հասակում, այլ և իւր մօր միանգամայ զաւակն է ու նրա ապաւէն կարգուած եմ ես իւր գորովագութ մօր կողմից։ Պատասխանատուութիւնս ծանր է, դրա համար մեզմ միջոց եմ փնտռում մինչև արիւնոտ վրճռիս դիմելը։

Աղջկայ սիրտը չարժուեց և այսպէս խօսեց.

— Դու ձեռովդ եկածը չես խնայել ողջումաղբօրդ համար, չես վնասել. այժմ էլ պատրաստ ես նրա համար կեանքդ զոհել։ Տար Աստուած ողջումաղբէրդ այդքան սիրու արժան լինէր։ Սիրտդ խակի էլ մի կոտրիլ, քեզ պէս անձնուէր ընկերի համար կեանքս չեմ խնայիլ։ Ինչ որ քեզ գժուարութիւն ու մտա-

տանջութիւն է պատճառում, ահա նրա ճարը։

Այս ասելով իւր ծամերից երկուսը դրեց է պոկեց.

— Սրանք կտանես կացնի բերանին կը-դնես սարին կխփես, տղառաջ քար էլ լինի, փուլ կգայ և կհարթուի։ Ապահով գնա ընկերիդ մօտ, նրա պատկերը չիշում եմ, ինձնից էլ բարև տար։

Ապաւէնը դարձաւ Փափագի մօտ, ապչկայ պատուէրով վերջին պայմանն էլ կատարուեց։

Դևերը ժողովի կանչեցին Ապաւէնին ու Փափագին.

— Ա՛յ պատուական ադամորդիք, մենք իստարելապէս հաւան ենք ձեզ և արժան ենք համարում մեր բոյրը ձեզ տալ։ Այն դլխից ասինք, որ սուրբ պարտականութիւն է մեզ համար բաջերին պատուել ու մեծարել. ձեզ հետ այլևս կռուաբան չունինք։ Ահա այն սարային իւր միջի անհուն հարստութիւնով մեր քրոջ բաժինքն է. մենք էլ մեր կողմից ընծաներ պտենք տալ։ Մեռում է որ որոշուի թէ ձեզանից ո՞ն է ուզելու, որ նրա վրայ նշենք. մի շաբաթ էլ հիւր պահենք մեր փեսային, նրանից ետ Ստուած ձեզ հետ. ճամբու կդնենք ձեր աշխարը։

Ապաւէնն այստեղ պատմեց Փափագի մանրամասն պատմութիւնը, թէ ով է և ինչ նպատակով է եկել, կամ ինքն այստեղ ինչ գործ ունի։ Դևերը սաստիկ մեծարեցին, երբ առաջներին տեսան Խարազի տղին, որի մասին շատ զրոյցներ էին լսել։ Մօտեցան, Փափագին հերթով ձեռ տուին բոլորը բարեկամացան, ետոյ խմբովին գնացին քրոջ մօտ։

Աւագ դևը կանչեց.

— Հուրհեր, դուրս եկ, զոյդ փեսացու են եկել քեզ ուզելու։ Մենք երկսին էլ հաւան ենք, մնում է քեզ որ նրանցից արժանաւորը ընտրես և իրրև նշան խոնարհութեան մազերդ նրա ոտի տակ փռես։

Ելաւ Հուրհերը, ամենին ողջունեց և սիրալիր հայեացքով Փափագին դիմեց.

— Իմ պատճառով շատ երիտասարդներ են զրկուել իրանց քաղցր արևից, շատ դահեր խորտակուել։ Ոչ մէկի վայելչութեան բաժին չեմ դառած։ Մինչև օրս կռուածաղիկ եմ եղել անուանս լսողների համար։ Կարելի է իմ մէջ արժանաւորութիւն գտնում են։ Չեմ գիտում այդ իմ դրսի գեղեցկութեան մէջ են սրանում, թէ անհուն հարստութեանս մէջ։ Իսկ ես ընկերիդ մէջ տեսնում եմ մի այնպիսի յատկութիւն, որ առաքինութիւնների պսակն է։ Իւր անձնուիրութիւնով յաղթել է ամեն արգելքնե-

րի և ինձ ձեռ բերելը յաջողեցրել, ինձ Զր՚մբ-զը՚ր գերի քրոջը։ Այս ըստ էիս քո ողջումաղ-բոր օրինակին եմ գերուած։ Տայ Աստուած որ դու էլ քու հերթում այդպէս վարուես, կեանքդ մահու առաջ անձնուէր ընկերի հա-մար։ Գրանով աշխարհը կհամոզուի, որ ող-ջումաղբէրութեան սուրբ ուխտ յարգողը, կա-րող է ամուսնութեան սրբազան ուխտն էնութ-բական պահել։

Այս խօսքերի վրայ Ապաւէնի սիրտը ճը-խաց, մխիթարուեց. մոռացաւ կրած նեղու-թիւնները, երբ իրօք համոզուեց թէ ինչ ար-ժանաւոր հարնացու ձեռք բերելու համար է եղել այդ ամենը։ Փափագն էլ միւս կողմից ուրախացաւ իւր մտքում ասելով, «այսպիսի խելօք աղջիկ մեր աշխարհը հարս տանելու համար արժէր այնքան ընդդիմութիւնը թէ հօրը թէ միւսներին»։ Առաջ եկաւ Փափագը և ասեց։

— Խօսք եմ տալիս ամենի առաջ, երախ-տագէտ լինեմ ողջումաղբօրս, որի օգնութիւ-նով արժանանում եմ քեզ։ Եթէ երախտամ-ութեան փոքր նշան ցոյց տամ, թող կա-տարուի գլխիս իմ մօր անէծքը, որ ամենա-սոսկալին եմ համարում աշխարհիս վրայ։

Հարսերը ուրախասիրտ երկար ծամերը

փռեց Փափագի ոտների առաջ։ Գեղերը բարձ-բաձայն շնորհաւորեցին նշանադրութիւնը։ Ապաւէնը ուրախութեան արտասուքն աչքերին մօտեցաւ Փափագի ճակատը համբուրեց, Հարս-հերի էլ ձեռքը և գնաց գեղերի հետ սեղան նստելու, իսկ նշանուածներին առաջնորդեցին գեղերի հին օջախը, նրանց պատերի կացարա-նը, որ այնտեղ եօթն օր անցկացնեն, ծանօ-թութեան իրար մինչև բաժինների զատրասելը, հանկների մէջ տեղաւորելը թէ ոսկի, թէ արծաթ և թէ ակնեղէն։ Այդպէս էր գեղերի սովորութիւնը։

Գ.

Հարսերի ձեռք խնդրողներ մինչև այդ օրը անթիւ էին եղել։ Գետի աւազին համբարք կար, նրա ուզողներին չէ։ Ով ասես, իւր բախտը փորձելու էր եկել այն ձորը, միշտ էլ յաղթուեր ու ետնջանքի մատնուել։ Երբ Ապաւէնը յաղթեց Զր՚մբ-զը՚մբ գեղերին ու Հարսե-րին արժանի արաւ Փափագին նրա առաջին զոհը եղաւ բոլոր կալանաւորներին ազատու-թիւն տալ։ Ձորի ամեն կողմը ժայռերում փա-

ռուածներ կային և անթիւ հոգիք թափած մեջ-
ները հանեց փականից, լաւ կերուխում սար-
քեց, մեծարեց ու արձակեց ասելով։

— Գնացէք ու խարազի տղին չմոռանաք,
որը ապաւինած է ընկերասիրութեան ու անձ-
նուիրութեան ամենազօրեղ ուժին։ Ո՞վ գիտէ,
փոփոխական աշխարհ է, ամեն ժամանակ մի
մարդու երեսի չի ծիծաղիլ։ Հաւատում եմ որ
արած լաւութիւնը չի կորչիլ։ կարելի է, մի օր
էլ ես ձեր օրումը լինիմ։ Գնացէք, Տէր
ընդ ձեզ։

Ազատուողները ամենքն էլ ընտրովի քա-
ջեր, հուժկու դեռ լինելով վերադարձան ի-
րանց հեռաւոր աշխարհները. ում հետ էլ բե-
ան էին բաց անում միշտ Խարազի տղի գովքն
էին անում ու նրա քաջութիւնը, անձնուիրու-
թիւնը ամեն տեղ պատմում։ Էլ որիրտ չկար,
որ նրան չկարօտէր, էլ աչք չկար, որ նրա
տեսութեան չփափագէր։ Ամենքն էլ ուզում
էին տեսնել, թէ ինչ նշանի, ինչ աստղի ա-
դամորդի է։

Դեռերը ամեն հնար գործ էին դնում Ապա-
ւէնին ուրախ պահելու։ Կերուխումից ետը զանա-
զան խաղեր էին սարքում, կռանթոտի տալիս.
քարգրդոնների չափ բուրթի էին շպրտում, որ
կռնների ոյժը փորձեն։ Հալի-հալի տալիս, լրդ-

ռանոց գնդերը ծուլ էին անում դէպի վեր, մի
կողմից գցածը միւս կողը շանթում էր։ Սա-
լերը շուտ լրացնող կողմը հակառակ կողմի
խաղացնողների ուսերին ձիավարի նստում էր.
բառակուսի կանգնում էին հրապարակում ու
գնդերը իրար վրայ գցում փոփոխակի և այդպէս
շարունակում մինչև էշը փալան անելը, այսինքն
գունդը վեր ընկնելուն պէս տակինները վերևին-
ների ուսերին բարձում էին ու նոյն կերպ
շարունակում խաղը։ Ճոխտուփանդի խաղալիս՝
Աստուած թափի, թէ ինչպէս էին ծռում երկսով
միւսների եռնից, քերծերի գլխով թռչում էին։
Այնպէս էլ կասկարանքի տալիս, երբ երեք հոգով
կալած էին լինում, ինչքան էլ մէրը հոկում էր,
դարձեալ թռչում նստում էին կասկարանքուած
դեռերի գլխին, մէջքին. գոյանում էր մի սա-
լաբլուր։ Ո՛ր կողմն ընկնում էր Ապաւէնը՝
միշտ այն կողմը շահ էր լինում, միշտ նրա
ընկերները յաղթում էին։ Խաղից ետը նետ ու
աղեղները առնում գնում էին որսի։ Դեռերը
դէս էին ընկնում, դէն, հարիւր քերծի վրայից,
հապալ ծառի տակից ծկրակում, հաղիւ աջողում
էր մի քանի որս անել, ջարդուած, կոտ-
ռատուած վերադառնալ, իսկ Ապաւէնը, տեսնում
էին, վերադառնում է որսատեղից ոչ թէ սպա-
նած որսերով, այլ կլեստաբ, բախրա, նապաստակ

կենդան ու ողջ առաջն տրած նախրի պես
բշում է, պահապան շների տեղ էլ երկու դայլ,
ականջներից բռնած կոնդոռնալով քաշ է տալիս։

Ամեն գիշեր խարույկներ էին վառում
տարերի դազաթներին, որ հերու տեղերում
իմանան, թէ Զը՞մբ-զը՞մբ գեները խրախճանքի
մէջ են։ Սարայի առաջ գերանաչափ անծխա-
կոթները իրար անելով, զօրեղ կրակ վառելով՝
որսերը պլոկում, խանձու, խորովու անում,
ուտում, խմում զուարճանում էին և Ապաւէնին
իրանց հետ կցում, որ եօթն օրը ձանձրալի
չերևայ։

Մինչ սրանք այսպէս էին՝ Փափագն ու
Հուրհերը շողոմբոր գառների նման իրար տես-
նում, իրար հետ խօսում, իրար պատկերի
նայում, իրար քաղցր առտով խնդում էին։
Փափագը խելօք էր, նրանից առաւել էր
ապջիկը, որն առանց երկար ուշ դնելու
անմեղ խաղերին՝ աւելի զբաղուած էր ուսկ-
ուորութեան պատրաստութիւններով. ամեն ինչ
ինքն էր անել տալիս, ինքն էր կարգադրում։
Փափագը ազատ էր ու մատնուած աւելի պա-
տրաստութեան, աչքերով հետևում էր Հուրհերի
հանդով աշխատելուն, ինքն էր կամենում էր
մասնակցել, նշանածը չէր թողնում ասելով.

— Մենք հիւրին սովոր ենք ծառայել,
ոչ թէ ծառայեցնել։

Քաղցը կերպով հրում էր և ուզարկում
զբօսնելու։

Հինգ օրն անցել էր Փափագի համար
երջանիկ ժամերով։ Վեցերորդ օրը Հուրհերը
գլուխը կախած զբաղուած էր. Փափագը նրան
չխանգարելու համար մտաւ գեների պապական
տունը, որ քառակուսի շինութիւն էր չորս
տալանով, չորս տալանով։ Այնքան մեծ էր, որ
մի պուճախիցն միւս պուճախը չէր երևում։
Փափագը հասաւ սեղներին և վրայի նախշերին
հետաքրքիր նայելիս՝ նկատեց մի փունջ բանալիք։
Տան արևելեան պատի մէջ մի դուռը կար.
ժամանակ անցկացնելու համար Փափագը կա-
մեցաւ այդ դուռը բանալ և խմանալ մէջը
ինչ կայ։ Զուզեց Հուրհերին բանից գցել, բա-
նալիները դռան վրայ փորձեց, ու քիչ միջոցից
հետը դուռը բացուեց։ Գատարկ սենեակ էր ու
միջով ուրիշ դուռը կար։ Հետաքրքրուեց այն
էլ բանալու, տեսնի մէջն ինչ կայ։ Նրա բաղդից
այդ էլ բացուեց, կրկին դարտակ էր ու դարցեալ
միջով ուրիշ դուռ։ Ինքն իրան մտածեց։

— Անպատճառ այստեղ մի հետաքրքիր
պահուստ է լինելու որ մինչև օրս Հուրհերը

ինձնից ծածուկ է պահել, շտապեմ մնացածն էլ բանալու, քանի որ զրպուած է։

Այնպէս իրարու հետից վեց դուռ բաց արեց, բոլորն էլ դադարկ։ Եօթներորդ սենեակից մի մռնչոց լսեց, որը Փափագի սիրտը լցրեց թէ երկիւղով և թէ անդուսպ հետաքրքրութիւնով։

— Բանամ տեսնեմ, սա ինչ կլինի, ասեց ու բանալին շարժեց։ Երբ դուռը բացուեց՝ Փափագին պաշարեց մի սարսափ և ոտից մինչև մազի ծայրը ցնցեց։

Ահագին զարբասի մէջ եօթ գլխանի մի զառամեալ դև, գլխները երկաթէ թոկերով կապկապած պուճախների հատ սիւներից։ Քերծաչափ դևը տափակուել դարձեալ էր ցամաքած կոճղ։ Հեռու դրած էր ջրի ահագին տաշտը, դևի պինչը չէր հասնում. ամիսներով ծարաւ էր, հէնց այդ էր նրան խեղճացրել, նիհարցրել։ Փափագին տեսնելու պէս՝ ագի ագի լաց եղաւ։

— Ա՜յ ազնիւ տղայ, թէ սիրուն արեգ կսիրես, ինձ մի պուտ ջուր տուր։ Մեղք արի զառամեալ հասակիս, եօթը տարի է այստեղ կապկապուած եմ։ Բաւական չէ որ արեւից զրկուած եմ, սին ջուրն էլ խնայում են. աչքիս առաջ տաշտը ջրով լիքն է, ես այստեղ ծարաւ պա-

պակում եմ։ Ինչ կլլինի այդ ջուրը մօտեցնես, խմեմ և քու արևն օրհնեմ։

Միամիտ փափագը հաւատաց Նրա կեղծ աղաչանքին, մի կերպ տաշտը մօտեցրեց առանց իմանալու, որ եթէ ջրշոր եղած դևը ջրից կշտանայ՝ կորած ոյժը ետ կգայ։ Դևը բոլոր ջուրը ծրծոքեց, ցամաքեցրեց տաշտը, ու որ մի չսկսեց ճլամկոտալն ու գլուխները թափահարելը—թոկերը գրնթալէ, գրնդալէ բաց ընկաւ։ Դևն արձակուեց, վրայ բերեց Փափագին էլ կնոջոր մի թաթաղոչ կպցրեց, գետին փռեց, դուրս եկաւ Հուրհերին շալակն առաւ, օր ցերեկով փախցրեց։

Դևերն ու Ապաւէնը միասին որսատեղ էին։ Հուրհերի ծղրտոցը ձորերը կալել էր, ոքմին չկար, որ օգնութիւն հասնէր։ Եօթը գլխանի դևը գնում էր իւր թանգագին բեռնով։ Սա գրաւուած Կոմբալ թագաւորի խոստումներով եկել էր որ կռուի բոլոր դևերի հետ և ուժով տանի։ Բայց Զրմբ-զրմբ դևերը կապկապել էին. ոչ ուտելիք էին տալիս, ոչ խմելիք. ջուրը հեռու գրել էին, որ աչքը տեսնի, սիրտը ցանկանայ, պինչը չհասնի, հալ ու մաշ լինի։ Նրա վրայ հրսկելը կաղ դևի պարտաւորութիւնն էր, որ շաբթական մի անգամ կալանաւորի քնած միջո-

ցին բաց էր անում տեսնում, էլ ետ փակում, բանալիները իւր ձեռով պահում։ Քրոջ նշանագրութեան դէպքը այնպէս ուշագրաւ էր արել բոլորին, որ զուարճութիւններով զբաղուած՝ գէն էլ էին մոռացել, բանալին էլ։ Որաստեղում կապ դէր մտաբերեց, որ բանալիները թողել է սիւնի ճակատին կախ։ Կասկած ընկաւ սիրտը.—չլինի՞ Փափագը քրոջը հարցնի, թէ սրանք ինչ բանալիներ են, քոյրն էլ միամտաբար ասի ու երկսով զժբաղտութեան պատահեն։ Այս մտմտուքից ետը խսկոյն քայլերն ուղղեց դէպի տուն առանց եղբայրներին իմացնելու։ Ա՜խ ու վիշ անելով հասաւ պապական սարայուն. բարձրացաւ տեսաւ ոչ քոյր կայ, ոչ վեսայ։ Ամօթից ու սարսափից թուրը կպաւ, սըփրտնեց։ Վազեց բանալիների մօտ—չկային։ Գոռգոռաց գոռըռաց—ոչով պատասխանող չեղաւ։ Իմացաւ բանն ինչումն է, վազեց բաց սենեակները և տեսաւ տաշտի կողքին Փափագը փռուած, բերանն արիւնլուիկ. դեռ սիրտը տրբփում էր։ Մինչև կապ դէր ջրի կվազէր, մինչև ուշի կբերէր, միւս դեռերն էլ հասան, թրմբթմբալէ ներս դառան։

Փափագը ուշի եկաւ, գլխին եկածը մին մին պատմեց ուր իրան յանցաւոր զգալով՝ մնաց պռընչած արիւն ծովումը։ Միտք էր անում

ինքն իրան և կշտելով իրան հասած զժբաղտութիւնը՝ բիչ էր մնում խելքը թռցնի.

Ապաւէնը երբ նկատեց, որ թաքուն աչկարայ դեռերը տրանջում են Փափագի դէմ, քիթքցից են թէ իրան և թէ ողջումապրօր հետ՝ սկսեց խիստ հայհոյանքով աչքերը խոժոռել նրանց վրայ։

— Ինչ էք նոմերնիդ կիտել, անտառներ, բաւական չի՞ որ սառ նստել, չէք ուզում տեղներից շարժուել. դեռ իրաւունք էք համարում թոնթորալու էլ։ Ձեր քոյրն է փախցրած, իմ հարսը. այս փորձանքի մէջ աւելի մեղաւոր էք դուք, որ ինձնից ծածկել էք ձեր վատնդաւոր գերին։ Ինչ եղել է, անցել է, մէկ մէկու վրայ մեղադրանք դցելն աւելորդ է։ Դուք, այդ է, փեշներդ թափ տուել, մի ձայնի ձեր քոյրն էք պահանջում, իսկ ես այն նամուսի տէրը չեմ, որ թողեմ հարսիս դն փախցնի, թէկուզ հօթ գլխի տեղ քսանհօթ ունենայ։ Ողջումապրօրս թողում եմ ձեզ մօտ դրաւ և գնում Հուրհերի ետնից մի ամիս ժամանակով։ Թէ բերի ժամանակին, մեր բաղտն է, թէ չբերի՝ նշանակում է, ես կենդան չեմ. ընկերիս արիւնը ձեզ հալալ։

Զը՜մբ զը՜մբ դեռերը համաձայնուեցին։ Ապաւէնը «մնաս բարև» ասեց նրանց, գնաց, իսկ

Փափագը մինչև ձորի բերանը մոկլոտալով, արտասունք չափելով հետն եկաւ։

— Ա՜խ, հառաչում էր նա, ինչ անբաղդ արարած դուրս եկայ։ Այնտեղ խեղճ ծնողաց աչքը արիւն արտասունքով լցրի, բաւական չէր կարծես այդ վիշտը, այստեղ աշխարհի ադամանդը իմ անմտութեամբ ձեռքս թռցնեցուց ետը, այժմ էլ քեզ եմ կորցնում անյոյս, Ապաւէն ջան։ Արդեօք արժի ինձ պէս տխմարի պատճառով այդքան նեղութիւն յանձն առնելը։ Առաւել լաւ չի՞ այս գետի ալիքներին կուր չինես ինձ ու անձդ նորանոր փորձանքների չենթարկես։

Ապաւէնը քաղցր ժպիտով գլուխը թափուեց ու սրտակոտոր Փափագին դարձաւ.

— Փա՛փագ, մի՞թէ այդքան է քու տղամարդութիւնը։ Ա՛յդ, Հուրհերին կորցնելը թեթև անպատուութիւն ես համարում, հա՞։ Ասենք թէ դու սրտիդ մորմոքից այդպէս ես խօսում բա՞ իմ ընկերասիրութեան նշանը ո՞րն է, թող անեմ Հուրհերի մաղը թերուի։ Չէ, մատաղ, ողջումախպէրդ դեռ կենդան է, յոյսդ մի կըտրիլ։ Մինչև ինձ մաս-մաս չանեն, աշխարհի չորս քամիների բերան տան՝ ես Հուրհերի հետը չեմ թողիլ. մինչև ինձ խաղահան չանեն, սանդի մէջ ածեն, չծեծեն՝ ընկերի պատուի հատուցումը մատհան անող չեմ։ Ետ դարձիր, մատաղ, ես մօրդ խօսք եմ տուել, կարմիր ուսպանկդ նա պիտի կապիլ, առանց Հուրհերի քեզ սրտակոտոր նրա երեսը ոնց տանեմ։ Ինձնից միամիտ կայ, ողջումաղբէրուվթեան Սատուածը զօրեղ է, նա անպատճառ ինձ օգնականներ կըհասցնի, որ գնամ, ուր էլ լինի, Հուրհերին բերեմ, որ գիշերը բունդ է կտրում, ցերեկը ոտներիդ թելը։

Երկու ողջումաղբերները իրար փաթթուեցին. Ապաւէնը թռաւ գետի այն կողմը, այն գնալն էր ինչ գնաց առանց լուսով ետ նայելու, իսկ անփորձ Փափագը բարձրացաւ մօտակայ ժայռի գլուխը, աչքն այնքան Ապաւէնի ճամբին կթեց, որ տեղն ու տեղը նստեց, քնեց։ Կաղ դիը, որ առանձին սէր էր զգում դէպի Փափագը՝ կարեկցելով նրան որոնեց ու մթնաժուռին քարափի գլխին գտնելով սիրտ տուեց, քաջալերեց ու տարաւ իւր օթեւանը։

Ժ.

Աստծու անունը տուած Ապաւէնը գնում էր բռնած ճամբով նա կարող էր լաւ ձի ճարել ու նստել, բայց խոնարհ էր, չէր ուզում երևացնի թէ ինքն ով է, դրա համար երկար ճամբէն մտադիր էր ոտով գնալ։

Հասաւ մի շոր երկիր. տեսաւ հանդում մի վարնորդ եօթ լուծ գոմէշ առաջին։ Գու մի ասիլ, առաւօտահայը ուշացրել են, սովից բարկացել, մաճը թոսել է ու դարսուած ճըմբները փլանչա-փլանչա կուլ է տալիս հացի տեղ։ Գուլթանը գոլթալէ ճգում գետինը ճըմբները կիտում են, բայց էլի վարնորդին վրայ չի հասցընում։ Ապաւէնը հետաքրքրութիւնից մօտեցաւ։

— Բարի աջողում, վարնորդ եղբայր. այդ ինչ զարմանալի շնորհ է, որ բանացնում ես, ցելի ճմբները հաւաքում ես, չես կշտանում։

— Աստծու անհատ բարին քեզ, խոնարհ տղայ. շնորհքն այս չի, որ կոպտաբար բանացնում ենք. շնորհքը Խաչալի տղին են ասում, որ ուժով ու խելքով Զը՞մբ-ը՞մբ գեղերին յաղթել է ու նրանց կռուծաղիկ բրոջն առել։

— Առել էլ է, տանուլ էլ է տուել. թէ

շնորհը ունի, թող այսուհետև բանացնի, աշխարհում ամօթով չմնայ։

— Ինչու, ինչ է պատահել, ինչպէս, հետաքրքիր հարցրեց Ճմբակուլը։

Ապաւէնը մէկ մէկ պատմեց։ Վարնորդը իմանալով թէ առաջն ով է կանգնած՝ կարեկից սրտով ասեց.

— Ինչ գիտէիր թէ բու պատկերին էլ կարօտ, անճնուէր տղայ։ Եթէ իմ շնորհքը քեզ պիտանի կարող է լինել՝ կեանքս քեզ մատաղ, գնանք, ուր ասես, ընկեր եմ։

Եւ եռոյ դիմեց գոլթանի ծկանողներին.

— Էյ գոլթանաւորներ, լաւ լսեցէք, մինչև իմ վերադարձը սարերի խոտը կուտէք, այս երեսով դաշտերը կը վարէք։ Եթէ ականջ չէք դնիլ կաշիներդ կմաշկեմ։

— Երբ որ առանց քեզ էլ գոլթանը կրանի, գնանք, ասեց Ապաւէնը մէկ չլինենք, երկու լինենք, բու շնորհքը անչուտ կհարկաւորի։

Ճամբայ ընկան։ Գնալիս ինչ պատահում էր՝ դաշտում, անտառում, թէ օդի մէջ՝ Ապաւէնը նետով վեր էր ածում ընկերին կերակրելու համար։ Բայց որսն այնքան առատ էր, որ շալակելուց Ճմբակուլի ուսերը ցաւում էր։ Տեղտեղ իջևանում էին, որսերը թեփրում, պլոկում,

կիսախորով, խանձուխորով անում, ուտում, կրկին ճամբէն շարունակում։

Ճմբակուլի աչքը լոյս էր եկել, այնքան կիստարի ու բախրի միս էր կերել։

Շատ սար ու ձոր անցնելուց հաը տեսան խոր ձորի մօտ՝ փոքրիվէր ընկած մի ածգահայ մոընշում է.

— Վայ ծարաւ մեռայ։

Դու մի ասիլ այդ ձորի տեղը ծով է եղել, միջի բոլոր ջուրը խմել է և դեռ ծարաւ է։ Մօտ որ գնացին Ապաւէնն ասեց։

— Պա քու տունը չծակուի, այդ ինչ շնորհի տէր ես, որ տարած ծովը մրզոքել ես ու դեռ աչքդ ջրումն է։

Ծովակուլը պատասխանեց.

— Է՞, օտար եղբայր, իմ արածը ինչ շնորհք է Խարազի տղի մօտ։ Շնորհրովն այն անաչէնն էր, որ Զը՞մբ-զը՞մբ գեերին ճաըմեռել յաղթել է ու կռուածաղիկ Հուրհերին տիրացել։ Ես ինչ մարդահաշիւ եմ նրա կշռին։

— Նա տիրացաւ, բայց խլողն էլ խլե՞ց. թէ շնորհք ունի, սրանից հաը թող երևացնի, խօսեց Ապաւէնը։

— Ո՞նց, ինչպէս, այդ ինչ ես ասում, հետաքրքրութեամբ հարցրեց Ծովակուլը։

— Բա՛, ինչ կասես, Ծովակուլ եղբայր,

այսպէս, այսպէս, Ապաւէնի տեղ պատասխանեց Ճմբակուլը, գովական Խարազի տղէն սա է և Հուրհերի ետնից է գնում։

— Վայ դրա արևին մատաղ, վեր թռաւ Ծովակուլը. թէկուզ ջրշոր եղած լինիմ՝ դրա սիրու համար աշխարհ տակն ու վրայ կանեմ, որ դրա անձնուիրութիւնը փառքով պսակուի։ Գնանք, ես էլ եմ գալիս, երկու չլինենք, երեք լինենք։

Ընկերացան ու գնացին։

Ճամբին ինչ որս պատահում էր՝ պրծնում չկար. Ապաւէնը նշնուկի տալով թրմփացնում էր, Ճմբակուլն էլ նայում չէր, սոված ժամանակ բերանն էր տալիս թռչունը փետուրներով, կլոտարը պճեկներով, պոուղները կորիզներով շատ անգամ էլ ոստերով, տերևներով։ Ծովակուլի տունն էլ այնտեղ չինուի, ինչտեղ առու կամ ջրի հետք էր տեսնում, վազում էր ակը գտնում, խմում, ցամաքեցնում։

Մի խօսքով որանց անցկացած տեղերում էլ շնչաւոր չը մնաց, ահի ու ծարաւի ձեռից գլուխ առան, կորան։ Ման գալիս տաքը նրանց ոտների տակ դողում էր. գոռում գոչիւնով սար ու քար որոտ որոտ էին դցել։

Շատ, քիչ գնալը Աստուած գիտէ, դէմ եկան մի լեռնաշղթայի. այդ էլ գլխավերևով

մտան մի ձոր, տեսան մի գետ վրակալէ գնալիս։ Ամէն ապ տերևախիտ ծառեր ու փուժիխիկ թփեր։ Սչ ափին կանաչ տեղում մի ադամորդի նստած մի բանի վրայ ածում է։ Բայց ածելը այնքան հրաշալի է, այնքան գիւրալի է, կասես հրեշտակի բերանից բղխելիս։ Հեռուից լսողը չի իմանում ինչից է գուրս գալիս այդ ձայնը։ Մէկ կարծում է, թէ տաւիղ է, մէկ էլ յանկարծ մրմնջում է դղրդացնում, բիչ կացած քաղցրաձայն քնարի է փոխուում, հաց բամբ ու նուագ լսում գործիքի ծոցից, կարծես բամբիւռ ու նուագարան էլ մէջն ունենար։ Ածողը ամեն մի եղանակ առանձին, թէ միասին՝ իրար ծոր բռնելով այնպէս ճարտար հիւսում էր, որ հողածնի ստը երկրից կարում երկինք էր վերացնում։ Այդ էր պատճառը, որ աշխարհիս երգասէր թռչունները հաւաքուել էին այդ ձորը, ճլուզուել ծառերի վրայ։ Ճղներն ու ոստերը այնպէս էին զարդարուել թռչունների նախշուն փետուրներով, որ էլ կանաչ տերև չէր երևում։ Թռչունների այդ ծանրաբեռնուած տակ բոլոր բուսեղէններն առհասարակ ճռրխել, կռացել էին, տափից կպել։

Ածողը տեսնելով Ապաւէնին ու ընկերներին աւելի ոգևորուեց ու սկսեց բոլոր շնորհը ցոյց տալ. երգել ու ածել, ածել ու երգել։ Երգելու

ու ածելու թմբուկ ժամանակ բոլոր ծառերն ու բուսեղէնը սկսան պարելով պտտել ածողի գլխով։ Թռչուններն էլ խելքամաղ եղած, գոգտրիկ կտուցները երկարացրած, կլափները կիսաբաց դամ էին պահում երգին ուրախ մնչելով, ծլվլալով, կկլկլալով ու բուսեղէնների հետ պտտելով։

Այս զարմանքը տեսնելով՝ Ծովակուն իւր ծարաւը մոռացաւ, Ձմրակուն իւր քաղցը. տեղն ու տեղը ականջ դարձած՝ մնացին բերանները բաց, իսկ Ապաւէնը հիացումով ասեց.

Ապրես երգիչ, դու էլ, քու շնորհքդ էլ։ Ուխտայ ձայնիդ մատաղ. Արարիչը քեզ մէկ է ստեղծել, բայց եօթ շնորհքը միասին պարգևել, որ համ լացացնես, համ ուրախացնես, համ խորովես, համ ոգեւորես, համ զարհուրեցնես, համ հիացնես, համ երկինք տանես Աստծուն ի տես։ Կատարեալ շնորհքը դա է. Աստուած կեանքդ երկար անի։

Ածողը գաղարեց ու շնորհունակ Ապաւէնին այսպէս պատասխան տուեց.

— Է՜, եղբայր, դու զմայլուած ես իմ շնորհքով, որն անպէս եղաւ սրտիս փափագը կատարուելու և Հուրհերին ձեռք բերելու։ Սա ինչ շնորհք է, որ զարմանում ես. շնորհք Խարազի տղին է, որ Զը՜մբ-զը՜մբ գեղերին

յաղթեց ու աշխարհս կռուածաղիկին արժանացաւ. Միակ խնդիրս Աստծուց այն է, որ մի անգամ նրա երեսը տեսնեմ մի անգամ երգելուս ու ածելուս ձայնը նրա ականջը դցեմ, ետոյ որ մեռնեմ սրտումս դարդ չի մնալ։

— Երգիչ եղբայր, ինչ դիտես թէ Խարազի տղէն այսօր ինչ նեղ օրումն է, քու ածելուն է կարօտ, որ տխուր սիրտը բացուի, ունեցած կսկծից սփոփանք գտնի։ Բայց աշխարհի բանին տես, որ քեզ հետ շատ շատերը նրան են երանի տալիս ու նրա բաղդին նախանձում։

Այս խօսքում Ծովակուլն ու Ճմբակուլը մաղուած խելքները հաւաքեցին ու ածողին մօտանալով ասին.

Բա ասիլ չես, քու սրտի ուղածը հէնց սա է որ կայ։

Երգիչը ցնծագին բարևեց, երեքին էլ իւր մօտ մարգարէտնի ընթոյչ խոտերի վրայ նստացրեց, որ նրանց սիրու համար համ ածեց, համ երգեց։ Սրանց ուշադրութեան պատճառը իմացաւ թէ չէ՝

— Իմ կեանքն ու շնորհն Խարազի տղի պէս անձնուէր ընկերին մատաղ է, ասեց, մինչև Հուրհերին գտնելը սուրը պարտքս լինի ածել ու երգել, որ տխրութեան ամպերը չը

համարձակուեն քաջի ճակատի վրայ բազմել։ Թէպէտ իմ հեռանալով այսքան արարածներն ու բուսեղէնները կիսամահ են լինելու, բայց փոյթ չի. թող դրանք էլ իրանց զուարճութիւնը գոհ բերեն ամենամեծ քաջին։ Գնանք, երեք չլինէք, չորս լինենք։

Միայնն ու ճամբէն երգով, խնդումով շարունակեցին։ Շատ գնացին, թէ բիչ Աստուած գիտէ, տեսան կաղնու չափ հսկայ մարդ, լոշտակ ականջը դրել է տափին, տաղ արել։

— Այ մարդ, բարի աջողում, այդ ինչ ես անում։

— Սուս կացէք, նոր նոր համբաւներ կան, զարբուռցը շատ է, ջոկում չեմ ինչ են ասում։

— Պա՜, ինչ շնորհը է, ամեն տեղից, ամեն գործից տեղեկութիւն ունիս, նախանձում եմ քեզ, ասեց Ծովակուլը։

— Է՜ եղբայր, սուր լսողութիւն ունենալ ինչ մեծ բան է որ։ Գովասանքի արժանին Խարազի տղէն է, որ մօտ ժամանակս եօթ աժդահայ դևերի քոյրը ձեռ բերեց, Նրա վրայ պտի զարմանալ, թէ չէ ես ինչ։

— Ականջով եղբայր, տխրագէմ խօսեց Աղաւէնը, Խարազի տղէն ես ասում, այդ ես եմ։ Հուրհերը ձեռ գցեցի, ուզիլ է, բայց

ինչպէս է որ չես լսել նրա փախցնելը։ Գործը այս դրութեան մէջ է, մենք գնում ենք նրան գտնելու. թէ շնորհքդ բանացնելու ախորժակ ունիս, դու էլ արի։

— Խի չեմ գալ, քեզ մատաղ, շարս չլինէր, հինգ լինենք։

Առաջ եկան մտան մի աշխարհ, տեսան մի երէց, հօթը գիպ է հոլում, այնքան որտացաւ. այնքան բարեսիրտ է, որ չի լծողում ժողովուրդը ոչ մի օր անժամ մնայ։ Մի տեղ ժամը վերջացնելուց ետը գեղի եկեղեցին շալակում է, գոտով տանում միւս գեղերը մարդ ածում, ժամ ասում ու էլ ետ շալակած բերում իւր տեղը դնում։ Խարազի տղէն տեսաւ թէ չէ՝

— Փառոց կենաս, տէրտէր ջան, ասեց, համա ուժով ես հա՜, կարգի ու պատարագի լինես, երբ որ այդքան շնորհքով ես։

— Ա՜յ որդի, թէ ուժից ես խօսում, Խարազի տղի անունը տուր, որ հօթ թագաւորի հոգում նրա գովքն են անում։ Ես ինչ եմ նրա կշտին. ափսոս հողը մինն է ծնել. նրա մայրը հօթը պտէր բերել, լաւ լինէր։

— Աստծու փառքը շատ լինի, տէրտէր ջան. երբ ես լսել, որ քաջ հերոսը հեշտ հոգով իւր փափագին հասնի ու վայելի։ Խարազի տղին շատ կարելի է գովում ես որովհետև

Հուրհերին առաւ, բայց տանողն էլ տարաւ։ Այժմ Խարազի տղէն ինձ պէս գլուխը փէշում դրած երկրէ երկիր մարդ է գալիս, որ Զը՜մբ-զը՜մբ դեռի քրոջը գտնի։

— Օրհնեալ լինի նրա ծնունդը, ուր էր թէ էլ գար, գովական պատկերը տեսնէինք ու դարդին մի ճար անէինք։

— Քու ուզածը հինգ հոգուս մէջն է, ա տէր. թէ կարենաս ճանաչել. հարցրեց ծմրակուլը։

— Հոգին սուրբը վկայում է, որ խօսակիցս պտի լինիլ։ Զարմանալի էլ չի Աստուած շնորհքները խոնարհներին է տալիս. բայց ոնց տեսնում եմ՝ սիրտը շատ կոտրած է։ Օրհնեալ լինիք, որ ընկերացել էք մխիթարելու համար։ Բայց դուք որ քաջին, արժանաւորին գնահատել գիտէք, հէնց ես եմ ալարկոտը։ Գնանք. հինգ չլինէք, վեց լինենք։

— Տէրտէր ջան, հեռու ճամբայ ենք գնում, արի ժամ ասա. ժամի կարօտ չըմնանք, խնդրեցին ուղևորները։

— Ա՜յ որդիք, դուք ժամ մտէք. ինչու էք ժամի կարօտելու, տէրտէրն էլ է ձեզ հետ գալիս, ժամն էլ պատարագն էլ։

Ներս մտան թէ չէ, Տէրտէրը գոտիկը պատ տուեց ժամի չորս կողմով, շալակն առաւ

ու «Տէր, ուղղեա զգնացս մեր»... ասելով ճամբայ ընկաւ վարար ջրի պէս։

ԺԱ.

Ժամասէր երէցը աղօթք ասելով գնում էր. Ականջեղը յանկարծ դուռաց.

— Ա՜յ երէց, կանգնիր, ականջս ժժժում դըռդռում է, այս մօտիկ տեղը մի բանից։ Տէրտէրը կանգնեց, Ականջեղը տափից կպաւ ու բղղալէ վեր թռաւ.

— Մօտիկ քաղաքում մեծ իրարանցում կայ. հարսանիքի պատրաստութիւն են տեսնում. գնանք։

Այս լսելով ամենքն էլ շտապեցին, վռազ-վռազ հասան քաղաքը։ Ժողովուրդը խլխլում էր դատարկ ոտնատեղ չկար փողոցում։ Ապաւէնն ու ընկերները հնար չգըտան քաղաք մտնելու։ Քաղաքից դուրս մի խրճթի մօտ ոտն եկան։ Նրանց կանչին մի պառաւ դուրս եկաւ.

— Ա՜յ նանի, այս ինչ խարար է, ձեր քաղաքը միշտ այսպէս լիքն է լինում։

— Դուք ո՞րտեղացի էք, որ խարար չէք։

Եօթ գլխանի գիը մեր թագաւորի համար Հուրհեր աղջկանը բերել է. քանի տարի էր հա, որ գնացել էր։ Հիմի նրա հարսանիքն է։

— Բաշխի մեզ, նանի, օտարական ենք, տեղեկութիւն չունինք. միայն մի խնդիր ունինք, թէ կարելի կլինի, մեզ այս գիշեր օթևանելու տեղ տուր, առաւօտանց գնալու ենք։

Ապաւէնը նկատեց, որ պառաւը չեմ ու չում անելով ուզում է գլխից ցանի խլոյն մի բունակ փող պառաւի գոգն ածեց։ Պառաւն այդ տուրքի վրայ կակղեց, առաջ գնաց թինեերից կախ եկաւ.

— Օտար եղբայրներ, բարի, հազար բարի, իմ գլխի վրայ էք, եկել հիւրն Աստծունն է, ինչու չեմ ընդունիլ, տունն էլ է ձերը, դուռն էլ։

Ճամբորդները պառաւի հրաւէրով ներս մտան հանգստանալու, իսկ տէրտէրը իւր շալակը վէր դրած՝ աղօթում էր գործի աջողութեան համար։ Մթնելու վրայ էր, թագաւորի սպասաւորները թաղէթաղ, տնէտուն ընկած բոլորին իմաց էին անում՝ պալատը հարսանիք գնալու։ Մինն էլ եկաւ խրճիթը պառաւին հրաւիրելու.

— Գնա, ասա, կարող չեմ տանից հեռանալ, հուրեր ունիմ, շատ չնորհակալ եմ.

Կանչով սպառաւորը գնաց, յայտնեց, որ պառաւը չի գալիս, նրա տանը հիւրեր կան այս ու այն նշանի։

Պալատում հետաքրքրուեցին թէ այդպէս մարդիկ ինչու պտեն պառաւի տան վէր գալ. կասկած տարան նրանց վրա, որ չհաւէտ մարդիկ չպտեն լինիլ։ Պալատականներից մի քանիսը հարկաւոր համարեցին դրանց սպանել, ոչնչացնել։ Բայց այդ միջոցին աշկարայ կռիւ սկսելը անյարմար էին տեսնում, մտածեցին խաբէութիւնով մահացնել այդ կասկածելի մարդկանց։ Կրկին որմին ուղարկեցին պառաւի տուն թէ՝ թագաւորը խնդրում է քս հիւրերով համեցէք. իմ ուրախութեան մէջ աղքատն ու օտարականը աւելի պատուաւոր տեղ ունին։

Այդ ժամանակ Ականջեղը մտել էր ժամը, շրջել ականջը տափին դրել։ Ի՞նչ էր լսում. պալատականները թագաւորի հետ խորհուրդ էին անում, որ վեց բաժինների մէջ թոյն խառնեն. օտարական հիւրերը ուտեն թէ չէ մէջներից ճարեն։

Ականջեղն այս ամենը յայտնեց Ապաւէնին, սա էլ պառաւին ասեց որ համաձայն են իրանք էլ հարսանիք գնալու։ Սպասաւորը լուր տարաւ որ գալիս են, իսկ Ապաւէնն ու ընկերները ժամում տէրտէրի կշտին խորհուրդ

արին, կարգադրեցին, թէ ոմ ինչ պտի անել թագաւորի սուփրի վրայ. այսպէս պատրաստուած գնացին պալատ։ Թագաւորն ինքը դիմաւորեց ու պատուով ընդունելով՝ պատուիրեց սեղանի կառավարչին, որ արժանաւոր տեղը բաղմեցնեն նորեկ հիւրերին. ուտելիք խմելիքն էլ լիառատ անեն։

Պատուէրը ճշտութեամբ կատարուեց։ Երբ սեղանը պատրաստ էր, ամենքը նստած էին ու կամենում էին հաց կտրել՝ երգիչը գործիքը ձեռն առաւ, սկսեց ածել։ Բաղմականները ձեռները հացից ու կերակրից ետ քաշեցին։ Խելքամաղ եղած լսում էին. հէնց իմանում էին թէ հրեշտակները իրանց թմբռացնելով տանում են երկինք։ Երբ ածելու հետ երգելն էլ սկսեց անհնարաւոր կերպով սեղանը ժամ ընկաւ տեղից ու վրայի բաժիններով սկսեց պտտուել։ Երբ թունաւոր բաժիններն անցան թագաւորի, նազիրի, պալատականների առաջ՝ երգիչը լռեց։ Երգեցողութիւնով հիացած ժողովուրդը ծափ տուեց, շնորհակալութիւն արեց երգչին ի ձեռ մեկնեց կերակրի, հացի։ Ոչ ով էլ չէր նկատել թէ սուփրի մէջ ինչ փոփոխութիւն է եղել։

Ճմրակուլը դեռ ըզգուլը չէր լցրել՝ թագաւորի ու մօտիկ մարդկերանց փորի ցաւը

բռնեց։ Դեղնակոմեցին, սփարթեցին։ Զէին կարողանում տեղները հանգիստ նստել. բղկում, գկրտում էին, բայց բղկոցով ու գկրտոցով օգնութիւն չէր լինում։ Պալատականները թագաւորին ու միւսներին փարուելէր գնեցին ու մէջքները կոխ տուին, բիծները հաղարեցին, ականջներից ձգձգեցին—ճար ու հնար չեղաւ։ Թագաւորն ու ընկերները աչքները պարանեցին ու քաշեցին հանդերձեալ աշխարհը։ Ժողովուրդը մնաց արիւնպարտ. որն ասեց. սա տեսիլք էր, որը թէ՝ Տէր իները յօժար չէր այս պակին, որը թէ՝ Հուրհեր հարսնացուի մեղքիցն է, որ մի սենեակում փակուած արիւն արտասուք է թափում։

Սուփրի վրայ ինչ որ հաց ու մաց կար՝ Ճմբակուլը ածեց ըռեխը մի բլղուղ չինեց. Ծովակուլն էլ ինչ որ ջուր ու գինի կար՝ մի կում արեց, պրծաւ։ Եօթ գլխանի գեր վազեց տաշտերով հաց կարասներով գինի խոտած բերեց։

— Այդ ինչ բանի ես, մենք հանարի գլուխ չունինք, այսօր մեզ համ հարսանիքի ճաշ պտէք տալ, համ հոգեհաց, խելքդ որտեղ է։ Գնա, հացի պատրաստութիւն տես, սրանցով բան չի դառնալ, ասեց ճմբակուլն ու տաշտերը դարդակեց.

Պա՛, բու դուրս եկած աշխարհը խորտակուի, այս ինչ տեսանք, խօսեցին զարմացած բազմականները։

Ծովակուլն էլ կարասները գլխին քաշելով, մինչև տակները ծրծոքեց ու գէն շպրտելով՝

— Այս ինչ անշնորհ պուլիներ են, կատիկս էլ չեն թրջում. սրանց վարպետը որ մի քիչ մեծաւուն էր չինել, վախենում էր լինահնոցը հատնի։

— Պա՛, բու գինոս տունն էլ այդտեղ քանդուի, ասին նատոցներն ու խօսք մին արած գդակները վերցրին՝

— Տէրը փախչենք, թէ չէ մեզ էլ են ուտելու։

Ցրուեցին ահից սարերը։ Պաշար էին ուզում Ճմբակուլն ու Ծովակուլը—ուշ դարձնող չկար։ Ասաւէնը որ մինչև այդ ժամանակ բացակայ էր՝ ներս եկաւ, կանչեց եօթ գլխանի գեին ու շրջնարակոմում որ մի չհիւանց, Տէրը Աստուած, ինչ գրնդոց էր որ բարձրացաւ. կասես երկինք գետինք ժամ եկան։

— Քու ինչ ըռեխդ է Զը՛մբ-զը՛մբ գեերի քրօջը փախցնել Խարապի տղի ձեռից, երբ շնորհը չունիս նրա ընկերների ուտելիքն էլ հասցնել։

Եօթգլխանին քաւթաւել էր՝ գեա իւր գրում այդպիսի գմբուղ, այդպէս գօրեղ կռան

հարուած չէր կերել։ Էլ չիմացաւ, արճիճ էր, պոչաւոր էր, որ դիպչելուն պէս աչքերը սեւացաւ ու տափէն կպաւ։ Շատ կմնար վէր ընկած, բայց հէնց որ Ապաւէնը ծղրտաց՝ «շուտ արա, լմէ, չէ մէկէլ որ խփեմ, կկորչես խոտիպուճախը» կէր վեր կացաւ ու ապիսպսրմ դիմեց ժողովրդին.

— Ով որ թագաւորին սիրում էր ու ինձ էլ նրա հաւատարիմ ծառային մեղք է գալիս՝ թող գնայ իր տանից որքան կարող է ուտելիք ու խմելիք բերի։

Այս ասաչանքի վրայ ժողովուած մարդիկ ցրուեցին ու տներից խոնջով խուրջինով, մաթրախով ուտելիք, բոզապով, հսլմով, պուլիով, կժով խմելիք բերին, առաջներդ շարեցին։ Ճմբակուլը խժռեց, Ծովակուլն էլ սրդրեց։ Տնաշէնների փորը հոր էր, ձոր էր, չէր լցւում. մինը մնացած փշրանքներն էր հաւաքում, միւսը պուլկրների պռունկներն էր լիզում։ Կեր մնացել էր կրակի մէջ, ինքն իրան մտածում էր.

— Թագաւորն այն էր, որ մեռաւ. հարսն այս է, սրանց ձեռքին է, իմ օգուտն ինչ է, որ պատուհասը բաշում եմ։ Մտածեց որ գլուխը կենդան սրանց ձեռից պրծացնի, ամենից լաւ է։ Ոչ քաղաքում էր պաշար մնացել, ոչ

մոտակայ գիւղերում. երեք օրում վից հոգին բոլորը հատացրել էին։ Խժռողների մեծ մասը Ծովակուլն ու Ճմբակուլն էին։ Մնացել էր միայն մի գիւղ գետի ափի կողմում, որի ամբարները անարատ մնացել էին։ Բայց ինչ կանեն, վարար ջուրը արիւն էր բերում։ Ո՞վ սիրտ կանէր գժժոն գետի մէջ մտնել, որ սար ու քոլ պոկած, ծառ ու քար իւրար գլխի տալով, ելկոլս անելով ճռընչելով սլկում էր։ Ինչ անեն, ինչ չանեն, բերին եօթ գլխանի գեղին գցեցին մէջը։ Սա տակն արեց ու չերևաց։ Կարծելով որ ներքև դուրս եկած կլինի, Ապաւէնը ընկերներով երկար սպասեց նրա վերադարձին, բայց չէ, այն գնալն էր, ինչ գնաց։ Բոլոր ժողովուրդը փախել ծակ ու ծուկն էին մտել. թագաւորի մահից հետը պալատականներն էլ ցրուել էին ամեն ինչ անտէր անտիրական թողել։ Ապաւէնը փնտռել գտել էր այն սենեակը ուր փակուած էր Հուրհերը.

— Ադնիւ և հաւատարիմ տէգր, ուրախացին բացականչեց Հուրհերը, գարձեալ դու ես աշխարհէ աշխարհ ընկել և իմ ցաւը քաշում։ Ամօթ իմ եղբայրներին։

Ապաւէնն ասեց.

— Խելօք Հուրհեր, դրա ժամանակը չէ. պտենք շտապել, ճամբաներս երկար է, միջոցը

վարձ, հոգ շատ կխօսենք, երբ կաշխատենք շուտ վրայ հասնել և փափագին կենդան գըտնել։ Եղբայրներդ նրա վրայ շատ են գայրացած. մի ամիս ժամանակ եմ խնդրել քեզ գտնելու համար։

Ապաւէնը Հուրհերին լոյս հանելով ներկայացրեց իւր ուղեկիցներին. հրամայեց որ Կռոմբալ Թագաւորի բոլոր գանձերը դուրս տան պահարաններից և հակներ կապելով ջորիների վրայ բարձեն. տուիրեց Թագաւորի ձիերից երկու ընտիրները պատմամբել իւր և Հուրհերի համար։

— Դէ որդիք, մտէք ժամ աղօթելու, ասեց տէրտէրը։ Ժամ մտան։ Տէրտէրը գօտիկը պատ գցեց, շալակն առաւ ժամը իւր ժամուարներով ու «Տէր ողորմեա» ասելով իւր աշխարհի ճամբէն բռնեց։ Ասուած լինի դրանց առաջնորդը։

Ուրախ ու գուարթ հասան երէցի շէնը։ Տէրտէրը եկաւ նայեց իւր գիւղերին, բայց կանգ չառաւ։ Ապաւէնը թէ՝

— Աչիգ մատաղ, տէրտէր, մեզը է ժողովուրդը, այսքան ժամանակ նրանց անժամ, անպատարագ ես թողել. հիմի էլ ուզում ես մեզ հետ գալ. չէ, շատ շնորհակալ եմ, գնա,

հովուիր քո բարեպաշտ հօտը։ Ասուած քեզ պէտքները ժողովրդի միջից անպակաս անի։

Ամենքն էլ տէրտէրի աջն առան. Ապաւէնը մի ջորու բեռ ոսկի աջահամբոյր տուեց։

— Ասուած օրհնի ձեզ, ասեց երէցն ու ժամը շալակած վաղ տուեց դիմացի շէնը, ուր ժողովուրդը պատարագի էր սպասում։

Ապաւէնը ձի նստեց, նստացրեց և Հուրհերին. ճամբէն շարունակեցին։ Երգչի աշխարհին մօտենում էին. ծառերի տերևները ճլորած, թռմռչած, ծաղկներն ու խոտերը մնացել էին աբլած, ցրտատար եղած նման ոչ հոտ ունէին, ոչ համ։ Անտառները լռիկ մնջիկ, ոչ ձայն կար, ոչ ձուն. երգեցիկ թռչունները սեաորակ, գլխները ծռել, թևերը քաշ արել, աչքերը ճամբի վրայ սպասում էին։ Կարծես մէկի կարօտ քաշելիս, որ նրա դարդու լեռ սէր քար, անտառ ու ծառ, իրանց շնչաւորներով ոսկ սուգ էին նստել։ Այդ մէկը ածող-երգիչն էր. որ մտադիր էր ճամբէն շարունակել Ապաւէնի հետ, որ նրան շատ տեսնի, նրա քաղցր զրոյցը երկար լսի, բայց Ապաւէնն ասեց։

— Զուր տեղ մրջիմ չեմ կոխած, ինչպէս կարող եմ այսքան արարածների մեղը մրտնել. մեծապէս շնորհակալ եմ։

Այս խօսքի վրայ երգիչ ածողը ցնծագին

Վարդարլուքն ելաւ, աչքը որ վարդապետ դաշտերին, ծաղկափթիթ գետափերին չգցեց, ու մատները լարերին բաշեց, ինչ տեսակ դրմի ու դրմի ասես, զը՞նգ ու ծլը՞նգ ասես, կկլոց ու գկլոց ասես որ չհանեց։ Մի բաղեում մեռած դրախտը կենդանացաւ, քաշ վայրերից բուրմունքն ու զեփուռը իրար խըտիտ եկած մլլալով բարձրացան վարդարլուքի կատարը։ Նրա հրեշտակաձայներգեցողութեան վրայ ծառերի ոստերը նորից ուշի գալով իրար կուլով ընկան. տերևները խշխշացին, լռած առուների ջրերը վրրխալէ իրանց քշքշոցը շարունակեցին. երգեցիկ թռչունները թևին անելով, ծլվլալով եկան երդչի շուրջ կողմը պատ ընկան, շարատուեցին։ Ճամբորդներն այդ ծլվլոցի, ժվժվոցի, քշքշոցի ուրախ ձայներից զմայլելով միաբերան շնորհակալութիւն արին, իսկ Ասպաւէնը թէ՝

— Վարդարլուքը կենդան մնայ քեզանով Աստուած տայ, քո շնորհքը վարդարլուքի թռուներն ու ծռները տարածեն ողջ աշխարհում։ Շնորհքը սփռուի և դրախտանման վարդարլուքի հուշակը ածի, մեծանայ։

Մնաս բարով ասին ամենը և անցան առաջ։ Շատ սար ու ձոր, շատ չէն ու գեղ անցկացած՝ քարուանը գէմ առաւ մի ծով։ Նեղն

ընկած՝ չէին իմանում ինչ անեն։ Քարուանի ետնից Ծովակուլը ձեռով արեց.

— Սպասեցէք, դրա հանդը ես գիտեմ։ Դրայ ընկաւ ծովին, ծարաւ գամշի պէս պինչը վրէն դրեց, ցամաքացրեց ու բացականչեց։

— Ուխտ, փուանց այսօր խմաց ջուրը ջանովս գնաց։ Ուրիշ աշխարհի ջրերը ապու են, դառն են։ Դէ հիմի անվընաս անցկացէք։

Քարուանը անցնելուց ետը Ծովակուլը վամենում էր ուղեկցել. Ասպաւէնն ասեց.

— Ադնիւ բարեկամ, ինձ պատուելու համար շատ նեղութիւն քաշեցիր, խնդրում եմ այսուհետև ծովատեղից չը հեռանաս։

Ծովակուլը յօժարուեց մնալու ու խմած ջրի ծանրութիւնից հանգիստ առնելու համար պարանուեց, մնաց, իսկ միւսները շարունակեցին ճամբէն. հասան Ճմբակուլի երկիրը. տեսան զուլմանը ոչ գաշտ է թողել, ոչ հանդ։ Այս գլխից այն գլուխ վարել են ուշակալ լեկանները ու քրտնքում մրխուել։ Ճմբակուլին Ասպաւէնն ասեց.

— Վարնորդ եղբայր, անշափ շնորհակալեմ. տայ Աստուած, լեկանների քրտինքը քեզ արժանի լինի, որպիսի ու թռուններդ էլ քեզ պէս հալալ աշխատանք սիրեն ու մատը բաց չթողեն։

Ճմբակուլը երկար ժամանակ անօթի էր. հենց բաժանուեց քարուանից թէ չէ, վազեց ծրի գլուխը

ու ճմրները կուլ տալով հասաւ գուլմանին։

Հետեւեալ օրը վաղ-վաղ Սկանջեղը մօտեցաւ Ասաւէնին.

— Ողջումախպէրդ Գը՞մը-գը՞մը ձորում նեղ տեղն է, հասիր։

Ասաւէնը շատ ստիպից որ պարզ ասի, թէ ինչ է եղել, ով է նեղացնում, Սկանջեղը չասեց։

— Մէնակ գնամ, թէ ընկերով։

— Հուրհերին էլ հետդ վերցնես, լաւ կը լինի, միայն շուտ հասիր։

— Վա՛յ քու մէջքը չկոտրի, այս ինչ ասիր։ Հուրհեր ձին նստիր, շտապենք։

Կարգադրից որ Սկանջեղը քարուանը բերի ահալի տեղերը անցկացնի։ Իրանք թռան, այնպէս թռան, որ թռչունն իւր թեով, օձն իւր պորտով չէին կարող նրանց կրունկը կսխել։ Հէնց որ Սրգի գլուխն եկան՝ ներքևում նկատեցին թէժացրած խարոյկ։ Ասաւէնի սրտի բիբը մկկաց, ա՜խ արեց, գլուխը կորցրածի պէս շտապեց։ Այն ժամանակ վրայ հասաւ, որ վեց դեր չորս ու բոլոր շարոտուած ամենափոքրին հարկադրում են, կապկապուած Փափագի վզին գանակ քսել, որովհետև երեսուն օրը լրանում էր և Ասաւէնը չկար։ Կըրտսեր դեը գողում էր եղբայրների սպառնալիքից, բայց

Փափագի տխրամած դէմքին նայելիս սրտի արիւնը լման էր դառնում, ձեռները թուլանում։ Փափագը կապկապուած ոտն ու ձեռով աչքերը Սրբնի էր գցել, Ասաւէնի գարուն սպասում։ Շատ էլ հոգը չէր, որ մորթում են, այլ տանջւում էր որ Հուրհերին ու Ասաւէնին կարօտ սրտով է մեռնում։

Յանկարծակի որ մի լախտ չտրաւեց գեւերի գլխներին, հէնց խմացան թէ երկինքը փուլ եկաւ, ու որ մի գուռց չը լսեցին թէ «ա՜խ անհամբերներ, ա՜խ տմարդներ», գեները տափից կպան ու ամօթից թէ երկիւղից չէին ուզում գլխները բարձրացնել։ Փափագն ինչպէս մօրից նոր ծնուած, կապերից ազատուելուց ետը ընկաւ Ասաւէնի վզով, չէր իմանում սրտի փուքը, վիշտն ու կարօտը ինչպէս փարատի։ Զափազանց ուրախութիւնից համ լաց էր լինում համ ծիծաղում։ Ասաւէնը լախտով գեերին մահուան տուր ուտացնելուց ետը զայրագին խօսեց։

— Ասենք թէ մի ամիս ժամանակ եմ տուել. բայց դուք ինչ անհոգի, անգութ՝ էք եղել որ մի օր գոնէ խնայել չէք. Բա փեսայութեանը այդքան պատիւ չկա՞ր։ Դրա դէմ ասենք, զայրացած էին, բա ինձ էլ խաթր չկա՞ր։

Եւ Փափագի բակ ընկած աչքերը տեսնե-

լով առաւել մորմոքուեց Ասպաւէնը, հէնց ձեռը տարաւ սրին, որ բացի կլբտակերը բոլոր գեղերի գլխներն տայ ու գրանով սրտի գնչգինչը հանի, մի քնքոյշ ձեռ նրա լծիը բռնեց։

— Գրանը այնքան յանցաւոր են, որ ամօթից երեսիդ նայել չեն կարողանում։ Գրանց արիւնն ինձ բաշխիր, յոյս ունիմ Փափագն էլ խօսրիս այժ կտայ։

Ասպաւէնը ետ նայեց, Հուրհերին տեսնելով բարկութիւնը մեղմացրեց, բայց չը ներեց նրանց։ Միայն կաղ գեղի հետ ասեց, խօսեց։

Չը՛մբ-զը՛մբ գեղերը Փափագի օտն ընկան միջնորդ զգեցին, որ Ասպաւէնի սիրտն առնի։ Սա պայման դրեց, «թող խրաքանչիւրը յօժարակամ բառասուն լախտ ուտի. հաշտութիւնը կկայանայ։

Սմին մինն էլ կաղ գեղի ձեռով բառասուն լախտի հարուած կերան։ Երեք օր ետը Սկանջեղն եկաւ բարուանի հետ, և շնորհակալութիւնով ու ընծաներով վերադարձաւ իւր տեղը։

Միւս օրը գեղերն տկան իրանց բաժին հարստանիքի ուրախութիւնն անել, ետը ճամբու դնել քրոջը։ Ուրախ կերուխումը եօթ օր եօթ գիշեր շարունակելով երեսուն ջորի անգին հարստութիւն բեռնած խառնեցին բարուանի հետ։

Ասպաւէնն ու Փափագը Հուրհերի հետ ձիան նստած «մնաս բարով» ասին Չը՛մբ-զը՛մբ գեղերին, Գըմբ-գըմբ ձորերին ու ճամբայ ընկան։ Կաղ գեղը մինչև Մեծ-սրգի գլուխը ընկերացաւ և իջնելու գիւրին ճամբէն ցոյց տուեց։

Քարուանն այնքան հոգուց էր բաղկացած, որ իջևանած տեղը ահագին շէն էր կազմուում։ Աստուած լինի հարստանիքատէրների հետ։

ԺԲ.

Ճամբայ գնալիս Ասպաւէնի աչքը չէր դալիս ոչ գանձը, ոչ ահագին քարուանը։ Նրա հոգսի առարկան Հուրհերն էր. մօր պէս խնամք էր տանում, որ ապահով ու անվնաս տեղ հասցնի, նրանից ետ ինչ պատուհաս ուզում է՝ իւր գլխին գայ։ Զգում էր, որ աշխարհի ամենաբախտաւորն ինքը գտնուեց Հուրհերին գեղերի ճանկից հանելու, բայց այն էլ գիտէր, որ ամեն մի թանգագին բան հազարաւոր փորձանքների ենթակայ է։ Միշտ զգոյշ էր լինում ուտել-խմելու մէջ, որ քունը շուտ չմօտենայ։ Ճամբին մի աչքը չորս արած էր գնում, ոչ որի չէր հաւատում. գիշերը ար էլ մնում էր՝ Փափագին

ջոկ, Հուրհերին ջոկ ընացնում էր ու ինքը արքեան ոտի վրայ հսկում։

Անփորձ, անվնաս արդէն մօտեցել էին Պայ-պայ թագաւորի հսկերին։ Մի գիշեր երբ ամենը անուշ քնած էին, Ապաւէնը մի թռթռոց լսեց։ Մի ձիտ, աչքերը շալիկ մալիկ, թևերը ոսկու պէս շողշողուն, մէնում ճրագի նման վառվռուն, կրակը բաց արեց ու այս խօսեց։

— Քաջ Ապաւէն, չար նաղրից զգոյշ կաց. նա թակարդ է սարքել։ Մտադիր էր իւր տգեղ աղջիկը Փափագի վիզը կապել։ Երբ այդ կապը քեզանով քանդուեց՝ այժմ կամենում է վրէժխնդիր լինել։ գիմաւորելու է գալիս և ձի է ընծայ բերում Փափագին։ Թամբի մէջ պահուստ կայ. հէնց որ Փափագը միամտաբար հեծնի ձին կատաղած պտի արշաւի և Փափագին սար ու քարով տայ։ Նենգաւոր նաղիրի աղջիկը Հուրհերին համար մի զոյգ ոսկէկար մաշիկ է բերում ընծայ։ Ցայտնի Հուրհերին արտաքին փայլով չխաբուի ու հագնի. թէ չէնրանց մէջ տեղաւորած իժ օձերից կխայթուի ու կմեռնի։ Աչքաբաց եղիր, հոգսերդ զուր չանցնեն։ Այդ պատուէրները որ քեզ յայտնեցի՝ պտես պահի քո մէջ, Փափագին անգամ չասես, թէ չէ բար կդառնաս։

Ապաւէնը չգիտէր ինչ շնորհակալութիւն

անի այդ գաղտնիքներն իմանալու համար։ Մինչև շուրջը աչք կածէր, որ իմանայ, թէ իրանից աւելի խօ որմին չլսեց—դառնալով նկատեց որ էլ քաղցրախօս ծիտը չկայ։ Շատ ափսոսաց։

Առաւօտը բացուելուն պէս քարուանը առաջ գցեց, իրանք ետ ընկան։ Գիւաւորը վաղուց էր շտապել թագաւորի մօտ և ականջարձնուկ արել Փափագի գալու մասին։ Ողջ քաղաքը իրար գլխով էր անցել. ամենն էլ շտապում էին Փափագին գիմաւորել և նրա բարգաւորութիւնը շնորհաւորել։

Ապաւէնը քաղաքից դուրս բարձրաւանդակի վրայ վրանները վէր թողել. դրօշակն էլ ցցել էր։ Ժողովուրդը գլխաբաց սպասում էր ներքև նորապսակներին տեսնելու համար։ Փափագն ու Հուրհերը վրանի մէջն էին, Ապաւէնը դուրսը պահապանի պէս կանգնած։ Թագաւորը մօտենալուն պէս՝ չոքեց ոտն ու ձեռը պաչեց, թագաւորն էլ նրա ճակատից համբուրելով մտաւ վրանը և նորապսակներին ողջունեց, հոգու մէջ ցնծալով, որ համ որդին պանդխտութիւնից անվնաս է վերադարձել, համ էլ աշխարհիս կուռածագիկ աղջկան հետն է բերել։ Աստծուն հազար բերան փառք տուեց ու շնորհակալութեան փոխարէն Ապաւէնին նորից գրկեց.

— Ապրե՞ս, հաւատարիմ ողջու�պրէ՛ր, երեստեմնուկի ամենամեծ ընծան քեզ է արժան. ինչ կուզես որ տամ, ա՛յ վեհանձն երիտասարդ։

— Թագաւորն ապրած կենայ, ինչ էլ ուզեմ նորապսակների օգտին պտեմ ուզել։

— Ում օգտին ուզում ես, ուզիր, միայն այնպէս բան խնդրիր, որ քո տրած ծառայութեան արժանաւոր վարձ լինի։

— Շատ բարի, երբ իմ կամքին ես թողում, խնդրում եմ այսօր անպայման իրաւունք տաս, ինչ հրամայեմ՝ կատարուի։

— Ուրախութիւնով տուի, վրայ բերեց թագաւորը։

Ապաւէնը թագաւորին վրանում թողնելով՝ դուրս եկաւ հարսընտեսի, փեսատեսի համար բերած ընծաներն ընդունելու։ Նախ ընդունեց նազիրին, որ շատ վշտացել էր, թէ ինչու ընդունելութիւնը ուշացնում են։ Սրա ընծան մի ամեհի ձի էր, որի փրփրակայած սանձից երկու հոգի բռնած առաջ բերին։ Գեղեցկութեան, մաքրութեան խօսք չը կար. կասես ամպերի մէջ լուացած, հանած, բայց այնպէս էր փըռացնում ու բաշը թօթուում, կարծես ուզում էր կողքի մարդկանց կուլ տայ։ Մինն ասում էր, ով գիտէ Զարզունի դաշտը մի շնչում անցնի, մինը թէ՝ հէ կասես Մարալ-Գիւնովի լանջերում

ծնած ու Ղրխորուլպի ջրերով ու խոտերով սնուած։

— Ձին պահեցէք, հրամայեց Ապաւէնը, մինչև թագաւորպի վրանից եկնելը։

Նազիրին ներս ընդունեց։ Եկաւ աղջիկը արծաթէ մատուցարանը ձեռին, ոսկէկար գոյդ մաշիկը մարգարտահիւս քօղով ծածկած։

— Նազելի օրիորդ, խնդրեմ այդ ընծան ինձ տուր դու ներս մտիր ասեց Ապաւէնը։ Երբ բարձրաստիճան հիւրերի այցելութիւնը վերջացաւ՝ Ապաւէնը ժողովրդի ցանկութիւնը հաղորդեց Փափպին, որ դուրս գայ, երգայ։

Կարգադրել էր, որ բարձրաւանդակից իջնելիս Փափպին ուղեկցէր Նազիրը, իսկ Հուրհերին վրանից եկնելիս ընկերակցէր նազիրի աղջիկը։ Այդ պատճառով Ապաւէնը բարձրաձայն յայտնեց։

— Թող Փափպին ընկերակցի նազիրը իւր ընծայ բերած ձիով, որ համոզուենք թէ տեսքին համեմատ ձին շնորհք էլ ունի՞, իսկ նորա-հարսի հետ զրօսանքի թող գնայ նազիրի աղջիկը իւր նուէրբերած մաշկները հագին և քաղցր զրոյցներով զրաղեցնի, մինչև թագաւորի հետ ասելիքս աւարտեմ։

Այս ծանուցման առիթով միւս ընծայարար իշխանները գժգոհացին Ապաւէնի դէմ, թէ ինչու իրանց էլ այդպէս անուն-անուն չի կանչում և

պատուասիրում։ Չէին իմանում որ նաղիրի սրտում արիւնը թան էր դառել երկիւղից որ համ ինքն է փորձանքի մէջ ընկնելու, համ իւր աղջիկը, որն անտեղեակ է թէ մաշիկի մէջ օձ կայ պահուած։

Բարձրագոյն հրաման էր. պտէր կատարուիր։ Նաղիրը լալագին սրտով ձին հեծաւ, որ սկզբում դեռ հանդարտ էր. հանդիսականներից ոմանք նախանձում, ոմանք երանի էին տալիս նրան։ Թագաւորաղը առաջ անցաւ սովորական ձիով։ Հարսնացուն ևս դուրս եկաւ ճխալաւ իշխանազուն հարսների ու աղջիկների հետ, որոնք նաղիրի տրաբքէշ աղջկանից զատ Հուրհերի շքեղ ծամերը, չինարի հասակը սիպահեմ գնացքը տեսնելով խնդում, ցնծում էին։ Միջոցը մի քառորդ ժամ չէր անցել, տեսան նաղիրի կատաղի ձին ալին տրաբացնելով, բերան ու սանձ փրփրակալած ծլկում է դէպի ժողովուրդը։ Ապաւէնը բռնել տուեց ձին, քաշեց առանձին տեղ, խարդախ թամբը փոխեց ուրիշը դրեց։ Թագաւորաղը մարդիկ էր ուղարկել նաղիրի եանից որ, իմանան թէ կատաղի ձին ուր փախցրեց։ Եկան, լուր տուին, որ նաղիրը ջարդուած ընկած է անդունդի մէջ։ Մինչև սրանք այդ դըժբաղդ դէպքի մանրամասնութիւնով էին հետաքրքրուում՝ յանկարծ մի օրիորդ շնչատաւ վազելով եկաւ յայտնեց.

— Նաղիրի աղջիկը կլափին է տալիս, հօրն ուզում է, շտապեցէք, հորէս կըմեռնի։

Մարդ գնաց, սրան էլ բերեց մահացած։ Ոսկեկար մաշկները Ապաւէնը գցեց թէժ կրակի մէջ. այնտեղ մի ուժգին տրարոց վեր եաւ և երկու ոտորուն պէժեր տեղն ու տեղը մրճեղ կտրուեցին։ Ագեցի ծայրով մորմոտը եա եա անել տուեց, միջից դուրս եկան մաշկները աւելի սիրուն, աւելի փայլուն։ Ամենն էլ այս տեսիլքի վրայ երեսները խաչակնքում էին։ Այս փորձանքներն անցնելուց ետը թագաւորը հրամայեց ոսկի և արծաթ բաժանել խմբուած ժողովրդին։ Փափագը լուռ կացած չէր կարողանում բան հասկանալ պատահարից, իսկ Ապաւէնն աւելի խնդումներս դարձած այս ու այն կարգադրութիւններն անելով մաշկները Հուրհերին հագցրեց, ինքն էլ նաղիրին խորտակող ձին նստեց, խուռն բազմութեան ոխանոնների ուղեկցութեամբ ողջ և անվտանգ մտան քաղաքը։

Նորից սկսուեց հարսանիքի հանդէսը... ուրախ կերու-խումը շարունակուեց եօթն օր եօթ գիշեր։ Ոչ ասես, որ Ապաւէնին չէր գովում, ամենն էլ գլխովը պտոյտ էին գալիս և նրա հետ մի բերան խօսելը մեծ շնորհ համարում։ Թագաւորին էլ՝ ասել չէր ուզիլ, աչքին աչք էր բսել, ոտին ոտը։ Ծեր տեղովը առուղացել,

ղժբիկացել էր։ Ապաւէնին սուրբ-սուրբ էր անում, այնքան պատում, սիրում էր, որ ամեն օր առաջին բարի լոյսը նրան էր տալիս։ Թէպէտ Փափագին ու Հուրհերին աչքի լուսից շատ էր ուզում, բայց սեղանի վերայ ամենաընտիր կտորը Ապաւէնին էր համացէք անում, նրա սիրտը շահում։

Թաղուհին չկար. մինուճարի դարդն ու կարօտը նրան գերեզման էին տարել։ Մահուան պատճառը մեծ մասով նազիրի հնարովի լուրերն էին, որոնք գուժում էին Փափագի ու Ապաւէնի գլխին եկած քամբախտութիւնները։

Թէպէտ նազիրը իր արժանի պատիժն ստացաւ, բայց հակառակ սատանէն էլ մտաւ Փափագի սիրտը և մի մեծ դժբաղդութիւն առաջացրեց։ Ե՞րբ չի սատանէն հակառակ եկել, սէրը ատելութեան փոխել, բարդաւորին դժբաղդացրել, ծիծաղողի արտասուքն երեսն է վէր արել։ Դեռ մի ամիս հաղիւ անցած կլինէր Փափագը եկաւ Ապաւէնի մօտ.

— Ողջումարէր, դու ինձ սիրում ես, չէ։

— Հա, ինչ է, ինչու համար ես այդպէս խիստ հարցնում, խօսեց Ապաւէնը, գուշակելով Փափագի միտքը։

-- Աշխարհն էլ գիտէ, թէ ինչե՞ր ես արել իմ սիրու համար. գիտեմ, ինձնից բան

խնայողը չես, արի առանց ծածկելու ինձ բացատրիր նազիրի ու իր աղջկայ մահուան պատճառները։ Ոչով բան չհասկացաւ. բայց ես նըկատեցի, որ այդտեղ մի խորհրդաւոր բան կայ։ Դու այդ գիրքիր սկզբից ու ծածկում էիր։ Ասա խնդրում եմ, ողջումախպէր ջան։ Այս ասելով փարուեց Ապաւէնի վզով։

— Սիրելի Փափագ, դեռ ողջ ժամանակները չէի ուզում նազիրի ու աղջկայ անունը լսել, որովհետև մի անգամ աչքիս դէշ էին թուացել, ինչ շատ սիրելի են քեզ, որ այժմ էլ նրանց մահուան պատճառն ես հարց ու փորձ անում։ Հարցնում ես, բարի անձերի մասին հարցրու, աչքիս վրայ, թէ չէ դրանց պէսներից պատուհասը ծլծլում է։

— Մեռել են պրծել, ինչ մնաս պտի գալ և եկած մնասը ինչ պտի լինիլ, որ երկու խօսքով չես ուզում հետաքրքրութիւնս յագեցնել։ Չէ՞ որ միմչև մահուան օրը ողջումարէր կեանքը ողջումարէր համար ետ դրած պտի լինիլ։

Ապաւէնը չէր կարող խնդիրը մերժել, ոչ էլ բաց աչկարայ ասել, թէ այդ գաղտնիք է, յայտնելով պտի քարանամ. դարձաւ ասեց.

— Փափագ, ջան, որ շատ ստիպում ես, կասեմ, դարձեալ փորձով կտեսնես. որ կեանքս քեզանից խնայող չեմ, բայց ետոյ դու գիտես։

Լաւ, լաւ, թող ես գիտենամ, պատասխանեց Փափագը ուրախ հետաքրքրութիւնով, դու ասելուդ շատ ասա, որ Հուրհերը վրայ չհասնի։

Ապաւէնը կրկնեց մեզմ սպառնալիքը։

— Փափագ, տես, ես պատմելու եմ, բայց խիստ ես փոշմանելու։ Եւ պատմեց ոսկեփայլ Ծիտիկի պատուէրները։

— Նազիրի ընծայած ձին քեզ էլ իրան օրը պտէր գցել։ Նրա թամբը քրքրեցի, զարհուրելի սրհարներ գտայ, որոնք տանջել էին ձիու ինքոյչ մէջքը։ Եթէ ասածիս կասկածում ես, կարող ես աչքովդ տեսնել։ Նոյն ձին ես նատեցի թամբը փոխած, տեսար ինչպէս խելօք էր։ Նրա աղջիկը Հուրհերին երեսաեանակ բերեց մի զոյգ մաշիկ։ Գաղտնիքը Ծիտիկի միջոցով ինձ յայտնի էր։ հագցրի բերողին և տեսար ինչ օրի հասաւ։ Կրակի մէջ տրաքոցը իժի ճուտն էր, որ մաշիկի մէջ դրած էր։ Նոյն մաշիկը հագցրի Հուրհերին, ինչու մի մնաս չեղաւ։

Փափագը հետաքրքրութիւնով լսում էր և չէր նկատել ոչինչ։ Ապաւէնը խօսքն աւարտելուց ետը մի երկար ահ քաշեց և մնաց լռած բա՜...բա՜...ցած։

Փափագը պաշարուել էր մտածմունքով, սթափուելով խօսեց գլխակախ.

— Բա, ողջումապրէր ջան, այդքան լաւութիւնն էլ նոր ես արել, ես դեռ անտեսակ եմ։ Ամեն կողմով ես շնորհապարտ եմ քեզ, մի ճանապարհ ցոյց տուր, ինքս էլ փոխարինեմ։ Ինչ անեմ։ Թող տամ, ամաչում եմ, չէ որ կիսարար եղբայր ենք։ Հարիւր անգամ կեանքդ ինձ համար վտանգի ես ենթարկել։ Լեղուով շարունակ ասելը «սիրում եմ» արժէք չունի։ Ի՞նչ կլինի քեզ այնպիսի բան հարկաւոր լինի, որ ես էլ քու տրած լաւութեան հարիւրերորդ մասը գործով ցոյց տամ։ Գանձ մնիսեմ. եթէ գանձը չբաւականանայ, թագաւորութիւնս էլ վրէն գնեմ. եթէ գրանով էլ գլուխս չգայ, կեանքս ու արիւնս քու սիրուն մատաղ տամ, որ քու սիրուն էլ ճոխանայ, ուրախանայ։

Այս խօսքերը արտասանելուց ետը Փափագը կարմրատակած գլուխը բարձրացրեց, Ապաւէնի աչքունքերին նայեց, — ձայն հանիր, ողջումապրէր ջան, ինչու լուռ ես, հարցրեց Փափագը երեսն ի վեր նայելով։ Մի բսպէ գնոց հայեացք գցելով երբ տխուր իրողութեանը վերահասու եղաւ, երկիւղից վայտ կտրուեց, մնաց արիւնպարտ։

Նոր գլխի ընկաւ, թէ ինչու խեղջ Ապաւէնը նախազգուշացնում էր մնաս քաշելուց։ Շատ արտասուք չափեց, շատ փոշմանեց, թէ

ինչու ստիպեց նրան զաղտնիքը բանալու, բայց էլ ետնից չհասաւ։ Խելքը կորցրածի պէս չկարաց թողել հեռանալ առաջը չոքեց. սկսեց գլխին, կրծքին խփելով իրան մեղադրել և ապիսղորմ ձայնով Աստծուն աղաչանք անել։

Այս լացի սւ սուգի վրայ ներս թափուեցին թագաւորը Հուրհերը և պալատականները։ Ամենքն էլ պատահարքը տեսնելով մնացին զարհուրած։ Փափագը լացը ուժով դադարեցնելով սկսեց քարանալու պատճառը պատմել։ Լսողները աւելի սկսան ցաւել, մկկտալ, էլ հովանալու ճար չէին գտնում։ Նրանց թափած արտասուքից քարէ արձանն ողողուել էր։

Գիշեր-ցերեկ Փափագը ողջումաղբօր արձանի մօտից չէր պոկ գալիս. անհաց, աննիւթ մնալէն բարկել մասունք էր դառել։

Թագաւորն ու միւսները այն կողմը մնան, ջրատար Հուրհերը ձեռից գնացել էր, կասես արևը խաւարած։ Ախորժակն էլ էր կտրուել, ոտի թեն էլ. մկկտալն ու լալն գիշերը ծով էր չինում անկողինը ու քիչ էր մնում արտասընքում խեղդուի։

Թագաւորը գիտուն, բանիմաց մարդիկ կանչեց, դանձը առաջները թափեց, որ նրա սիրու ամեն հնար գործ գնեն, կենդանացնելու հնար գտնեն։ Դէս չարչարուեցին, դէն չարչարուեցին — մի յոյս չեղաւ։ Թագաւորի դուռը մէկ էր, եկողը հարիւր ու հազար. խաչի սխտաւորի պէս գալիս նայում էին քարէ արձանին, լալիս ու ափսոսալով իրանց տները դառնում։ Զտեսնողներն էլ նկարագիր լսելով այրում, փոթոթուում էին։ Փափագը տեսնելով որ ժողովրդի ձայնը իրան դատապարտում է քարացնելու համար՝ կանգնեց մի օր հօրն ասեց.

— Թագաւորն ապրած կենայ, ինչ արի, ես արի։ Ա՜խ վէ՜շ անելով արմին իւր մեռած եղբօրը չի կենդանացրել։ Սրա ինձ արած բարութիւնների կէսը հարազատ եղբայրը չէր անիլ։ Ես սրան կեանքով եմ պարտական Աստուած առաջս է բերել այս դէպքը. որ գործով ցոյց տամ, թէ ես էլ անձնուիրաբար սիրել գիտեմ և ընդունակ եմ տեղն եկած տեղը ընտիր ողջումաղբօր համար կեանք ետ դնել։ Երկաթէ տրեխներ կհագնեմ, աշխարհէ աշխարհ ման կգամ մի ճար ու հնար գտնելու համար։ Ինձ համար կործանուած է թագաւորութիւնը, քանի որ ողջումաղբօրս բաղդը արևը ես խաւարեցրի յիմար հետաքրքրութիւնովս։ Իմ կեանքը ինչի նման կլինի, երբ ամեն առաւօտ Ալաւէնի արձանը տեսնելով պտեմ անվերջ տխրիլ ու առանց տիսուրելու դառնալէս զգճալ արածիս վրայ։

Փափագը ճամբի պատրաստութիւն տեսաւ, կոտրած սրրտով հօրն ու պալատականներին մնաք բարով ասեց և ժամանակ դրեց մինչև Նախրաթոց, բայց չէր իմանում թէ ինչ հանգի տուն մտնի, Հուրհերին «մնաս բարով» ասի։ Հա, իսկոյն Հուրհերն ինքն դէմն ելաւ ու իմանալով նրա մտադրութիւնը՝ մխիթարիչ հրեշտակի պէս նրան բաջալերեց.

Փափագ ջան, հիմի աշքումս դու աւելի բարձր ես, քան թէ առաջ։ Քու արած վճիռը ինձ տխրեցնելու փոխարէն ուրախացնում է։ Եթէ օտարութեան մէջ մի փորձանքի կհանդիպես, կը մխիթարուիս գոնէ նրանով, որ ամուսինս իւր պարտքը կատարեց դէպ իւր անձնուէր ընկերը։ Իսկ եթէ Աստուած մեզը կդայ մուրազաշոր ողջումազրօրդ և մի ճարի դուռը նշանց կլուսայ քեզ՝ հաւատացնում եմ որ ունեցած սէրս դէպի քեզ եօթն անգամ կըվարարի, կը բազմապատկուի։ Այն ժամանակ կենդանացող, յարութիւն առնողը որտով ես կլինիմ, մարմնով Ապաւէնը։ Գնա, սիրելիս, ինչ որ չես փորձել, Աստուած հանդիպեցնում է, փորձիր որ անձնուէր ընկերի արժէքը, տեղը իմանաս։ Եթէ ողջումազրօրդ պէս քո սէրն էլ անկեղծ է՝ յոյս ունիմ, որ Աստուած ամօթով չմոռի։

Համբուրեց Հուրհերը և ճամբու դրեց Փափագին հանգիստ սրտով։

Փափագը հասարակ շորով, երկաթէ տրեխներով, առանց ուղեկցի, Ապաւէնի նետ ալեզը վերցրած՝ գլուխը փէշը դրեց ու իւր աշխարհից դուրս գնաց։

ԺԳ.

Փափագը հօր տանից դուրս գալով օրեր, շաբաթներ ամիսներ շրջեց, շրջշրջեց.միանգամայն անօգուտ և ապարդիւն։ Վեց ամիսը կեանն էր ընկել, խեղճը դեռ թափառում էր ում էլ պատահում էր, միշտ այն էր հարցնում, թէ իւր եղբօրը ողջացներու համար ճարի տեղակ չկն։ Սմենքն ողանձուել, պապանձուել էին, մի յուսատու խօսք չէին հանում բերաններից. հէնց բոլորն էլ գլխները ժաժ տալով պատասխանում էին։

— Այ եղբայր, Աստծուն նա մի հոգի էր պարտական տուել է պրծել, էլ նրան ինչ ճար ես ուզում։

Հողը, քարը, փայտը որ անշունչ, անլեզու բաներ են՝ նրանց անգամ գիտում, օգնուիլեան

էր կանչում Փափագը։ Վերջը հասաւ մի հովուի, որ մահակը դիմաց տուած մրտամոլոր կանգնել էր։ Հովիւը սրան թէ՝

— Այ մարդ, ո՞ւր ես գնում։

— Գնում եմ Աստծու մօտ այս ինչ ճարը հարցնելու եղբօրս համար։

— Քեզ մատաղ լինի իմ ջանն էլ, իմ ոչխարն էլ. Աստծուց մի ճար էլ հարցրու ոչխարիս համար. ասա ամբողջ հօտը կոնդացել է, չի կարողանում ոտ փոխել արածելու համար սրանք մնացել են մեղք ու կրակ, ես էլ երեսները պահելիս։

Լաւ կլինի, պատասխանեց Փափագն ու շարունակեց ճամբէն. տեսաւ մի բախրա այնքան ահագին պոզեր ունի, որ մինը գնացել է ամպերի մէջ թաղուել, միւսը եկել քերթին դէմ ընկել։ Խեղջ անասունը շարշարւում է, չի կարողանում ազատուել։ Փափագին նկատելուն պէս պրընդնոտալով ասեց.

— Ո՞ւր ես գնում, սիրուն տղայ.

— Աստծու կուշտը։

— Բա՛ ինչ կլինի, Բարի լինես ինձ համար էլ հարցնես. թէ պատճառն ինչ է, որ հօթը տարի շարունակ այսպէս խեղջ մնացել եմ սոված, ծարաւ։

— Շատ բարի, պատասխանեց Փափագը

ու գնաց։ Երկար գնալով յոգնեց ու շորի ձեռից բաշուեց մի քերթի շուար։ Քարին թիկն տուած միջոցին քունը տարաւ։ Երազումն այսպէս էր թւում, թէ Աստծուն մօտեցել է։ Զարթնեց մեղրաճանճի բզզոց լսեց։ Քանի օր էր բերանը ոչինչ չէր դրել. բզզոցի վրայ գնաց, որ մեղրով նիւթ առնի։ Առաջը մի այր բացուեց։ Քանի գնում, այրն այնքան մթնում էր և բզզոցն ուժգնանում։ Փափագը այրի մութ խորշերին, ծերպերին նայելով սարսափում, դարդանդում էր։ Ասում էր չը լինի, սա գողդարան է. մեղրաճանճը այսչափ խոր տեղերում ինչ է անում։ Այրի խորքը հետզհետէ լայնանում էր ու բզզոցը պարզ, մէկին լսում։ Փափագը մի քանի անգամ ուզեց ետ դառնալ։ մի երկու ոտ ետ էր դառնում, կրկին ինքն իրան սիրտ տալիս «ոչ վախենալն է մի բան և ոչ ճամբի կիսից ետ դառնալը, գնամ, տեսնեմ ինչ կայ»։ Այս ասելով միսն ատամի տակն առած գնաց, և տեսաւ այրի ընդարձակ տեղը մի ալեոր, ձնի պէս սիպտակ միրուքը գօտկից հետ՝ շորած աղօթք է անում։ Փափագը այս տեսարանի վրայ փշաքաղուեց, չկարաց երեսին մտիկ տալ։ Սուրբը ճգնաւորն էլ դէմքը ազամորդուց շուռ տալով խօսեց.

— Այ անփորձ հողածին. խնդրուածք

ունիս առ Աստուած, թէ զուր եկել ես հանդստութիւնս վրդովելու։

Փափագը դողդոջուն ձայնով պատասխանեց.

— Ո՞վ սրբազան հայր, ես մի անմիխիթար ճամբորդ եմ և առ Աստուած ապերասալի խնդիր ունիմ։ Բարեխօս եղիր Տիրոջ մօտ և մի հնար ասա իմ սիրելի ողջումաղբօրս ողջացնելու համար։ Նա քարացել է թշուառիս ձեռով և ես նրա սիրու համար ամեն վայելչութիւն, արքայական գահ ու գաւազան թողած՝ շրջում եմ անդադար։ Մինչև ճար չգտնեմ, ես տուն դարձողը չեմ։ Զարհուրս գալիս է ամեն անգամ ողջումաղբօրս քարացած տեսնելով. նրա ուրուականը ինձ հանգիստ չի տալիս. գիշերցերեկ հալածում է։ Սրբազան հայր, մեղքացիր ինձ, ասա ինչ անեմ, որ ջրում խեղդուիմ, որ կրակում այրուիմ, որ նրան մի հնար լինի։

Ճգնաւորն առանց դէմքը ցոյց տալու՝ մեկնեց ճկոյթը.

— Ա՛ռ այս մատանին, որա մէջ ամեն բարերար զօրութիւն կայ. ջրի մէջ կը գցես և այն ջուրը կը սրսրեկես երեսին, իսկոյն շնչի կը գայ։

Փափագը ապտպրանքները պատմեց դրանց պատասխաններն էլ տալուց ետը ուրոշն անե-

ռուելիացաւ։ Բարանձաւը լուսաւորուած էր, ոչ մին չկար։

Փափագը հասկացաւ, որ ճգնաւորը հէնց Տէր ինքն էր։ Դնաց չորած տեղը համբուրեց, ջերմեռանդ ծունր դրեց ու ելաւ այրից։

Դարձաւ բախրի մօտ, սրբազան մատանին քսեց պողպէի չորս բոլորը, իսկոյն տեղահան եղան, թափուեցին։ Բախրէն աղատուեց։ Փափագին շնորհակալութիւն անելով վազեց արօտ։

Այդ տեղից գնաց հովուի մօտ, ասեց.

— Երկու կտոր երկաթ ճարի, ճգների պէս իրար կպցրու, ոչխարի բուրդը խուզի, կըթեթեանայ և ման կը դայ։

Հովուի մօտ կաթնաբրդուշ ուտելուց ետը ճամբայ ընկաւ ուրախ-ուրախ։ Ոտներն այնպէս էր փոխում, կասես հրեղէն ձի։ Շատ գնալով հանդիպեց մի առուի, ուզեց ծարաւը կոտրել, ջուրը շատ պղտոր էր. վերև գնաց ակը գտնելու։ Տեսաւ բաւական հոգիք աղբիւրի վրայ եկած, որը շորն է թափ տալիս, որը երեսն է լուանում, որը մազերն է սանդրում. բոլորն էլ ջահել, բոլորն էլ զէնք ու զրահով, հեռաւոր երկրի մարդիկ։

— Բարով, այ հոգու աղբէրներ։

— Աստծու անհատ բարին քեզ, պատասխանեցին նրան։

— Ի՞նչ մարդիկ էք, ո՞ւր էք գնում։

— Մենք հեռու գաւառների իշխանաղները ենք, եկել ենք բաղդներս փորձելու։

—Ո՞ւմ վրայ, ո՞րտեղ էք փորձելու, հարցրեց Փափագը։

— Է՜, այն հեռու սարային տեսնում ես. Լանդաբերդ են ասում, նրա տէրը մի հատիկ սիրուն աղջիկ ունի։ Տարուայ հինգ նաւակատկին փեսաժողով է անում։ Շատ երիտասարդների վերջ է արել, մենք էլ գնում ենք մրցահանդէսին մասնակցելու։

Փափագն ասեց, «ես էլ ձեզ հետ»։

Գնացին, Լանդաբերդ այն ժամանակ հասան, որ աղջիկը կանուխ ներկայացող իշխանաղներին նեղն է լծել։ Ուզում էր պնդոցը ժողովել, հանդիսականները նորեկ երիտասարդներին տեղ տալով բարձրաձայնեցին։

— Նորերը քաջ կլինեն, սրանց փորձեցէք, դեռ պնդոցը մէք բանայ, մէք բանայ։

Հարսնացուն նաժիշտների արանքից ականեց, տեսաւ եկող փեսացուները բազմաթիւ են, օրը տարաժամած է, ժամանակ չի լինիլ առանձին-առանձին փորձելու, այս առաջարկն արեց մարդամիջով.

— Երեսուժով անմենդ էլ քաջ, կարուկ երիտասարդներ էք. բայց ինքներդ լաւ կը ճա-

նաչէք, թէ ո՞ւն է ձեր մէջ արժանաւորագոյնը. ձեր յօժար կամքով նրան ընտրեցէք թող առաջ գայ, իմ ձեռից կովկիթն առնի կաթով լիքը տանի այս բարդու կատարը և առանց մի կաթիլ թափելու վէր բերի։

Հարսնացուի այս առաջարկի վրայ երիտասարդները կարմրատակեցին մին մինի նայելով, ոչովի վրայ մատնացոյց չարին։ Նրանցից ամեն մինն էլ ցանկանում էր ինքը հարսին տիրանալ, բայց խորագէտ հարսնացուն աչքի տակով նշմարելով նրանց ծոյլ-ծոյլ փսփսոցն ու փնթփնթոցը կամեցաւ երիտասարդներին առամի տալ։ Կարգով կանգնեցնելուց հետ քօղն երեսին եկաւ փեսացուների առաջով անցնելու։ Իւրաքանչիւրին մօտենալիս հէնց որ քօղը բարձրացնում էր, դէմի երիտասարդը շափակից շփոթւում էր ու աչքերը գետին գցում։ Հերթը հասաւ Փափագին, քօղը կէս խուսի նայեց. տղէն այնտեղը չդցեց, աղջիկը քօղը ճակատը հասցրեց, երեսբաց նայեց, տղէն աչքն էլ չճըպեց։ Աղջիկը սրա կռնից բռնած քընքշաբար բարդու մօտ քաշեց.

— Բոլորի միջից ընտրեցի սրան, որ աւելի անվախն է երևում։ Եթէ, ինչպէս ասել եմ, կովկիթը կաթով լիքը անարատ կտանի, անարատ էլ կբերի՝ ես կլինեմ սրա բաղդը։

Այնուհետև իւր կամքն է, ուր ուզում է տանի։ Բայց եթէ առաջինների պէս անշնորհք կըլինի, ձեռները կըգողդողան և ներքև կախուն նշան կլինի՝ իսկոյն գլուխը կը կտրուի։ Այս ասելով կաթը մեկնեց, ունրամէջն էլ քաղցրացրեց։ Փափագն անթարթ աչքերով իրան ուղղած ժպիտն ընդունեց կովկիթի հետ միասին։

Իւր հօրն ու բարեկամներին միջոց էր որոշել մինչև նախրաթոզ. եթէ եկաւ, եկաւ, եթէ չէ, իմանան որ ոտով գլխով կորել է։

Հէնց այդ նախրաթոզի պասն էր ու երկու օրից յետոյ Նաւասարդ։ Ժողովուրդը տես պըտէր գնալ իւր թագաւորին, շնորհաւորել այդ ազիզ տօնը։ Թագաւորն ըստ սովորութեան ուրախակցում էր ժողովուրդին, դրամ կամ թանգագին ընծաներ բաժանում։ Փափագը տարակուսած բարդու տակին մտածում էր. «Ապաւէնի քարանալու պատճառով արդէն աշխարհը սգաւոր է, այժմ եթէ ես էլ ժամակորոյս լինիմ ու որոշեալ օրը չերևամ, հօրս ու ժողովուրդի վիշտը աւելի կասկանայ»։ Այս մտքտուրի մէջն էր. աղջիկը կարծելով թէ ապօթք է անում, ասեց.

— Քաջի ապօթքը կարճ պտի լինիլ, որ գործելու միջոց շատ ունենայ։

Փափագն անխօս սկսեց բարձրանալ ծառը։

Բարդու տակ բերին սև շալ փռեցին, որ կաթիլը նշմարուի։ Ճգնաւորից ստացած մատանու մի կողմը կովկիթում թաթխեց, կաթը թանձրացաւ ոնց գոմշի մածուն։ Դրեց գլխին ու վէր թափուելուց ապահով հասաւ կատարը։ Բայց ծառն էլ ծառ չէր Է. նրա տունը ծակուի, գըլուխը, ով գիտէ ամզից էլ անց էր կենում։ Մինչև այդ օրը ոչ մի ադամորդի սիրտ չէր արել կատարը բարձրանալ. դեռ կէս տեղը չհասած՝ աչքերը շաղուում էին, գլուխը պտոյտ գալիս։ Այդ ծառի կատարից շատ աշխարհներ երևում էին պարզ, ինչպէս ձեռիդ միջին։ Փափագի ցնծումին չափ չկար, ամեն կողմ նայեց ուրախացաւ. վերջը իւր երկրի վրայ էլ նայեց։ Նշմարեց իւր ոռնմանի վրայ բաւական բազմութիւն կանգնած. գուշակեց որ դա իւր հայրն է իւր երկրի ժողովրդով, որոնք եկել են Փափագին դիմաւորելու։ Սպասում են իւր գալըստեան։ Երբ կատեսնին օրը մթնում է, դարձեալ չի երևում, կիմանան որ ինքը կորած-մեռած է, տխուր-տրտում տները կըգառնան։

Այս մտածելով Փափագը ծառի վրայ լաց եղաւ. բոլոր արտասուքը կուլ տուեց, բայց մինը որ շատ խոշոր էր, գլորուեց ընկաւ ներքև։

Հարանացուի հայրը բացականչեց.

— Կորաւ, այդ տղէն էլ կորաւ։

Ժողովուրդը տխրեց այդ անաջողութեան վրայ, բայց տխրելը ապչկանն էր, որ փռանց այդ երիտասարդին հաւանել էր և մաքու�ը սիրել։ Անաջողութեան լուրն առնելով նուագեց ու նաժիշտների օգնութիւնով հասաւ իւր առանձնարանը։ Փափագն անտանելակ այս ամենին՝ կովկիթը գլխին իջաւ, մատանու միւս կողմը զգոյշ թաթախելով՝ կրկին հեղուկ դարձրեց կաթը և տխրագէմ դրեց գետնի վրայ։ Դահիճներն եկան որ կռները կապեն, Փափագն ասեց.

— Ինչու էք կապում, դեռ սպասեցէք կէս խօսք ասեմ թագաւորին, յետոյ կապեցէք, ընդիմացող չեմ։

— Ասա, ասա, պատասխանեց թագաւորը, բոլորի յոյսն էլ քեզ վրայ էր, ափսոս գերբաւդ տանել տուիր։

— Թագաւորն ապրած կենայ, սխալւում ես, գրաւը ես տարել եմ։ Կովկիթը անարատ տարել եմ, անարատ բերել, բայց եթէ կաթիլի համար ես ասում նա կաթ չի։

— Չո՞ւռ երևում է, էլ մրանդ չի կաթը. մի բան որ աչքովս տեսած լինիմ, էլ խօսքով խաբել կլինի։ Սև շորի վրայ սիպտակ կաթիլը աշկարայ բղաւում է կոյր մարդուն էլ, որ ես կաթն եմ, կովկիթիցն եմ ընկել։

— Շատ բարի, ողորմած թագաւոր, Աստուած միջնորդ է այստեղ. բերել տուր մի արդարասէր մարդ. թող լիքի, թէ քաղցր լինի, քու տարածն է, թէ աղի լինի, իմ տարածն է։

— Յօժար եմ, թող այդպէս լինի, պատասխանեց թագաւորն ու ընտրեց մի ճշմարտախօս մարդ։ Ժողովուրդն իրար հրելով, իրար քունչ տալով, գլխների վրայ մէջ էին ընկնում, որ ժամ առաջ տղի վախճանն իմանան։ Ընտրուած մարդուց էր կախուած դատավճիռը։ Զորեց լեզուն դիպցրեց.

— Թագաւորն ապրած կենայ, ասեց, ճշմարտին հաւատա, սա կաթն համ չի։

— Բա ինչ է, հարցրեց թագաւորն այլայլուած,

— Ի՞նչ լինելը չգիտեմ, միայն խիստ աղի է։ Ժողովուրդը խնդաց ու բարձր աղաղակներով օդը թնդացրեց։ Երբ թագաւորը աղիութեան պատճառը տգիտ պահանջեց, սա թէ՝

— Իսկ պատճառը հարսնացուին կասեմ։ Փափագին առաջնորդեցին ապչկայ մօտ։ Սա խընդումերես ընդունեց, ձեռտալով ճակատից համբուրեց ու կոյրին նստացրեց։ Փափագը նրա խնդրով պատմեց իւր գլխի անցուանքը. երբ արտասուքի պատճառը պտէր բացատրիլ՝ կապ ընկաւ ու լռեց։ Աղջիկը պահանջեց որ շարու-

նակի։ Տղէն թէ՝ «հօ չեմ նախատիլ, որ սըրտինս ուղիղ խոստովանեմ»։

— Այն ժամանակ տմարդ կասեմ, երբ սրտինդ կեղծես, պատասխանեց աղջիկը։

— Շատ բարի, ասեմ։ Իմ այսքան նեղութիւն կրելու նպատակն այն չէր, որ քեզ վրայ պսակուեմ։

Այս խօսքի վրայ աղջկայ ունքերը թոռռեցին։

— Ես քեզ հաւանել եմ, շարունակեց Փափագը, իմ եղբօր համար, որ իմ սիրու համար քարացած է։

— Նա որ քարացած է, ինչպէս կլինի մեր պսակուելը հարցրեց աղջիկը։

— Դրա համար իւր հաւատարիմ ողջումաղբէրը ճարը գտել է ու հիմի գնում է, որ կենդանացնի։

— Ես յօժար եմ, ինչպէս կամենաս, քու ընկերին ես էլ եմ հաւան անտես, անծանօթ։

Թագաւորը ներս մտնելով մանրամասն տեղեկացաւ ակջկայ ու տղի դրոյցներին։ Վերջն իւր կողմից ասեց.

— Հաւատում եմ որ այստեղ Աստծու մատը խառն էր։ Քեզանից պարթև ու դեղեցկագէմ երիտասարդներ շատ են պնդոց մտել։ Երևի քարացած ողջումաղբօրդ բաղ-

դիցն էր, որ ամենին տուիր անցկացար։ Երբ որ աղջիկը հաւատալով քեզ՝ յօժարում է քարացած եղբօրդ կին լինել՝ ես էլ իմ կողմից յօժար եմ։ Եթէ Աստուած իմ ծերութեան խղճայ, քարացածին կենդանութիւն տայ՝ ձեզ էլ ուրախութիւն կլինի, մեզ էլ. եթէ չի լինիլ՝ իւր կամքն է։

Փափագը հասկացրեց, որ հարկաւոր է ըշտապել։ Ինքն ու աղջիկը նստան ընտրովի ձիաներ ու ճամբայ ընկան։

Նրա խեղճ հայրն ու Հուրհերը աչքները դռան կթած սպասում էին։ Ողջ քաղաքը Նաւասարդի պատրաստութիւնը տեսել, թագաւորի կտրի ու դրոշակին էր նայում, արդեօք Փափագը չի՞ եկել, որ կարմիր փոխեն։ Չէ, չեկաւ մինչև ուշ գիշեր։ Աշխարհի սովորութեան համաձայն քաղաքացիք առաւօտը պատէին թագաւորին տես գնալ. բայց միտքները փոխում էին, «ախր ո՞նց սպաւոր թագաւորի երեսը գնան»։

Թագաւորն էլ որդու բացակայութեան միջոցում մէկ գնում էր Հուրհերին մխիթարում, մէկ դալիս Ապաւէնի երեսն ի վեր նայում, կորած որդին մտարերում. փուլ դալիս ու ձնանման մազերը արտասուքով ողողում։

ԺԴ.

Ադամայ մուլթը նոր բացուած միջոցին, երբ Աստծու շարն ու բարին իրարից նոր էին բաժանուել, երկու հոգի Պայ-պայ թագաւորի պալատին մօտեցան. նրանցից մինը ծոցից կարմիր թաշկինակ հանեց, կապելով նեռին, նշանուկի տուեց գրօշակի ձողին։

Հուրհերը լուսամուտի առաջ աչքերը սրբում էր. նկատեց թէ ինչպէս մի սովոր ձեռ մեծ դռան սոլնակը բաշեց ու սրարշաւ երկու հոգի միասին բակ մտան։

Հոգին մի բան վկայեց. էլ տեղը չհամբերեց, նեռի պէս սրացաւ և ուրախ բացականչելով եկողներից մէկի վզովն ընկաւ։

— Ա՜խ Փափագ, Աստծուն փառք, ողջ եկար. այսքան տանջել կլինի։

Ամենքն էլ դուրս թափուեցին ակնթարթում ու խնդումից չգիտէին ինչ անէին։ Փափագը չթողեց ժամանակ կորչի, տեսնելով որ նրանց արտասուքին վերջ չի լինիլ, ասեց.

— Խնդրեմ այս թոյրացուիս ձեզ մօտ ընդունէք. շուտով ինձ մի ման ջուր բերէք, եւ տոյ ամեն բան լաւ կըլինի։

Խնդիրը կատարուեց իսկոյն։ Մատանին ջրի մէջ դցեց, ջրից մի բուռ ածեց քարէ արձանի երեսին, Ապաւէնը թերթերունքը շարժեց, աչքերը բաց արեց։ Երկրորդ բուռն ածելիս, արձանը խոր ֆխ քաշեց. երրորդն էլ ածելուց ետ Ապաւէնը վեր կացաւ և զուարթ խօսել սկսեց, կասես քնից կշտացած մարդ։ Թագաւորի ուրախութիւնն անսահման եղաւ, երբ տեսաւ կորած որդին գտնուած, քարացած հոգէորդին կենդանացած։ Հրամայեց ընդհանուր մեծ սեղան պատրաստել, պալատականներին, իշխաններին, ժողովրդին աւետիս տալ։

Փափագն Ապաւէնի առաջ շորած՝

— Ապաւէն ջան, ասեց, արդեօք նեռում ես քու Փափագին իւր անզգոյշ սխալանքի համար։

— Ապաւէնը ամենին պատրաստ է նեռել, մինչ թէ իւր ողջումտրօրը, որ իւր հերթում ապացուցեց իւր անձնուիրութիւնը։

— Շատ բարի, ուրեմն կըլսես հատիկ խնդիրս։

— Ինչու չէ։

— Դու ինձ մուրազիս հասցրիր, ուղածս տեղաց արիր անհուն նեղութիւններ յանձն առնելով։ Քու արածի հարիւրական մասը դեռ ես արած չունիմ. մնում է որ քեզ կենդանացնելուց ետը, արժանաւոր հարսնացու էլ ճա-

բեմ։ Արդեօք ընտրելու կատարեալ իրաւունքը ողջումաղբօրդ տալիս ես։

— Տալիս եմ, լիարեան պատասխանեց Ապաւէնը։ Այդ խօսքի վրայ պալատի միջի դռները կրընկի վրայ բացուեցին ու երկու լուսադէմ աղջկերը ներս եկան։ Ապաւէնը երկսին էլ խոր գլուխ տուեց. մինը Հուրհերն էր որ Փափագի կողմն անցաւ, իսկ միւսը մօտեցաւ Ապաւէնին և իրար հետ կռնարռնուկ մտան ճաշարան, ուր թագաւորը աշխարհ գլխին հաւաքած նրանց ճամբէն էր պահում։ Որ չորսը միասին չեկան ու անուշ ժպիտով հանդիսականներին չողջունեցին, հէնց իմանաս արև ծագեց։ Նրանց շղանգից պատ ու առաստաղ ճրագի պէս վառուցին, հուրհրատոցն ընկան։

Թագաւորն կլժխան ձեռն առաւ.

— Շնորհաւոր Նաւասարդ, աչքներդ լոյս, սիրելի ժողովուրդ։

Ժողովուրդն էլ գաւաթն ու քարէզանները ձեռներին.

— Աչքդ լուսի կենայ, մեր պատուական թագաւոր. ջահէլները միշտ ջուխտ մնան, ինչ որ նանի ծիծը ջուխտ է։

— Ա՜յ երէց, դարձան տէրտէրին, Ապաւէնի նշանը օրհնիր։ Այսօր նշանաւոր տօն է,

թող աւելի նշանաւոր դառնայ։ Օրհնիր որ մեր աշխարհի ջահէլները միշտ մէկ մէկու այնպէս սիրեն, ինչպէս այս երկու ողջումաղբէրները։

Հէնց այս խօսքումն էր, ձիաւորի տուտը բաց եղաւ դէպի պալատի բակը։ Եկողն Ապաւէնի աներացուն էր, որն իւր վէսային կենդան տեսնելով դուրեկան պատկերի վրայ հիացաւ։ Դեռ սեղան չնստած մօտեցաւ, համբուրեց ճակատը ու մատի մատանին նրան տալով՝

— Դեռ չտեսած, քու գովասանքները լսելով, յօժարուեցի միակ աղջիկս արձանիդ գերի տալու, այժմ որ տեսնում եմ կենդան ու ողջ՝ տալիս եմ քեզ ամբողջ թագաւորութիւնս։

Հէնց այս միջոցին իմաց տուին, որ մի ծեր իշխան բակում կանգնած է։ Ապաւէնի աչքն առնելուն պէս արտասուքն առուի պէս հոսեց, ուրախ ճիչ արձակելով վեր թռաւ նորեկի ձեռը համբուրեց.

— Սա էլ իմ հայրացուն է, ասեց Ապաւէնը, թագաւորին ու աներացուին ներկայացնելով։

Ուրախութիւնն աւելի թնդացաւ ու աշխարհովի դարձաւ։

Բազմականները հիացած Ապաւէնի ու նրա բաղդը ասողի վրայ՝ միաբերան լիասիրտ մաղթեցին.

— Տխուր օրդ անցկացաւ. այսուհետև կեանքով կշտանաս, մինչև մահ-գերեզման ծուխը ծիրանի մնայ, մեր աշխարհի ապաւէն։

Բազմական Հայոց Հոգեւոր Դպրոց Հիմնարկեալ (Երուսաղեմ)

ԲԱՌԱՐԱՆ

Ալարկոտ — ծոյլ, հեզգ.
Ալսպէրացէղ — եղբայրացեղ, ողջումեղբայր.
Ամոլի — ձուլած.
Ամխակոթ — կիսայրեալ փայտ օջաղի վրայ.
Ականել — աչք ածել.
Ականջարձուկ — աչքալոյս.
Անտառներ — անտառում բնակուող հրակայ էակներ.
Անուրթ — անհաց.
Աչք կլթել — սպասել.
Ատամի տալ — փորձել.
Ատամը մաղ մանել — ուժը պատել.
Ա՛ղա — տօ.
Արիւնպարտ — արեան պարտական, յանցագործ.

Բախրայ — եղջերու.
Բան գցել — գործադրել.
Բամբաչել — գլխին ամուր խփել.
Բարակ մանել — տկարանալ.
Բլդուզ — բերանն ուռած, լցրած թուշերով.
Բղղալ — վտանգի ժամանակ եղան բառաչելը.
Բրիչակ — աւերակ.

Գինոս — շատ գինի խմող.
Գիտական — գիտուն
Գլուխը փէշում դնել — հպատակուել տխուր բաղդին.

Դեղապէտ — հիւանդի սրտի ուղղիչ.
Դեղնակոթել — գոյնը թռցնել, գեղնել.
Դմբուղ — կռնուկ.

Երեսհաքք — դէմք.
Երեսում փուչ ունենալ — ազգու հայեացք ունենալ.

Զուռ — ահագին, մեծ.

Թաթաղոշ — ապտակ.
Թթուել — զայրանալ.
Թոնթորալ — փնթփնթալ.
Թուալ — ազդել.
Թռըմոշկած — թռչնած.

Թ՞նչ ասողի ադամորդի — ինչ բաղդի ադամորդի.

Լաստ — կաչէ կամ ամուր լաթէ ոլորած կարճ պարան.
Լաջ — հակառակ.
Լեկոս — տղմում շաղախուած.
Լիսնահոդ — կաւահող։
Լոշտակ — տափակ.

Խաղալի գլուխը բան գցել — օգտուել, յաջողեցնել.
Խաղահան անել — յոգահան անել.
Խելքամաղ լինել — խելքը թռցնել.
Խլ ու զէլ — խիճ.
Խծռել — լափել, ուտել.
Խլխալ — անհամար բազմութեամբ այս ու այն կողմը շարժուել մարդիկ, ձկներ.

Խոնչա — փայտէ երկար ձեի մատուցարան.
Խոտոր դցել — պարկեցընել.

Ծիր — ակօս.
Ծլթալ — կաթկաթել, հոսել.
Ծկրակել — թաքնուած տեղից անթարթ նայել.
Ծղրտալ — բղաւել.
Ծմակ — անտառուտ.
Ծմրանները կորել — լռել, պապանձուել.
Ծուլ անել — վերև դըցել, բարձր նետել.
Ծուլ-ծուլ լինել — ճախրել, բարձրանալ.
Ծուռն — թոռան որդի.
Ծրծոքել — մինչև յատակը դարտակելու աշխատել.

Պաճան — նեղ, ոլոր-մոլոր շաւիղ.

Կարմիր ուսկապը կապել — հարսանիքի նշանը՝ կարմիր թաշկինակ կամ աբրեշումէ վիլա (թաթուկ) կապել թագաւորացուի ուսից.
Կեռն ընկնել — լրանալու մօտենալ (ամիս, տարի).
Կղնուած — բարկացած.
Կմիսայ — գինու մեծ թաս.
Կիսրար — հաւասար կէս բաժնի տէր.
Կլափ — բերան, ծնօտ.
Կլափին տալ — բերանը բացուխուփ անել մերձ ի մահ ժամանակ.
Կնկաբշտուրիկ — սիրուն, գեղեցիկ.
Կշկուռ — հանդոյց, կապ։
Կոնդոլնալ — գայլի կամ շան լալը.

Կոնդանալ—ոտից խեղ-
ճանալ, անգամա-
լուծուել,
Կորած-մոլորած—ան-
յայտ.
Կուլ-բուկ—ծնօտի ոտո-
րին մասը.
Կուլ-կուլ լինել—ձլգ-
ուել դէպի մէկը.
Կռնաոլոր — ուժգին
կերպով. դարբինը
երկաթ տափակա-
ցնելու միջոցին զար-
կում է կռնաոլոր.

Հակառակի ձին նստ-
ել—սատանի ձին
նստել.
Հաղարել—տրորել.
Հանդերձի փէշը գլխով
գցել—որդեգրել.
Հիւսել—իրար ետնից
խփել, ծեծել.
Հլէ—դեռ.
Հոմ—կաւէ լայնաբե-
բան ունկնաւոր մեծ
աման.
Հորէս—ահաւասիկ.
Հուրհրատոցն ընկնել
—փայլփլել.
Հեռոց—հեռց, թանչոց.

Ձեռի խաչուն խմել
—ուժը փորձել, ծեծ
ուտել մէկից.

Ղրնած — լցուած,
զգացուած.
Ղժժոն — որընթաց
(գեոն).
Ղժրիկանալ — առուզ-
անալ.
Ղնջղինջ—կսկիծ, մըղ-
կիտ.
Ղոշ—խոյ
Ղարրուոց-ճղճղոց—խա-
ռնուն ձայներ.
Ղռընթալ—հաստ, խռ-
պոտ շրշուկ հանել.
ձին զարին ուտում
է ղռընթալէ.

Ղրթալ—պարանի ուժ-
գին քսուելը. ուժով
կտրուելը խանչալի
կամ դանակի մի բա-
նի մէջ ուժով մխելը.

Ճլել—վազել մէկի ետ-
նից.
Ճլամկոտալ — մարմինը
կոտրատել յօրանջե-
լով.
Ճլուլուել — հատաքելով
բարձուել մի բանի
վրայ. ծտեր, միջատ-
ներ.
Ճլսրած—թառամած.
Ճխանալ—հրճուել.
Ճումբ—հողի մեծ կլոր.
Ճպել—աչքը թարթել.
Ճռընեռել—ջարդել. ու-
ժասպառ անել.

Մաղը թեքուել—մնաս
դիպչել.
Մաթրաթ—կաւէ մեծ
քրեղան.
Մակառ—թաղաւորա-
ցուի ընկեր.
Մասունք դառնալ—
նիհարել.
Մեղմէրեց տալ—ա-
ռանց բոցի և ծուխ-
ի ինքն իրան այր-
ուել.
Մէրը—մայրը, խաղի
գլխաւոր անդամ.
Մթնաժոռ—իրիկնա-
դէմից ետոյ դէպի ի-
րիկուան մութը.
Միսն ատամի տակն
առնել—նամուս ըն-
կնել.
Մլլալ—թանձր ծուխ-
կամ որևէ բուրմուն-
քի ծանր բարձրա-
նալը.
Մխուել—թխանալ.
Մղակ — դռան ետև,
շէմք.
Մշմեղած—հանպիշելու
մօտ հառած.
Մորմոտ—տաք մոխիր.

Մուրազաշոր — վազաժամ մեռած.
Մրզոթել — բամել, հատացնել, (գինի, ջուր).
Մրճեղ — կայծերի վրայ նստած ածիւն.

Նախրաթոդ, նախրաթոդի պաս — Յիսնակի պաս.
Նիւթ առնել — ուտել, կազդուրուել.
Նղղել — թմբել թուլանալ.
Նշնուկի տալ — նեռալ, գնդակով մի բանի խփել.

Ճէխ-շէխ անել — օրօրուելով գնալ.
Շղանդ — շող ճրագի, կրակի.
Շողոմբոր — խոնարհ.

Ուշխարանալ — սթափուել.

Ոտների թելը հատնել — ոտների ոյժը ընդառաջել.
Ոռը լինել — կանգնել, հանգստանալ.
Ոտնատել — մանդալ, շրջել.
Որձակ - արագաղ.

Զալիկ-մալիկ կլոտար — նախշուն եղնիկ.
Զալաբալուրիկ — խայտախարիւ.
Զանթել — բռնել մատներով գցած բանը.

Պատ գցել — պարանը շուրջ բոլոր անցկացրնել.
Պարանել — շրջել, շուռ տալ.
Պարան գցել — վէր գցել, գետին տալ.
Պեւացած — ապշած.
Պէծ — կայծ.
Պնդոց — բերդ, ամրոց.

Պոպ — կայծ, պէծ.
Պուլիկ — կաւէ ամանառանց ունկի.
Պռընկնոտալ — պարատել.
Պռըշկած — խեղճացած, անմխիթար նստած.

Սալանի — սալ մեծ տափակ քար։ այդպիսի մի մի քարի վրայ կանգնեցրած են հին տների ահագին հատուածքամբ սիւները.
Սալաթած — թառամած.
Սալ. սալեր — խաղի մէջ որոշած թիւ, որը լրացնելուց ետոյ խաղը տարուած է որևէ կողմից։ Տղամարդիկ այդ թուին իրանց խաղերում սալ են ասում, իսկ աղջիկները լաչակ.
Սասում — անթիւ բազմութիւն շնչաւորների.
Սարայի — աշտարակ.
Սբկել — բշել, խրկել (ջուր).
Սբկսբկալ — ան քաշել, վախվախել.
Սմբակներից հետ — սմբակներից սկսած.
Սլաբ — վերան կատար.
Սրճար — սրածայր մեծ փուշ կամ բեռ.
Սրտմա լինել — զզուել.
Սրտումը մի բան տալ — սրտի մէջ մի բան գուշակել, զգալ.
Սրտի փուք — սրտի վիշտ.
Սրտի քիթը մոկրտաց — անչափ կսկիծաց.
Սփարթնել — գոյնը նետել, թալկանալ.

Վէգ — կոճի.
Վշտալի տալ — խայտալ.
Վռվռալ — բոցավառուած այրուել.
Վրխալէ — առատօրէն հոսելով.

Տալ—Սողոմաշէն հին տների (որև կոչւում է դարբաղէ տուն) ծածկը ունի չորս կողմ, որոնք սրանալով վերջանում են հերթմակով, իրաքանչիւր կողմը իւր գերաններով, տախտակներով կոչւում է տալ. ևս նշանակում է փեսի քոյր.

Տմբտմբացնել—շարժել

Տրտքէչ—տպող, գէշ.

Ցալրուն—ցայտումն.

Փլանչա—մեծ կտոր.

Փոթոթուել—վշտից նեղանալ այրուել.

Փորձանքից պատրաստ մարդ — վախկոտ մարդ.

Փումփխիկ—գանգրաձև ճիւղեր կամ սաղարթ.

Փռանց—հաղիւ.

Քարակրդոն—քարի մեծ կտոր.

Քերծ—ժայռ.

Քաընչել—հրել.

Քրտնքել—քրտնել.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная библиотека
7/XI 1922
Ա. ՄԱՅՈՒՄ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0420679

60310

ԳԻՆԸ Է 30 ԿՈՊ.

Ցանկացողները կարող են դիմել՝
Բաքու, Տպարան «Արար»։